Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

616.5
U-96

6.6.5
Ծ-96

ԲԺՇԿԱՊԵՏ

ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ

ՍԻՖԻԼԻՍ

Հանրամատչելի
պատկերազարդ

616.5
Մ-96

ԲԺՇԿԱՊԵՏ ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ

610
155-ՄՈ

ՍԻՖԻԼԻՍ

(Հանրամատչելի բովանդակութեամբ)

Գրած 1905 թիւ, մարտ 3-ին [illegible] Կ.

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱ[...]
С.С.Р.А Публичная Библио[...]
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ[...]

ԱԵՐՍՏԻՆ ՀԱՅԱՍՏ[...]
18 ՆՈՅԵՄ. 1918 Թ, ԹԻՖԼ[...]



Սիֆիլիսի մանրէներ
Շաուտիննի Սպիրոխետները.

1910
Էլէքտրաշարժ տպարան «ՆԱԳԵԺԴԱ»
ԹԻՖԼԻԶ.

09. JUL 2013
6279
30 JUL 2010

Գրքոյկս նուիրում եմ 17 տարեկան

Հայ պատանիներին և

Օրիորդներին

ՀԵՂԻՆԱԿ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սիֆիլիսը և նրա հասարակական նշանակութիւնը	I—VI
Պատմական տեսութիւն . . .	1
Սիֆիլիսի մանրէն և նրա յատկութիւնները .	7
Սիֆիլիսի շրջանները . . .	12
I. ՍԻՖԻԼԻՍԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ. ԿՈՇՏ-ՇԱՆԿՐ	14
Արտասեռական վարակում . . .	17
Խուլերի ուռուցք, և չը ցաւող բուբոն .	19
II. ՍԻՖԻԼԻՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ.	
Ընդհանուր վարակում . . .	21
Սիֆիլիսի արտայայտութիւնները կաշուի մէջ. մորթի բծաւոր սիֆիլիդ	22
Սիֆիլիսի պզուկները . . .	24
Խոշոր կամ մանր հանգոյցանման սիֆիլիդներ	25
Վեներայի թագ	25
Ջրալից սիֆիլիդ	26
Արիւնալից սիֆիլիդ	»
Թարախակալ սիֆիլիդ . . .	»
Սիֆիլիսի ճաղատութիւնը և մազթափութիւն . .	27
Ձեռքերի և ոտքերի ափերի մաշկւող սիֆիլիդ	27
Եղունկների սիֆիլիդ . . .	28
Վեներայի պարանջան . . .	29
Թացակալւող պզուկներ . . ,	29
Յուշաթաղանթի սիֆիլիդ . . .	30
Ներքին գործարանների սիֆիլիս . .	31
Շնչառութեան գործարանների սիֆիլիս .	32
Մարսողութեան գործարանների սիֆիլիս .	33
Միզասեռական գործարանների սիֆիլիս .	34
Ոսկորների սիֆիլիս	35

Մկանունքների սիֆիլիս . . . 36
Արիւն պատրաստող գործարանների սիֆիլիս 37
Երակների և սրտի սիֆիլիս . . . 38
Սրտի սիֆիլիս 39
III. ՍԻՖԻԼԻՍԻ ԵՐՐՈՐԴ ՈՒՌՈՒՑՔԱ-
ՅԻՆ-ԳՈՒՄՄԱՅԻՆ ՇՐՋԱՆ . 42
Մորթի գումմա . . . 45
Ցուշաթաղանթի գումմաներ . . . 47
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՒՄՄԱՆԵՐ
Մարսողութեան գործարանների գումմաներ. 47
Միզասեռական գործարանների գումմաներ 54
Ոսկորների գումմաներ . . . 55
Սրտի և երակների . . . 57
Գլխի և ուղեղի . . . 58
Իրիտ 62
Համառօտ ամփոփումն սիֆի-
լիսային երկ. և երր. շրջանների , 63
Սիֆիլիս հիւանդութեան ընթացքը . . 64
Սիֆիլիսի վարակիչ շրջանը . . 66
Ժառանգական սիֆիլիս . . . 67
Ժառանգ. սիֆիլիսից պահ-
պանելու միջոցները . . 67
Բժշկական վկայականների
նշանակութիւնը . . . 69
IV ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍ . . 73
Ժառանգ. սիֆիլիսի արտայայ-
տութիւնները . . . 77
Սիֆիլիսի որոշման եղանակները . 83
Սիֆիլիսի հետեւանքները . . 88
V Բ Ո Ւ Ժ Ո Ւ Մ Ն . . 90
Ընդհանուր տեսութիւն .
Սիֆիլիսի սեռական վարակու-
մից պաշտպան. միջոցներ . 94
Ոչ-արմատական միջոցներ . . 93

Հասարակաց տները . . . 100
Թափառող կանայք . . . 102
Արտասեռական վարակումից պաշտ-
պանելու միջոցներ. . . . 103
Շփումն անձնաւորութիւննե-
րի հետ 103
Շփումն առարկաների հետ . . . 104
ԴԵՂԵՐ ՍԻՖԻԼԻՍԻ ԴԷՄ . . . 111
Ս ն դ ի կ 115
Կոշտ-շանկրի բժշկութիւնը . . . 115
Ուռած խուլերի (բուբոնների)
բժշկութիւնը . . . 119
Սիֆիլիսի երկրորդ, պզուկների
շրջանի բժշկութիւնը . . . 120
ՔՍՈՒՄՆԵՐ (օծել) . . . 121
Սնդիկային հեղուկի ներարկումը
և սրսկումը մորթի տակ . . . 129
Սնդիկը ներքուստ ընդունելու . . . 133
Սնդիկը վաննայի միջոցով . . . 133
Սնդիկը ծուխ տալով գործա-
ծելու եղանակը . . . 135
Սնդիկը արտաքուստ, վրան կրելով . . 136
Ամփոփումն բժշկութեան ձևերի . . 137
Սնդիկից թունաւորուելու նշանները . 240
Սնդիկի թունաւորման առաջն առ-
նելու միջոցներ . . . 146
ԻՕԴ 148
Իօդի ազդեցութիւնը . . . 149
Իօդիզմ 151

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Իօդի և սնդիկի ներգործութիւնը
սիֆիլիսի վրայ 153

Սիֆիլիսի բժշկութեան ընթացքը . . 155
Սիֆիլիսի արտաքին արտայայտու-
թիւնների բժշկութիւնը . . . 157
Բնական ոյժի պահպանման ան-
հրաժեշտութիւնը . . .
Դեկոկտ 15
Ծծմբային հանքային ջրերը . . . 160
Յղի կանանց բուժումը սիֆիլիսից . 126
Ժառանգական սիֆիլիսի բժշկութիւնը . 165
Առողջապահական ընդհանուր . 166
ցուցմունքներ . .
Ա. պահանջ—Ուժեղացնել կազմուածքը . 167
Բ. պահանջ—Զը թուլացնել ոչ մի . 169
գործարանը . .
Գ. պահանջ—պահել նրակաները . 172
վնասակար ազդեցութիւններից
ԵԶՐԱՓԱԿՈՒԹԻՒՆ
Դեղատոմսային կրճատումնե- . . 177
րի բացատրութիւններ. .
VI. ՍԻՖԻԼԻՍԻ ԴԷՄ ԳՈՐԾԱԾԻՈՂ . 180
մի քանի դեղատոմսեր .
ՆՈՐ ԴԵՂ ՍԻՖԻԼԻՍԻ ԴԷՄ № 606. 181

ՆԿԱՐՆԵՐ

(Առանձին թերթերով)

Պատկեր I Ոլորակաձև սիֆիլիսի մանրէներ, սպիրօխէտներ.
II Կոշտ, պինդ շանկր.
III Սիֆիլիսի բծե, և պզուկներ.
IV Սիֆիլիսից մազերի թափելը.
V Սիֆիլիսից մորթի սպիտակ բծեր.
VI Բացուած սիֆիլիսի ուռուցք.
VII Մանր պզուկանման վէրքացած գումմաններ.
VIII Քթի գումմա.
IX Գլխի գումմա, գանկի քանդուածքով.
X և XI Ժառանգական սիֆիլիս.

Պ Ա Տ Կ Ե Ր I



ՍԻՖԻԼԻՍԻ ՈԼՈՐԱԿԱՁԵՒ ՄԱՆՐԷՆԵՐ, ՍՊԻՐՕԽԷՏՆԵՐ

Լատիներէն՝ Spirochaeta pallida Schaudinni—(*Սպիրոխէտա պալլիդա Շաուդիննի*)։

—

Այստեղ սպիտակ կլոր մակերևոյթի վրայ տեղ-տեղ պարզ նշմարւում են սև գծած սիֆիլիսի մանրէները, որոնք ունեն պտուտակի, խցանահանիչի տեսք։ Այս մանրէները, սպիրոխէտները, վերցրած են մարդու սիֆիլիսի արտադրութիւնից։ Նկարը կլոր է, որովհետև խոշորացոյցի ապակին կլոր ձև ունի։

ՏՊ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ

ՍԻՖԻԼԻՍ

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

ՍԻՖԻԼԻՍԸ ԵՒ ՆՐԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ։

Վեներական այն հիւանդութիւնները, որոնք առաջ են գալիս մեծ մասամբ սեռական յարաբերութիւնից—կոչւում են Սիֆիլիս, Կակուղ-շանկր և Սուսունակ։ Այս երրորդութիւնից իր յատկութիւնով և հետևանքներով՝ ամենածանրը սիֆիլիսն է։ Դժբախտութիւնը այստեղ բազմապատկւում է նրանով, որ այդ հիւանդութիւնից տուժում են ոչ միայն ինքը ստացողը, այլ և շատ յաճախ նրա մերձաւորներն ու սերունդը։ Վատասերման գլխաւոր գործօններից մէկն էլ սիֆիլիսն է։ Այդ է պատճառը, որ բժիշկ գիտականները միշտ աշխատել են առանձնապէս իրանց ուշադրութիւնը կենտրոնացնել նրա ուսումնասիրութեան վերայ, աշխատել են միջոցներ գտնել՝ նրա դէմ մաքառելու համար։

Դժբախտաբար, դարերի ընթացքում, գիտութիւնը

կրիայի քայլերով էր միայն առաջանում այդ ասպարէզում։ Սիֆիլիսի սկզբնապատճառը մնում էր անյայտ, իսկ բժշկութիւնը կատարւում էր դարաւոր փորձերի վրայ հիմնւած միայն։ Ահա այդ էր իրողութիւնը։ Միայն վերջին տարիների ընթացքում, Պարիզ, Պաստեօրի հիմնարկութեան և Գերմանիայի գիտնականների տաղանդաւոր աշխատանքներին ենք պարտական, որ սիֆիլիսի անյայտութեան քօղը որոշ չափով վերացաւ վրայից։

Այդ հարցի մասին մեր ժողովրդական բժշկական գրականութիւնը, շնորհիւ բժ. Արծրունու, բժ. Բուդուղեանի և ուրիշների, ունի լաւ գրուածքներ։ Մեր հասարակութեան համար, որ շատ էլ կարդալ չի սիրում, դրանք էլ բաւական կը լինէին. սակայն աչքի առաջ ունենալով վերջին տարիների նշանաւոր գիւտերը, որոնք էական նորութիւններ են յայտնում սիֆիլիսի մասին, ես վճռեցի հրատարակել այս նոր գրքոյկը։

Կարևոր է, որ հայ հասարակութեան բոլոր խաւերը լաւ ծանօթ լինեն սիֆիլիսի հետ, քանի որ նա ունի հասարակական նշանակութիւն։ Շնորհիւ այժմեան տնտեսական ծանր պայմանների, հայ տարրը ստիպւած է օտարութեան մէջ ապրել, ղարիբութիւն քաշել։ Զինւորականութիւնը, ուսանողութիւնը, կեանքի պայմանների բարդութիւնը և այլն, ստիպում են երիտասարդներին ամուրի մնալ, արգիլում են սեռական արբունքին հասած երիտասարդութեանը՝ ժամանակին ամուսնանալ։ Սակայն բնութիւնը իր պահանջներն է դնում. եթէ երիտասարդը զուրկ է կամքից, եթէ առաջուց նա չի ծանօթացել սեռական կեանքի փչերի (վատ ցաւերի) հետ, նա հեշտութեամբ է ընկնում փորձանքի մէջ։

Սիֆիլիսին ենթակայ են, ամեն տեղերում, մարդկութեան երկու սեռերը և բոլոր հասակներն էլ։ Սրա համար սիֆիլիսի մասին պարզ գաղափար պէտք է ունենայ թէ երիտասարդը և թէ հասակաւորը, թէ հարուստը և թէ աղքատը, թէ քաղաքացին, թէ գիւղացին։

Սիֆիլիսը շատ տարածւած հիւանդութիւն է, բայց չի երևում, աչքի չի ընկնում, որովհետև ամեն վարակւած աշխատում է ծածկել նրան։

Գուցէ այնքան վնասակար չը լինէր նա և հասարակական նշանակութիւնը այնքան կարևոր, եթէ վարակումը սահմանափակւէր միայն սեռական յարաբերութիւնով. բայց դժբաղդաբար դա տարածման միակ ճանապարհը չէ։ Սիֆիլիսը, որոշ շրջանում, որ բաւական երկար է տևում, շատ վարակիչ է. և եթէ վարակւածը տգէտ է ու միջոցներ ձեռք չի առնում չէզօքացնելու շրջապատողների համար իր հիւանդութիւնը—այն ժամանակ սիֆիլիսը հեշտութեամբ է անցնում ուրիշների և առաջացնում է այսպէս անւանւած՝ «Արտասեռական վարակումն»։

Զարմանալի կերպով տարբերւում են այդ մասին Ռուսաստանի և Եւրոպայի վիճակագրութիւնները միմեանից։ Մինչդեռ Եւրոպայում սիֆիլիսը տարածւած է քաղաքներում աւելի շատ, քան թէ գիւղերում,—մեզ մօտ, Ռուսաստան, ընդհակառակն։ Չը կարծէք թէ մեզանում քաղաքները բարոյապէս աւելի բարձր են, քան Եւրոպայում։ Ոչ. այս անբնական երևոյթի պատճառն այն է, որ Ռուսաստանի գիւղե-

րում, շնորհիւ գիւղացիների-իրենց տգիտութեան, շատ աւելի տարածուած է արտասեռական վարակումը։

Եթէ գիւղացիներից մէկը պատահմամբ գտնուելով քաղաքում իբրև գինուոր, արհեստաւոր, բանուոր, իբր մթերքներ վաճառող, մասնաւոր գործով և այլն, ստանում է սիֆիլիս, նա գիւղ գալով՝ անգիտակցաբար վարակում է տասնեակ շրջապատողների, և այդպէս, վարակւում է հետզհետէ համարեա ամբողջ համայնքը։

Մեր հայ գիւղացիութիւնը ռուսներից եթէ ոչ պակաս, յամենայն դէպս աւելի լուսաւորուած և քաղաքակրթուած չէ. մեզ մօտ էլ կան շատ գիւղեր՝ վարակուած փոքրից մինչև մեծը։

Պիրոգովեան Բժշկական Համագումարը, որին մասնակցում էին մեծատարած Ռուսաստանի զանազան ծայրերից հաւաքուած հարիւրաւոր բժիշկներ—պարզեց, որ սիֆիլիսի արագ տարածման գլխաւոր պատճառը տգիտութիւնն է, իսկ նրա դէմ մաքառելու միակ արմատական միջոցը—ժողովրդական լայն լուսաւորութիւնը։ Որպէս զի մեր ժողովրդական խաւերը գոնէ ազատ մնան այդ ցաւից և լինին գիտակից, անհրաժեշտ է որ թէ գիւղում և թէ քաղաքում պարզ և լիակատար գաղափար ունենան սիֆիլիսի մասին։ Հարկ չը կայ քաշուելու ո՛չ սեռից և ոչ տարիքից։ Որքան երիտասարդը կանուխ է գաղափար կազմում այդ հիւանդութեան մասին, այնքան աւելի վստահ կարելի է լինել, որ նա ինքն իրեն այդ պատուհասից հեռու կը պահէ։ Պրոֆեսոր Ֆուրնիէին, ֆրանսիացի յայտնի վեներագէտը, մատնացոյց է անում, որ սիֆիլիսով 100 հիւանդա-

ցողից 20-ը չքաւոր դեռահաս օրիորդներ են՝ քսան տարին դեռ չը բոլորած։ Նրա վիճակագրական տեղեկութիւնները պարզում են, որ կանայք ամենից շատ վարակւում են 18-ից մինչև 21 տարեկան հասակում—30%, իսկ տղամարդիկ՝ 21-ից մինչև 26 տարեկան — 50%. համարեա կէսը բոլոր վարակուածների։

Մեր կեանքի ներկայ պայմանները մօտեցնում են մեզ ֆրանսիականին։ Այդ իսկ պատճառով նպատակայարմար է, որ տղայ թէ աղջիկ, հէնց 17 տարեկան հասակից սկսած, վաղօրօք կարդալով՝ ծանօթանան սիֆիլիսի հետ։

Ամեն մի ծնող բարոյական պարտականութիւն է համարում հետևել իր երեխաների զարգացմանը, որպէս զի կանոնաւոր գնայ նրանց աճումը՝ մարսողական գործարանների զարգացման հետ. նա կաթից անցնում է ուրիշ տեսակ սնունդի. հրահանգներ է տալիս թէ ինչն է վնասակար և ինչը օգտակար, ուղեղի զարգացման համապատասխան նա մտաւոր աշխատանք է տալիս նրան...

Եւ այսպէս, գիտակից ծնողը հետևում է իր զաւակի կազմուածքի բոլոր գործողութիւններին, ցոյց տալով օր առաջ վատն ու լաւը։ Միայն սեռական կեանքն է մոռացւում։ Մի անհիմն աւանդութիւնով և սովորութեամբ՝ ծնողների բացարձակ մեծամասնութիւնը այդ մասին լռութիւն է պահպանում։ Բայց չէ՞ որ մեզանում, շնորհիւ տաք կլիմայի, սեռական կեանքը աւելի վաղ է զարթնում (14—16 տարեկան հասակում)։ Առհասարակ ծնողները այդ հասակում իրանց զաւակներին համարում են երեխայ, և

աւելորդ ու նոյն իսկ վնասակար են գտնում այդ հարցով զբաղեցնելու նրանց։

Իրականութիւնը սակայն մեզ ցոյց է տալիս, որ ամենից հեշտութեամբ հէնց այդ «երեխաներն» են ենթարկւում սեռական հիւանդութիւնների—ձեռնաշարժութեան և վեներական վարակման։

Ամեն մի ծնողի, դաստիարակչի, ուսուցչի և խնամակալի բարոյական պարտականութիւնը պիտի լինի ուրեմն, ուշադրութիւն դարձնել երիտասարդների սեռական կեանքի առողջ զարգացման վրայ, առաջուց ծանօթացնելով նրանց այդ մասի բոլոր չարիքների հետ, եթէ չեն ցանկանում, որ վեներական հիւանդութիւնները գան, կանխեն իրենց և փչացնեն մատաղ սերունդը։

Համառօտ ակնարկ ձգեցի ես սիֆիլիսի և նրա հասարակական նշանակութեան վրայ, առանձնապէս շեշտելով նրա հետ լաւ ծանօթ լինելու կարևորութիւնը՝ մանաւանդ դեռահասակ երիտասարդների համար։ Եւ դա է պատճառը, որ ես այս գրքոյկը նւիրում եմ 17 տարեկան հայ պատանիներին և օրիորդներին, որպէս զի կարդան նրանք իրանց նւիրած գրքոյկը, հասկանան չարիքը և իրենք-իրենց հեռու պահեն փորձանքից։

1910, Մայիս 1
Բեռլին (Գերմանիա).

ՀԵՂԻՆԱԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Սիֆիլիս բառը յունական է։

Առաջին անգամ այդ անունը պատահումենք մենք 1521 թուականին, բժիշկ Ֆրօքաստրայի մի աշխատութեան մէջ։ Մեզ մօտ այդ հիւանդութիւնը կրում է զանազան անուններ՝ Աթէշակ, Վատ ցաւ, Գաղղիական, Ֆրանսիական ախտ։ Վերջին անունը պատմական է։

Այդ հիւանդութիւնը յայտնւեց Եւրոպայում Ամերիկայի գիւտից (1492 թւականից) յետոյ. Նա համաճարակի նման տարածւեց Ֆրանսիայում, Լուդովիկոս կայսրների ժամանակ։ Հասարակ խրճթից սկսած մինչև կայսերական պալատը՝ սիֆիլիսի վարակումը տարածել էր իր թևերը։ Այտեղից նա անցաւ ուրիշ երկիրներ։ Այդ անկոչ հիւրին, իբրև Ֆրանսիայից եկածի, անւանեցին Ֆրանսիական ախտ, Ֆրանսիական հիւանդութիւն։ Ենթադրում են, որ իր հերթին, Եւրոպա, Սպանիա և մասնաւորապէս Ֆրանսիա՝ սիֆիլիսը բերել են նաւաստիները Ամերիկայից։ Բայց հազիւ թէ դա ճիշտ լինի։ Եթէ մենք քննելու լինինք բժշկական հին ձեռագրերը, նոյն իսկ Սուրբ գիրքը՝ Հին ուխտի, կը տեսնենք որ այնտեղ մինչև անգամ նկարա-

գրուած կան բոլոր նշաններովը սիֆիլիսին նմանող հիւանդութիւններ, միայն զանազան անունների տակ. օրինակ բորոտութիւն, քոս, ոսկրացաւ, ժահրոտ վէրքեր և այլն։

Սրանց դէմ մաքառելը Մովսէսի օրէնքով՝ պարզ էր. առանձնացնում էին վատ ցաւ ունեցողներին մի անապատում. այդ սովորութիւնը, որոշ չափով ի հարկէ, պահպանում էր ժողովրդին վարակումից։ Եթէ աչքի առաջ ունենանք հին նահապետական կեանքը, երբ ամեն ընտանիք իր սեփական կեանքն էր ապրում, կը հասկանանք, թէ ինչու հիւանդութիւնը սահմանափակ շրջանումն էր մնում։ Ուրեմն պէտք է ընդունել, որ սիֆիլիս հիւանդութիւնը շատ հնուց գոյութիւն ունի, միայն ուրիշ անուան տակ, և շնորհիւ արտաքին բարեյաջող պայմանների, նա ժողովրդի մէջ լայն չափերով չէր տարածուած։ Երբ Լուդովիկոս կայսրների ժամանակ, Ֆրանսիայում բարքերը ապականուեցին, սիֆիլիսը տարածուելով՝ յայտնի դարձաւ և իր վրայ հրաւիրեց բժիշկների յատուկ ուշադրութիւնը։ Սիֆիլիսի յայտնուելու և տարածուելու հետ զուգընթացաբար՝ հանդէս եկաւ նաև նրա բժշկութեան դեղը—Սնդիկը. որը մինչև այսօր էլ գոյութիւն ունի։

Ցաւալին այն է, որ բժիշկները առաջներում շատ երկար ժամանակ չէին կարողանում որոշել և զանազանել միմեանցից սիֆիլիսը (Կոշտ շանկր) Կակուղ շանկրը և Սուսունակը (միզանցքի վեներական բորբոքումը, գերմաներէն՝ Տրիպէր) միմեանցից, ինչպէս որ այժմ մեր տնային հէքիմները։ Բոլոր այդ տեսակ հիւանդներին բժշկում էին նրանք սնդիկով, այն էլ,

գործածելով ներքուստ կամ արտաքուստ՝ մեծ քանակութեամբ, մինչև համարեա թունաւորելը։ Ողբալի էր խեղճ հիւանդների վիճակը. բոլորը մէկ հաշւի տակ առնուած և շնորհիւ սնդիկի չափազանց գործածութեան՝ թափուած ատամներով, փթած ոսկորներով և սնդիկի թունաւորման ուրիշ ծանր ու բազմաթիւ հետևանքներով...

Այդ սոսկալի դրութիւնը շարունակուեց մինչև 1831—37 թւականները, երբ յայտնի ֆրանսիական գիտնական պրոֆեսոր Րիկորը, մարդկութեան այդ բարերարը, 6 տարի շարունակ գիտական կռիւ մղեց և վերջ դրեց խառնաշփոթութեանը։ Նա Գերմանիայի և Անգլիայի բժիշկների կարծիքներին հակառակ կանգնեց։ Վեներական հիւանդութիւնների իր նշանաւոր քննադատութեամբը հաստատեց ամենակտրուկ կերպով, որ սուսունակը, կակուղ շանկրը և սիֆիլիսը իր կոշտ շանկրով՝ միմեանցից տարբեր հիւանդութիւններ են, այդ պատճառով էլ պահանջում են տարբեր բժշկութիւն։ Քիչ տատանումից յետոյ, ամբողջ աշխարհի գիտնականներն ու բժիշկները ընդունեցին այդ՝ իբր իրողութիւն։ Րիկորի աշակերտները, մանաւանդ յայտնի պրոֆեսոր Ֆուրնիէն, աւելի ևս ընդարձակեցին նրա գաղափարը և տարածեցին։ Այդ ժամանակից սկսեց սիֆիլիսի, իբրև առանձին մի հիւանդութեան, ուսումնասիրութիւնը։

Մինչև մեր ներկայ քսաներրորդ դարի սկիզբը, սիֆիլիսը իր բոլոր շրջաններով, արտաքին թէ ներքին արտայայտութիւններով՝ մանրամասն լուսաբանուեց. մշակուեցին նաև նրա բժշկութեան, սնդիկի գործածութեան լաւագոյն ձևերը։ Միայն մէկ բան չէր յա-

ջողում իմանալ, այն է՝ սիֆիլիսի սկզբնապատճառը։ Ենթադրւում էր ամենայն իրաւամբ, թէ դա մի վարակիչ թոյն է, որը մէկից անցնում է միւսին, բայց թէ որտեղից և ինչից է գոյանում այդ թոյնը—մնում էր անյայտ։

Այս էական հարցի բարեյաջող լուծման համար օգնութեան հասաւ Բակտերիօլօգեան՝ բակտէրիաների, այսինքն մանրէների գիտութիւնը։

Այդ ճիւղի զարգացումը սկսւեց 1850-ական թւականներից։ Մէկ կողմից աշխարհահռչակ ֆրանսիացի Պաստեօրի գիւտերը, տաղանդաւոր գերմանական պրօֆեսօր Ռ. Կոխի աշխատանքները միկրօբների (մանրէների) կեանքի մասին, միւս կողմից խոշորացոյցի հետզհետէ կատարելագործւելը—պարզեցին որ շատ վարակիչ հիւանդութիւնների սկզբնապատճառ միկրօբներ են, այսպէս անւանւած՝ „մանրէները", որոնք այնքան մանր են, որ տեսանելի դարձնելու համար, կարևոր է խոշորացոյցի միջոցով մեծացնել մինչև 700—900—1500 անգամ։ Այսպիսով, մէկը միւսի յետևից գտնւեցին թոքախտի, ժանտախտի, խօլերայի, տիֆի (փորհարինքի), դիֆտէրիտի և այլ շատ վարակիչ հիւանդութիւնների մանրէները։

Աւստրիական գիտնական Նէյսէրը 1879 թւականին գտաւ Սուսունակի (Տրիպէրի) մանրէները, Գոնոկոկները։ Դիւկրէ և Ուննա գտան 1892 թւականին կակուղ շանկը գոյացնող մանրէները։ Բայց ոչ մի կերպ չէր յաջողւում գտնել սիֆիլիսի մանրէն, թէև ոչ ոք չէր կասկածում, որ նա գոյութիւն ունի։

Միայն այս հանգամանքը չէր, որ յուսահատեցնում էր գիտնականներին...

Հիւանդութիւնների թոյների յատկութիւնը, նրանց զարգացման պայմանները, նրանց դէմ գործածւող դեղերի ազդեցութիւնը մեծ մասամբ նախապէս ուսումնասիրւում են շների, մկների, կատուների և այլ անասունների վերայ և յետոյ միայն փորձերի հետևանքները զգուշութեամբ փոխադրւում են մարդու վերայ։ Սիֆիլիսի վերաբերմամբ մարդս մի մենաշնորհ, առանձնայատկութիւն ունէր։ Սիֆիլիսի թոյնը, վարակումը, անասուններին չէր անցնում։ Այդպիսի ծանր դրութեան մէջ էր գիտութիւնը սիֆիլիսի վերաբերմամբ... Բայց ինչպէս միշտ, նա չընկճւեց որևէ անյաջողութեան առաջ. նա շարունակեց իր գործը։ Եւ ահա ներկայ քսաներորդ դարու սկիզբը պսակւեց գիտութեան յաղթանակով։ Այս վերջին մի քանի տարիների ընթացքում բժշկականութիւնը հարստացաւ սիֆիլիսի վերաբերմամբ մի շարք գիւտերով։

Մեր հայրենակից Մեչնիկովին և Ֆրանսիացի Ռու'ին 1903 թւականին յաջողւեց սիֆիլիսով վարակել մարդանման կապիկների։

Գերմանական գիտնական Շաուդին, մարտի 3-ին 1905 թւականի, գտաւ սիֆիլիսի մանրէն, որը և անւանեց Սպիրօխէտա—պալիդա։

Գերմանական գիտնական Վասսերման 1906 թւականին գտաւ սիֆիլիսով հիւանդի արեան մէջ՝ որոշ առանձնայատկութիւններ։ Նրա առաջարկած եղանակով, արիւնը քննելով, այժմ մենք հնարաւորութիւն ունինք պարզելու, թէ այս կամ այն մարդու կազմւածքում դեռ գոյութիւն ունի՞ արդեօք սիֆիլիսի թոյնը, թէ՞ ոչ, նոյն իսկ երկար տարիներ անցնելուց յետոյ։

Այսպէս ուրեմն, գիտութիւնը, որ յուսահատութեան էր հասել սիֆիլիսի վերաբերմամբ, վերջին մի քանի տարիների ընթացքում յանկարծ հարստացաւ այդ երևելի և էական գիւտերով:

Այժմ հերթը գալիս է այդ հիւանդութեան աւելի կատարեալ, հիմնովին բժշկութեան գիւտին միայն, որ կարծում ենք, մօտիկ ապագայի հարց է, քանի որ այդ ուղղութեամբ են աշխատում ներկայումս շատ գիտնականներ:

ՍԻՖԻԼԻՍԻ ՄԱՆՐԷՆ ԵՒ ՆՐԱ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սիֆիլիսի մանրէն արտաքուստ շատ նման է պտուտակի. ունի իր բնորոշ յատկութիւնները. միւս համանման ոլորաձև մանրէների հետ համեմատած՝ նա չափազանց բարակ է և դժգոյն. այն աստիճան, որ խոշորացոյցի սովորական պայմանները բաւական չեն՝ նրան տեսանելի դարձելու համար. հարկաւոր է առանձնապէս լուսաւորել և մեծացնել:

Երևի այդ հանգամանքներն էին պատճառը, որ երկար ժամանակ չէր յաջողւում գտնել, տեսնել նրան:

Շարժումները մանրէի շուրջը՝ կատարւում են շատ արագ, իսկ ինքը կպչելով մի որև է տեղ, պտոյտներ է անում տեղնուտեղը և շատ դանդաղ է առաջ գնում: Ջերմութեան նա չի դիմանում. 45^0 ըստ Ցելսիի տաքութիւնը սպանում է նրան $^1/_2$ ժամւայ ընթացքում: Ախտահանող միջոցները նոյնը անում են վայրկենապէս, մանաւանդ սնդիկի աղը—սուլէյման։ Խոնաւութեան մէջ սիֆիլիսի մանրէն կարող է ապրել շաբաթներով, իսկ եթէ չորանայ—կը մեռնի:

Սիֆիլիսի մանրէի գտնելու պատիւը պատկանում է գերմանական գիտնական-կենդանաբան Շաու-

տինին, որ օգտւելով Բերլինի երիտասարդ պրոֆեսոր Հոֆֆմանի աջակցութիւնից, զբաղւեց այդ հարցով, գտաւ, և անունը դրեց Ս պ ի ր օ խ է տ ա - պ ա լ ի դ ա։ Յետոյ երկուսը միասին, բժիշկն ու կենդանաբանը, ձեռք ձեռքի տւած ուսումնասիրեցին և նկարագրեցին սիֆիլիսի մանրէն։ Այդ երևելի գիւտից (Մարտի 3, 1905 թ.) յետոյ պրօֆ. Շաուդին երկար չապրեց. մէկ տարի չ՚անցած՝ վախճանւեց։ Այժմ սիֆիլիսի մանրէն, ՚ի պատիւ նրա, կրում է Սպերօխէտա-պալիդա Շաուդինի անունը։

Նա ներկայումս ընդունւած է ամենուրեք՝ իբրև սիֆիլիս առաջացնող մանրէ. նրան գտել են ոչ թէ միայն սիֆիլիսով վարակւած մարդու մէջ, հիւանդութեան զանազան շրջաններում, այլ և մարդանման կապիկի մէջ, երբ նրան (պրօֆ. Մեչնիկով և Ռու) վարակել են սիֆիլիսով։

Մտնելով մարդու կազմւածքի մէջ՝ ինչ է կատարում այդ դժգոյն, ոլորաձև մանրէն։ Ըստ երևոյթին առանձին ոչինչ։ Նա այնտեղ հանդիսանում է շատ հանգիստ բնաւորութեան տէր մի էակ։

Նման չէ նա սուսունակի մանրէին — Գօնօկօկին, որը տակնուվրայ է անում միզանցքը, խիստ բորբոքում է նրան մի քանի օրւայ ընթացքում, ահագին քանակութեամբ ժահր է արտադրել տալիս, պաճառում է յայտնի կաթոց ու ցաւեր։ Նման չէ նա Դիւկրէ—Ուննայի կակուղ շանկրի մանրէին, որ նոյնպէս մի քանի օրւայ ընթացքում խոր կերպով ուտում է մորթը (կաշին) ժահրովլի վէրք է գոյացնում նրա վրայ, որ և յաճախ բորբոքում է նաև աճուկների *) խուլե-

*) Пахъ, փորատակում՝ ոտների ծալւածքի տեղը։

րը և ցաւող բուբոններ (ուռոյցքներ) առաջացնում։

Սիֆիլիսի մանրէն հաստատւելով մարդու կազմւածքի մի որևէ մասում՝ սկսում է հէնց տեղն ու տեղը հանգիստ ապրել, զարգանալ, կերակրւել, թոյն արտադրել։ Սուր աւերւածքներ նա չի կատարում. չի ուտում, չի քանդում, ցաւեր չի պատճառում, այլ միայն իր ներկայութեամբն ու թոյնովը՝ գրգռումի է ենթարկում շրջակայքը։

Բայց ինչպէս է ընդունում մարդու կազմւածքը այդ անկոչ, այն էլ թունաւոր հիւրին։

Նրա դէմ նա առաջ է բերում իր ինքնապաշտպանութեան բնական ոյժերը, որոնք են.—նախ և առաջ արեան մէջ գոյացող սիֆիլիսի հակաթոյնը և երկրորդ՝ մեր արեան սպիտակ գնդակները *)։

Պրօֆես. Մեչնիկովը կենդանիների վրայ արած փորձերով ցոյց տւեց, որ երբ որ և է մանրէ անցնում է մարդու կազմւածքը, նա իսկոյն շրջապատւում է արեան սպիտակ գնդակներով—մեր ինքնապաշտպանութեան այդ հաւատարիմ զինւորներով։ Նրանք աշխատում են կլանել այդ մանրէին։ Նայած թէ ինչպէս է կռիւը վերջանում՝ յաղթութիւնը լինում է կամ արեան սպիտակ գնդակների կողմը—այն ժամանակ այդ մանրէն նրանց կողմից մարսւում է և կորչում և մարդը մնում է առողջ—և կամ մանրէն է յաղթում, աճում է, բազմանում և կազմւածքը վարակում է իր թոյնով։

Դժբաղդաբար սիֆիլիսի ոլորաձև մանրէն, չը

*) Մեր արիւնը բաղկացած է կարմիր, սպիտակ գնդակներից և արեան հիւթից։

նայած իր դժգունութեանը, շատ դիմացկուն է։ Եթէ մանր երակներից արշաւող արիւնի սպիտակ գնդակները յաղթւում և անզօր են,—սեղմում են նրանք և ճնշում են մանրիկ երակները և նոյն իսկ խանգարում են նրանց միջի արեան շրջանառութիւնը։

Բայց չէ՞ որ մեր կազմւածքի ամեն մի մասը կերակուր է ստանում արեան միջոցով, նրանով է ապրում։ Ուրեմն խանգարման է ենթարկւում այդ մասի անհրաժեշտ սնունդը։

Այդպէս է կատարւում, երբ մարմնի մի որ և է մասում ընկնում է սիֆիլիսի մանրէն։

Այդ ամբողջ գործողութիւնը, որ ուրիշ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի թեթև բորբոքում—մարդուս կազմւածքի ինքնապաշտպանութեան հետևանքն է ուրեմն։ Ժամանակի ընթացքում, արեան սպիտակ գնդակները, նայած հանգամանքներին, կամ մնում են տեղնուտեղը և կոշտանում, աւելորդ միս դառնում և կամ լուծւում անհետանում են, և իրենց շուրջը, մեր մարմնի հիւսւածքը թողնում վնասւած։

Եւ այդպէս, ամեն տեղ սիֆիլիսի մանրէն առաջացնում է գրգռումն ու մեղմ բորբոքում՝ իր բոլոր հետևանքներով։

Մարդս շատ բաղդաւոր կը լինէր, եթէ սիֆլիսի մանրէն մի տեղ հաստատւելով, բաւականանար այդ նեղ շրջանովը, ինչպէս կակուղ շանկրի մանրէն է։ Բայց այդպէս չէ։ Որոշ ժամանակ բնակւելուց յետոյ որ և է հիւրընկալւած տեղ, նա բազմանում է և արեան հոսանքի միջոցով այդտեղից տարածւում է ամբողջ կազմւածքի մէջ։

Սիֆիլիսի մանրէներ (սպիրօխէտներ) գտել են

սիֆիլիսի վէրքերում (կոշտ, պինդ շանկրում), սիֆիլիսի արտաքին և ներքին արտայայտութիւնների՝ դուրս ուածների, արեան, մարդու ներքին գործարանների, ուղեղի մէջ, և այլն։

Յայտնի է թէ որքան դիւրագրգիռ, քնքոյշ և կարևոր են մեր ներքին գործարաններից շատերը… Երևակայեցէք հիմա այդ դժգոյն մանրէներին այնտեղ և դուք կը հասկանաք այն ժամանակ մեր կազմւածքի ողբերգական դրութիւնը։

Շնորհիւ սիֆիլիսի մանրէների յայտնութեանը, վերացաւ այն մթութիւնը, որով պատած էր լինում բժիշկը, երբ նա պէտք վճռէր՝ թէ իրեն դիմողի վէրքը ո՞ր տեսակից է։ Որոշելու համար, նա առաջ պիտի յենւէր իր իր աչքերի սրութեանը և փորձառութեան վրայ. յատկութիւններ, որոնք մարդուն կարող են դաւաճանել և սխալմունքների մէջ ձգել։

Այժմ ուրիշ բան է։ Այժմ կատարեալ հնարաւորութիւն կայ որոշելու պարզ և հաստատ կերպով՝ թէ դա կոշտ շա՞նկր է, թէ՞ ոչ։ Առանց տատանւելու, առանց առաջւայ նման սպասելու, այժմ ունենք միջոցներ՝ անմիջապէս դիմելու յատուկ (specifique) բժշկութեան, եթէ գտնւել են սիֆիլիսի մանրէներ։

ՍԻՖԻԼԻՍԻ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Մարդուս կազմուածքի մէջ սիֆիլիսի մանրէների կեանքն ու զարգացումը պարզելուց յետոյ, մեզ համար դժուար չէ իմանալ այլեւս թէ նրանց առաջացրած սիֆիլիս հիւանդութիւնը ինչ արտայայտութիւններ կարող է ունենալ։

Նախ և առաջ սիֆիլիսի մանրէները վնասում են այն տեղին, ուր մուտք են գործել։ Այնտեղ նրանք գոյացնում են վէրք—կոշտ շանկր։ Այդ առաջին արտայայտութիւնը մնում է առանձին՝ մի՛որոշ ժամանակ։ Սիֆիլիսի առաջին շրջանն է դա։

Մենք տեսանք թէ ինչպէս կոշտ շանկրում մնալուց, բազմանալուց յետոյ որոշ ժամանակ, սիֆիլիսի մանրէները տարածւում են մեր ամբողջ կազմուածքի մէջ, առաջացնելով ընդհանուր վարակումն, ընդհանուր արտայայտութիւններ։ Դա սիֆիլիսի երկրորդ, կոնդիլոմատոզային, պզուկների շրջանն է։

Վերջապէս մեզ յայտնի է, թէ ինչպէս մարդու կազմուածքը դիմադրում է այդ մանրէների արշաւանքին իր բնական և արհեստական (դեղեր) ուժերով, աշխատում է, բաւական յաջող կերպով, չէզոքացնել նրանց կործանիչ ազդեցութիւնը։

Բայց յաճախ այդ ուժերը կատարեալ չեն լինում. մի քանի սիֆիլիսի մանրէներ դեռ ևս կենսունակութիւն են ունենում տարիների ընթացքում, կազմուածքի որ և է մասում։ Որովհետև, ինչպէս երևում է նրանք թոյլ են, թւով քիչ և ժամանակի ընթացքում էլ, հաւանական է, կերպարանափոխ ած են լինում իրենց սկզբնական բնոյթը և ուժը — այդ պատճառով տեղ-տեղ միայն, ուր նրանք մնացել են, յառաջացնում են ուռուցքներ, որոնք կոչւում են Գումմա։ Դա սիֆիլիսի երրորդ, Գումմային, ուռուցքային շրջանն է. Ուրեմն,

Առաջին շրջանն է—Վէրք, կոշտ շանկր։
Երկրորդը —Ընդհանուր վարակման, կոնդիլոմատոզային, դուրս տւածների, պզուկների շրջան։
Երրորդը —Գումմային, ուռուցքային շրջան։

I

ՍԻՖԻԼԻՍԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

ԿՈՇՏ-ՇԱՆԿԸՐ

Սիֆիլիսի մանրէները, (սպիրոխէտները) շատ հեշտութեամբ են փոխանցւում մէկ մարդուց միւսը։ Դա կատարւում է մարդուս—իրեն աննկատելի կերպով։ Սկզբում նա չի զգում անգամ սպիրոխէտների ներկայութիւնը իր մէջ։ Այս սկզբնական գաղտնի շրջանը տեւում է կարճ կամ երկար, նայելով թէ որքան սպիրոխէտներ են փոխանցւել։ Եթէ քիչ են նրանք, այդպէս դէպքում նրանց գոյութեան նշանների երեւալը տեւում է երկար, 4—5 շաբաթ։ Եթէ շատ շուտով են արտայայտւում, 10 օր, կամ 2—3 շաբաթ։ Յաճախ 21 օր է տեւում այդ գաղտնի շրջանը։

Հիւանդը նոյն իսկ մոռացութեան է տալիս ունեցած կասկածելի յարաբերութիւնը։ Սպիրօխէտները աներեւոյթ կերպով շարունակում են իրենց գործը, հանգիստ զարգանում են, աճում. մտած տեղում իրանց թոյնով շրջակայքը գրգռում են և առաջացնում մեղմ բորբոքումն։ Նրանց շուրջը, ինչպէս ասացինք,

ՊԱՏԿԵՐ II

Սիֆիլիսի առաջին շրջան

ԿՈՇՏ, ՊԻՆԴ ՇԱՆԿՐ.

Լատին. Ulcus durum (Ուլկուս դուրում)։

Սիֆիլիսոտի համբոյրից թուշի վրայ գոյացել է կոշտ շանկր. մէջտեղը կարմիր հում մսի գոյն ունի, կաշւի մակերեւոյթից քիչ բարձր, կոշտութիւնից մորթը ձգելուց ափերը գունատ, բայց շուրջը, որտեղ վէրքը անցնում է դէպի առողջ մասը, ունի իրեն յատուկ օղակ մուգ կարմիր գոյնի։ Շանկրի համեմատ ուռած են ձախ կողմի ծնօտի տակ գտնուող խուլերը։

ՏՊ Ն. ԱՂԱՆԵԱՆԻ

կուտակում են արեան սպիտակ գնդակներ, որոնք ամրանում են աւելորդ մսի նման, սեղմում, այդ մասի սնունդը խանգարում, և դրանից էլ կաշուի վերևի մասը ժամանակի ընթացքում իջնում է, քանդւում և վէրք է գոյացնում։ Դա—Կոշտ շանկրն է։

Նա ներկայացնում է իրենից գնդակների կուտակումն և այդ պատճառով էլ աւելի փոքրիկ, բաց ուռոյցքի տեսք ունի։ Պինդ է նա. եթէ բռնենք երկու մատներով և թեթևակի սեղմենք, կը զգանք կոշտութիւն։ Պատահում են վէրքեր, որոնք շատ էլ կոշտ չեն, բայց ունին այդ դէպքում կոշտ շանկրի ուրիշ առանձնայատկութիւնները։

Վէրքը նման է հում մսի, երեսը մաքուր և փայլուն՝ կարծես լաք քսած լինի. արտադրում է պարզ գլիցէրինի նման հիւթ. եթէ կեղտոտ պահուի և գըրգուի, ի հարկէ կը ժահրակալուի։ Վէրքի մեծութիւնը զանազան է. մեծ մասամբ մատների եղունկների չափ. քանակութիւնը—յաճախ մէկ կամ երկու հատ է. հազիւ է պատահում է աւելի։ Կոշտ շանկրը չի ցաւում։

Հիւանդը սկզբում ուշադրութիւն չի դարձնում նրա վրայ։ Մի վէրք, որ մաքուր է և չի ցաւում, ի՞նչ նշանակութիւն ունի։ Չի կասկածում, որ դա լուրջ բան է։ Այդ շրջանում, շատ անգամ, մանաւանդ կանայք, չը նկատելով վէրքերը, գիտակցաբար կամ անգիտակցաբար՝ շարունակում են սեռական յարաբերութիւնները և վարակում—տարածում են հիւանդութիւնը... Այդ միջոցին է ահա, որ անհաւատարիմ ամուսինը վարակած՝ հիւանդացնում է իր կողակցին էլ։

Կոշտ շանկրը մնում է և չի անցնում, այլ դանդաղօրէն մեծանում է։ Դա արդէն սկսում է անհանգըստացնել հիւանդին։ Շատ անգամ նա չի կարողանում նոյն իսկ իրեն պարզ հաշիւ տալ, թէ որտեղից է գոյացել վէրքը, քանի որ ինքը վաղուց յարաբերութիւն չի ունեցել ոչ ոքի հետ։

Կասկածելի յարաբերութիւն ունեցողը պէտք է գիտենայ և միշտ յիշողութեան մէջ պահէ, որ կակուղ շանկրը և սուսունակը միայն մի քանի (2—4) օրից յետոյ են երևան գալիս, իսկ կոշտ շանկրը, այսինքն սիֆիլիսը՝ մեծ մասամբ 14—25 օրից յետոյ։

Պատահում են և խառն դէպքեր, երբ միաժամանակ միևնոյն անձնաւորութիւնը ստանում է երկու հիւանդութիւններն էլ՝—կոշտ և կակուղ շանկրը միասին։ Այդ դէպքում ամեն մէկի արտայայտելն էլ սովորական ժամանակին է լինում. այսինքն, կասկածելի յարաբերութիւնից մի քանի օր անց, գարգանում է նախ կակուղ շանկրը, իսկ մի քանի շաբաթից յետոյ միայն, նոյն տեղում կամ նրան մօտիկ, գոյանում է կոշտ շանկրը։ Հիւանդները մեծ մասամբ գաղափար չունենալով այդ մասին, կարծում են թէ բժիշկը այնքան վատ տարաւ գործը, որ կակուղը՝ կոշտ շանկրի վերածուեց։ Իսկ որ նա Վեներայից առանձին բաղդ է ունեցել երկուսովն էլ վարակւելու—դա նրա մտքովն անգամ չի անցնում. այն ինչ՝ իրողութիւնը այդպէս է։

Աւելորդ չի լինիլ զուգընթացաբար առաջ բերել կոշտ և կակուղ շանկրի յատկանշանները։

ՀՍԽՀ ... ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. ... Библиотека
7/XI 1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1005
10305

Կոշտ շանկր	Կակուղ շանկր
1. Քանակութիւնով՝ աւելի եզակի։	1. Յոգնակի են։
2. Երևալը՝ 7—20 օր անց, յարաբերութիւնից յետոյ։	2. 1—2 օր։
3. Մսի գոյն, պսպղուն, բարձր ափերով։	3. Գոյնը դեղին է, ժահրակալուող, խորը և կերած ափերով։

Վէրքը (շանկրը) երևալու դէպքում, նրա տեսակը որոշելու, խառը շանկրները պարզելու և կազմուածքը ծանր արկածների մէջ չը ձգելու համար, կարևոր է օր առաջ դիմել բժշկին, որ խոշորացոյցի օգնութեամբ, ճշգրիտ կերպով պարզէ շանկրի բնոյթը և ըստ այնմ հիւանդին ենթարկէ բժշկութեան։

ԱՐՏԱՍԵՌԱԿԱՆ ՎԱՐԱԿՈՒՄ

Ինչպէս արդէն բացատրեցինք, կոշտ շանկրը գոյանում է սիֆիլիսի մանրէներից—սպիրոխէտներից։ Ուրեմն որտեղ նրանք մուտք գործեն, այնտեղ էլ պէտք է առաջացնեն կոշտ շանկր։ Ամենից առաջ, իբրև սեռական հիւանդութիւն, նա ստացւում է սեռական յարաբերութիւնից և ուրեմն „մեղք կատարողների» սեռական անդամների վրայ է յաճախ գոյանում։ Բայց միայն սեռական մասերը չեն որ ենթարկւում են սիֆիլիսի մանրէների ազդեցութեանը։ Երբ ամբողջ կազմուածքը հիւանդացած է լինում և սիֆիլիսի դուրս ււածները ծածկում են

մարմնի զանազան մասերը, այդ միջոցին եթէ առողջ մարդը շփում ունենայ հիւանդի դուրս տուածների հետ, նրա ամեն մի մասը կարող է վարակուել, եթէ միայն դիւրութիւն է տրւում սիֆիլիսի մանրէների մուտքին։

Ասում ենք „դիւրութիւն“. և ահա թէ ինչու համար։ Մարդուս առողջ մորթը, կաշին՝ ամուր է, մեզ լաւ պաշտպանում է. նրա միջով չեն կարող անցնել մանրէները, մասնաւորապէս սիֆիլիսի մանրէն։ Ձեզ օրինակ բժիշկները. նրանք միշտ մատներով հետազօտում են կոշտ շանկրները, սիֆիլիսի դուրս տուածները և չեն վարակւում։

Մարդուս կաշին թափանցիկ չէ. ձեռքերը հասարակ ջրով և սապոնով լուանալուց յետոյ, ամեն ինչ իջնում է նրանից, նաև սիֆիլիսի մանրէները. ուրիշ բան է, եթէ խանգարուած է կաշուի ամբողջութիւնը, եթէ նա ունի քերուածքներ, վէրքեր։

Յուշաթաղանդը, երեխայոց քնքոյշ կաշին, յաճախ ունենում են անտեսանելի քերուածքներ. նոյնը և սեռական անդամը։ Յարաբերութեան միջոցին քերուածքներ ունեցող մորթը բաց դռներ է ներկայացնում սիֆիլիսի մանրէների համար։ Ուր որ լինին այդպիսի բաց դռներ, ոչ միայն սեռական անդամի, այլև ամեն տեղ, մարդու ամեն մի մասում, — եթէ նրանք շփման են թարկւում սիֆիլիսի դուրս տուածների, արտադրութիւնների հետ, — այնտեղ կարող է գոյանալ կոշտ շանկր. այսպէս կոչուած՝ Արտասեռական վարակումի կոշտ շանկր։

ԽՈՒԼԵՐԻ ՈՒՌՈՅՑՔ, ՉԸ ՑԱՒՈՂ ԲՈՒԲՕՆ.

Կոշտ-շանկրը կարճ միջոցում արդէն պարունակում է իր մէջ մեծ քանակութեամբ սիֆիլիսի մանրէներ, որոնց մի մասը, դեռ կոշտ շանկրը չը բացուած, փոխադրւում են երակների և մօտակայ խուլերի մէջ, որոնք լի են արեան սպիտակ գնդակներով։

Սիֆիլիսի մանրէները այդտեղ աճում են և առաջացնում իրենց յատուկ գրգիռը, մեղմօրէն բորբոքում են նրանց և խուլերը ուռչում են. բայց որովհետև բորբոքումը մեղմ է՝ չեն ցաւում։ Հիւանդը հէնց ինքն էլ կոշտշանկրի հետ միասին նկատում է այդ խուլերը և միշտ մտածում ու իրան մխիթարում՝ որ „թէև ուռած են, բայց ցաւ չկայ“։ Իսկ մենք բժիշկներս այդ չը ցաւող խուլերից աւելի ենք վախենում։

Նայած թէ որտեղ է գոյանում կոշտ շանկրը, ուռչում են նրան մօտակայ խուլերը։ Օրինակ, եթէ կոշտ շանկրը գտնւում է սեռական անդամի վրայ, ուռչում են աճուկների խուլերը, որոնք ունին սեփական անուն — բուբօն։ Զանազանելու համար կակուղ շանկրի շատ ցաւոտ բուբօնից, նա կրում է “չը ցաւող բուբօն“ անուն։ Եթէ կոշտ շանկրը գտնւում է շրթունքի կամ բերանի որև է մասում, ուռչում են ծնօտի տակ գտնւող խուլերը. եթէ ձեռքի վրայ է, կռան տակի խուլերն են ուռչում և այլն։

Երկար չեն մնում սիֆիլիսի մանրէները իրենց այդ երկրորդ իջևանում։ Սկսում են բազմանալ կոշտ շանկրից անջատուածները երակների, բուբօնների և խուլերի մէջ։ Կարծես թէ իրենց շարքերն այդ տեղե-

րում՝ կազմակերպում են յարձակւելու համար։ Եւ իսկապէս, մի գեղեցիկ օր, կոշտ շանկրը երեւալուց մօտաւորապէս 4—5 շաբաթ անց, սիֆիլիսի մանրէները բազմացած՝ տարածւում են երակների միջով մարդու ամբողջ կազմւածքում և առաջացնում են ընդհանուր վարակումն։

II

ՍԻՖԻԼԻՍԻ ԵՐԿՐՈՐԴ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԱԿՄԱՆ ՇՐՋԱՆ

Կոշտ շանկրի ընթացքում արեան մէջ թէև գըտնում ենք սպիրօխէտներ—սիֆիլիսի մանրէներ, բայց շատ քիչ։ Ընդհանուր վարակումը երեւալուց յետոյ՝ չափազանց շատ են։ Նրանք, ինչպէս ասացինք, երակների միջով տարածւում են ամբողջ կազմւածքում։

Մեր բնական ոյժերը աշխատում են դիմադրել սպիրօխէտների այդ արշաւանքին և նրանց արտադրած թոյնին։ Այս կռւի և ինքնապաշտպանութեան արդիւնքն է, որ մեծ մասամբ հիւանդի տաքութիւնը բարձրանում է, նայած դէպքին, մի քանի աստիճան, հասնելով նոյն իսկ 38—40 աստիճան ըստ Ցէլսիի։ Ինչպէս առհասարակ ջերմին յատուկ է, վարակւածը յաճախ կորցնում է ախորժակը և քունը, զգում է ընդհանուր թուլութիւն, ոսկորների ցաւ, կոտրատւում է...

Բայց շուտով այդ իրարանցումը վերջանում է. սիֆիլիսի մանրէները կարծես տանում են յաղթանակը, և տաքութիւնը , որ տեւում է մեծ մասամբ 2—4 օր, իջնում է։

Այդ ժամանակ սպիրոխէտաների յաղթանակի նշանները երևում են։ Սկսւում են նշմարւել սիֆիլիսի ընդհանուր վարակման արտայայտութիւնները, որոնք կարող են լինել ամեն տեղ, ուր հասնում են արեան երակները. իսկ նրանք՝ ամենուրեք են։ Ուրեմն սիֆիլիսի մանրէները կարող հասնել ու բնակւել թէ կաշւի և մարդուս ներքին գործարանների և թէ ուղեղի մէջ... Մէկ խօսքով չը կայ ամբողջ կազմւածքի մէջ և ոչ մի տեղ՝ ապահով նրանց արշաւանքից։ Միայն մարդու, ինչպէս ասում են, բախտից է կախւած՝ թէ որտեղ, որ մասերում և որքան սպիրոխէտաներ կը հաստատւեն, որպէս զի սկսեն մեզ արդէն յայտնի աւերիչ գործունէութիւնը։

Առաջներում, երբ գիտութեան մէջ չը կար դեռ սիֆիլիսի մանրէների-սպիրոխէտաների գիւտը և վէրքը կասկածելի էր թւում, բժիշկները սպասում էին սիֆիլիսի ընդհանուր վարակման երկրորդ շրջանի այս արտայայտութեանը, սիֆիլիսի այդ ճշգրիտ ցուցմունքին, որպէսզի հիւանդութիւնը պարզ որոշէին։

Սպիրոխէտաները, սիֆիլիսի մանրէները, ընդհանուր վարկման միջոցին տարածւելիս, ունին իրենց սիրած տեղերը, որ յաճախ մորթն է լինում։

ՍԻՖԻԼԻՍԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՇՒԻ ՄԷՋ։

Մորթի բծաւոր սիֆիլիդ։

Մորթի մէջ հաստատւելով, սիֆիլիսի մանրէն իր ներկայութեամբ և իր թոյնով գրգռում և մեղմ բորբոքումն է առաջացնում։ Հետևանքն այն է լինում, որ նրա շուրջը կուտակւում են արեան և նրա սպիտակ գնդակները կոշտ և կարմրագոյն, այդ պատճառով էլ կաշւի վերայ դուրս ուռածները բծերի են նման և ունեն կարմիր գոյն, իւրաքանչիւրը մեկուսացած, և շըրջապատւած առողջ մորթով, որը հեշտութեամբ նրանից զատւում է։ Այդ բծերը կարծես թէ սպիրոխէտաների համար առանձնասենեակներ լինեն. նրանց մէջ յաջողւել է գտնել սպիրոխէտաներին։ Բայց յետոյ, երբ վրայ են հասնում մէկը միւսի ետևից սիֆիլիսի մանրէների նոր նոր գաղթականութիւններ, այնքան խտանում են մորթու մէջ բծերը, որ մի քանի միմեանց մօտ գտնւողները կարծես միացած են լինում։

Սկզբում բծերը վարդագոյն են. հետզհետէ նրանք թնդանում են և ստանում մուգ-կարմիր, նռան գոյն։ Որովհետև նրանք կազմւած են գնդակներից և իրենց մէջ են պարունակում կարմրութիւնը, այդ պատճառով էլ երբ մատով սեղմում էք, նրանց գոյնը բոլորովին չի անցնում։ Դրանով էլ զանազանւում են սիֆիլիսից մորթու վրայ դուրս ուռածները՝ ուրիշ հիւանդութիւնների դուրս ուռածներից, որոնց գոյնը մատով սեղմելիս, կորչում է։

Սիֆիլիսի բծերը մորթի մակերևոյթից քիչ բարձր են, կլոր են կամ կիսակլոր, գնդասեղի գլխի մեծութիւնից մինչև ոսպի չափ և աւելի մեծ։ Քոր չեն գալիս նրանք և կամ շատ քիչ են քորւում։ Սկզբում սփռւած են լինում կրծքի և փորի մորթի վրայ, բայց հետզհետէ տարածւում են և ծածկում մարմնի նաև միւս մասերը։

Բժշկականութեան մէջ ընդունւած է մորթու

վրայ սիֆիլիսի դուրս տւածները անուանել Ս ի ֆ ի լ ի դ։ Դրա համար է կրում նա Բ ծ ա ւ ո ր ս ի ֆ ի լ ի դ անունը։

Պատահում է որ կոշտ շանկրը շատ քիչ է զարգացած լինում։ Ընտանեկան դեղերով կամ որոշ ժամանակի ընթացքում չը ճանաչւած, նա անցնում է, թողնելով միայն աննշան կոշտութիւն։ Բայց շանկր ունեցողը դրանով հանգստացած, յանկարծ նկատում է որ մորթը ծաղկել է մինչև այն աստիճան, որ ոչ թէ քիչ-շատ կրթւածը, այլ ագէտն իսկ կարող է նկատել։

ՍԻՖԻԼԻՍԻ ՊՋՈՒԿՆԵՐԸ, ՀԱՆԳՈՅՑԱՆՄԱՆ ՍԻՖԻԼԻԴ.

Երբ մորթու մէջ գրգռումն ու բորբոքումը աւելի ուժեղ է լինում քան բծաւոր սիֆիլիդի ժամանակ, դրա համեմատ էլ մանրէների շուրջը գնդակների կուտակումն աւելի մեծ է։ Դրա շնորհիւ մորթն աւելի է բարձրանում և բծի փոխարէն՝ փոքրիկ պզուկ է գոյացնում—սիֆիլիսի պզուկը։

Մօտաւորապէս կանեփի թելի հանգոյցի չափ է լինում նա, դրա համար էլ կոչում են նրան նաև Հ ա ն գ ո յ ց ա ն մ ա ն ս ի ֆ ի լ ի դ։

Սիֆիլիսի պզուկը նոյնպէս մուգ կարմիր է. սեղմելիս նրա գոյնը չի անհետանում բոլորովին. կոշտ է, առանձին-առանձին՝ սիֆիլիսի բծերի հետ խառը փռւած. մէկ տեղ բիծ է, միւս տեղը տեսնում ես՝ աւելի բարձրացած պզուկ. շատ անգամ պատահում է տեսնել թէ ինչպէս բիծը հետզհետէ պզուկ, հանգոյց է

Պ Ա Տ Կ Ե Ր III

Սիֆիլիսի առաջին շրջան

Ս Ի Ֆ Ի Լ Ի Ս Ի Բ Ծ Ե Ր Ե Ւ Պ Ջ Ո Ւ Կ Ն Ե Ր

Լատին. Syphilis maculo papulosa - (սիֆիլիս մակուլօ պապուլօզա).

Երեսի և պարանոցի վրայ տեղ-տեղ կան սիֆիլիսի բծեր, բայց մեծ մասը սիֆիլիսի պզուկներից է. ճակատի վրայ մանաւանդ (Վեներայի Թագը) շատ խիտ են պզուկները, այնքան որ միացել են միմեանց հետ և կաշւի մէջ կարծրութիւն—գնդակների կուտակում (infiltrat) կազմել։ Գոյնը, ինչպէս սիֆիլիսի դուրս տւածներին է յատուկ, մուգ կարմրագոյն է։

ՏՊ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ

դառնում։ Այս բծերի և պզուկների խառնուրդը մորթի վրայ՝ շատ բնորոշ է սիֆիլիդների համար։

ԽՈՇՈՐ ԿԱՄ ՄԱՆՐ ՀԱՆԳՈՅՑԱՆՄԱՆ ՍԻՖԻԼԻԴՆԵՐ

Կան դէպքեր, երբ սիֆիլիսի դուրս տուածները հէնց սկզբից և եթ բոլորն էլ կազմուած են լինում պզուկներից։ Զանազանւում են միայն մեծութիւնով՝ խոշոր կամ մանր դրա համար էլ անւանում են նրանց խոշոր կամ մանր հանգոյցանման պզուկների սիֆիլիդ։ Սա վատ տեսակն է համարւում, քան թէ բծաւոր սիֆիլիդները։

Վ Ե Ն Ե Ր Ա Յ Ի Թ Ա Գ

Սիֆիլիսի պզուկները յաճախ ճակատի վրայ էլ են դուրս տալիս։ Սրանք աւելի մուգ կարմիր են (բրօնզի գոյն ունեն) քան հասարակ պզուկները, որոնք այնքա՛ն շատ են պատահում երիտասարդների երեսների և ճակատի վրայ։

Ճակատի վրայ դուրս տուած սիֆիլիսի պզուկները ունին իրանց սեփական պատուաւոր անունը— *Վեներայի թագ*։

ՋՐԱԼԻՑ ՍԻՖԻԼԻԴ

Սիֆիլիսի պզուկները անցնում են, բայց անբարեյաջող պայմաններում զանազան բարդութիւններ են առաջ բերում։ Եթէ պզուկ կազմող գնդակները շատ են, սեղմում են մարդու մանրիկ երակները, նրանից արեան հիւթ է արտադրւում, որը և հաւաքւում է պզուկի ծայրում. կարծես թէ պզուկը լցւած լինի դեղին ջրով։ Դրանց անւանում են ջրալից սիֆիլիսային պզուկներ, Ջրալից սիֆիլիդ։

ԱՐԻՒՆԱԼԻՑ ՍԻՖԻԼԻԴ

Եթէ սիֆիլիսի մանրէների շուրջը եղած գրգռումը չափազանց է և նրա համեմատ պզուկի մէջ գնդակների սեղմւելը աւելի խիստ, երակների մէջ խանգարւում է արեան շրջանառութիւնը, արիւնի մասերը մանրիկ երակներից դուրս են գալիս, այն ժամանակ պզուկի գլուխը արիւնով է լցւում։ Դրանք կոչւում են արիւնալից սիֆիլիսային պզուկներ, Արիւն պարունակող սիֆիլիդ։

ԹԱՐԱԽԱԿԱԼ ՍԻՖԻԼԻԴ

Պատահում է, որ սիֆիլիսի պզուկների մէջ մըտնում են թարախ գոյացնող մանրէներ. նրանք պըզուկի մէջ հաւաքւած գնդակներում իրենց յատուկ բորբոքը առաջացնելով, թարախ են գոյացնում և դրանցից կազմւում են թարախով լի սիֆիլիսի պը-

ՊԱՏԿԵՐ IV

Սիֆիլիսի առաջին շրջան

ՍԻՖԻԼԻՍԻՑ ՄԱԶԵՐԻ ԹԱՓՒԵԼԸ ՍԻՖԻԼԻՍԻ ՃԱՂԱՏՈՒԹԻՒՆ

Լատին. Alopecia syphilitica—Ալօպէցիա սիֆիլիտիկա

Գլխի մազերը, սահմանափակ շրջաններում, տեղ-տեղ թափւել են և բաց սպիտակ ճաղատ կղզիներ կազմել։

զուկներ, Թ ա ր ա խ ա կ ա լ ս ի ֆ ի լ ի դ։ Այսպիսի թարախ պարունակող պզուկները յաճախ պատահում են այն մասերում, որոնք սովորաբար մաքուր չեն պահւում, օրինակ գլխի մազերի մէջ։ Պզուկների թարախակալելը արագ չի կատարւում, այլ դանդաղ։

ՍԻՖԻԼԻՍԻ ՃԱՂԱՏՈՒԹԻՒՆ
ԵՒ ՄԱԶԹԱՓՈՒԹԻՒՆ

Մազերի արմատները գտնւում են կաշւի մէջ։ Այստեղից ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մազերը արմատից կարող են վնասւել և թափւել։ Որովհետև սպիրօխէտները, ինչպէս տեսանք, մորթու մէջ տեղ-տեղ են բնակւում, մազերն էլ թափւում են դրա համեմատ. կարծես պոկած լինեն տեղ-տեղ և բացատներ կազմած գլխի, յոնքերի և բեխերի վըրայ։ Մազթափութիւնը լինում է շատ կամ թեթև. եթէ շատ է—մարդու կերպարանքն էլ այլանդակւում է և նա չի կարողանում ոչ մի տեղ երևալ. որովհետև հասարակութեան շատ լաւ յայտնի է, թէ մազերի այդ յանկարծակի թափւելը ինչից է առաջ գալիս։

ՁԵՌՔԵՐԻ ԵՒ ՈՏՔԵՐԻ
ԱՓԵՐԻ ՄԱՇԿՒՈՂ ՍԻՖԻԼԻԴ

Սիֆիլիսի պզուկները կարող են գոյանալ ձեռքերի և ոտների ափերի մէջ եւս։ Այստեղ մորթը հաստ է և աւելի է կպած մկանունքներին, որից և պզուկները սեղմւած, տափակած են լինում. մորթի մակե-

բևոյթից նրանք չեն բարձրանում, այլ մորթու մէջ են մնում։ Նրանց գոյնը կարմիր է, իրենք կոշտ են։ Ժամանակի ընթացքում պզուկների վրայի հաստ կաշին էլ չի դիմանում, սկսում է շերտ-շերտ թափուել և այդպիսով ուրեմն պզուկները նշմարւում են ափերի մէջ, տեղ-տեղ, մաշկւող փոքրիկ կլոր բացւածքներով։ Այստեղ էլ կարող են պզուկները բարդւել, ճեղքւել, ցաւեր նոյն իսկ պատճառել։ Այդ ոտքի և ձեռքերի ափերի մաշկւող սիֆիլիդը շատ բնորոշ է սիֆիլիսի համար. համաչափօրէն տարածւած է լինում նա ձեռքերի կամ ոտքերի, կամ երկուսի վրայ էլ։

ԵՂՈՒՆԿՆԵՐԻ ՍԻՖԻԼԻԴ

Եղունկը սիֆիլիսից կորցնում է փայլը, գոյնը և ճաքճքւում է։

Սիֆիլիսի պզուկները յաճախ գոյանում են եղունկի արմատում և կամ կողքին։ Այդտեղ ազատ տեղ չ'ունենալով, նրանք բորբոքում են և ցաւացընում եղունկը։ Գոյացած ուռուցքը և սաստիկ ցաւերը ստիպում են նոյն իսկ վիրաբուժական օգնութեան դիմել, կտրել, որից յետոյ միայն ցաւերը անցնում են։ Վէրքը լաւանալիս՝ եղունկը ընկնում է, նոր դուրս եկած եղունկները լինում են ընդմիշտ այլանդակւած։

ՊԱՏԿԵՐ V

Սիֆիլիսի երկրորդ շրջան

ՍԻՖԻԼԻՍԻՑ ՄՈՐԹԻ ՍՊԻՏԱԿ ԲԾԵՐ.— ՍԻՖԻԼԻՍԻ ԱՊԱՐԱՆՋԱՆ

Լատին. Leucoderma syphilitiicum. (Լէվկօդէրմա սիֆիլիտիկում)։ Պարանոցի վրայ բնական գոյնի մորթի մէջ երևում են սիֆիլիսի գոյացած սպիտակ բծեր։

ՏՊ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ

ՎԵՆԵՐԱՅԻ ԱՊԱՐԱՆՋԱՆ

Որոշ տեղերում սիֆիլիսի դուրս տուածները շփումների ենթարկւելով, անհետանում են և տեղ-տեղ թողնում սպիտակ բծեր՝ շրջապատուած առողջ մորթով։ Յաճախ այդ սպիտակ շերտերը գոյանում են պարանոցի վրայ, մանաւանդ կանանց։ Սովորական գոյնի մորթու վրայ կարծես մի քանի շարք, միմեանցից հեռու սպիտակ մարգարտէ մանեակներ լինեն շարուած։

Այդ պատճառով է, որ ֆրանսիացիք նրան անուանում են „Վ ե ն ե ր ա յ ի ա պ ա ր ա ն ջ ա ն“։ Հիւանդութեան այդ զարդը, չը նայած բժշկելուն, մնում է երկար, 1—2 տարի։ Շատ անգամ այդ նշանով է իմացւում բժշկւած սիֆիլիսը, երբ ուրիշ ոչ մէկ արտայայտութիւն չը կայ։ Բնորոշ է նա սիֆիլիսի համար։ Այդ կերպ, տեղ-տեղ սպիտակելը, միայն սիֆիլիսին է յատուկ։

ՍԻՖԻԼԻՍԻ ԹԱՑԱԿԱԼՈՂ ՊԶՈՒԿՆԵՐ

Սիֆիլիսի պզուկները, եթէ այնպիսի տեղեր են դուրս տուել որ ենթարկւում են տրորումի, քրտինքի և մարդու խղալից արտաթորութիւնների ներգործութեանը, այն ժամանակ նրանց երեսի բարակ մորթը իջնում է բոլորովին, պզուկները բացւում են և գլիցէրինի նման պարզ ջուր են արտադրում։ Այդ ջուրը լի է սպիրօխէտներով—սիֆիլիսի մանրէներով, և ուրեմն սաստիկ վարակիչ է։ Այդպիսի սիֆիլիսի թաց պզուկները գտնւում են կռան տակ, պորտի

շուրջը, կանանց՝ ծծերի տակ, անդամի վրայ, յետոյքում, աճուկներում, քրտնող ոտքերի մատների արանքներում։ Աւելի յաճախ դա պատահում է գէր մարդկանց։ Եթէ այդ թաց պզուկները անհոգ և կեղտոտ են պահւում, այն ժամանակ նրանք կարող են բորբոքւել և ցաւել. նրանցից մի քանիսները կարող են միանալ և դառնալ՝ այսպէս ասած՝ *լայն, թացակալւող պզուկ*։

Ինչ է պատճառը որ մի դէպքում լինում է բծաւոր սիֆիլիդ, իսկ մի ուրիշ դէպքում պզուկներ են զարգանում, խոշոր կամ մանր պզուկների սիֆիլիդ է յառաջանում—թարախակալ կամ արիւնակալ։

Առաջ կարծում էին թէ մեղաւոր է թոյնի տարբերութիւնը։ Բայց այժմ փորձերը ցոյց են տալիս, որ սպիրօխէտների թոյնի մէջ տարբերութիւն չը կայ, այլ աւելի շուտ պէտք է վերագրել կազմւածքի տարբեր առանձնայատկութիւններին։

ՅՈՒՇԱԹԱՂԱՆԹԻ ՍԻՖԻԼԻՍ

Մորթից յետոյ, յուշաթաղանթի սիֆիլիսն է յաճախ պատահում, մանաւանդ բերանում։ Յուշաթաղանթը մորթից աւելի բարակ է և գոյնն էլ տարբեր։ Ուրեմն պէտք է սպասել, որ այդտեղ դուրս տւածներն էլ տարբեր գոյնի լինեն, քան թէ կաշւինը. իսկապէս, բերանի դուրս տւած բծերը և պզուկները կապտա-մոխրագոյն են. յուշաթաղանթը չի դիմանում, փտանում է, դրանից էլ շատ անգամ վէրքի մի կողմը կերւած

և պլոկւած է լինում։ Նրանք, ինչպէս սիֆիլիսի դուրս տւածներին է յատուկ, ցաւ չեն պատճառում. բայց, եթէ անխնամ թողնւեն, մանաւանդ լեզւի վրայ դուրս տւածները, և կամ գրգռւեն, այն ժամանակ ցաւում են և վէրք դառնում։ Յուշաթաղանթի դուրս տւածները ընդունակ են տեղ-տեղ կրկնւելու, մանաւանդ եթէ արհեստական կերպով նրանց գրգռումը շարունակւում է։

Այժմ աշխատենք ընդհանուր կերպով նկարագրել՝ թէ սիֆիլիսի մանրէների (սպերօխէտների) ներկայութիւնը ինչ է առաջ բերում, և ինչ հետևանքներ է ունենում մարդուս ներքին գործարանների համար։

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՍԻՖԻԼԻՍ

Բարեբաղդաբար ներքին գործարանները այնքան էլ ենթակայ չեն սիֆիլիսին:

Գոյութիւն ունին ենթադրութիւններ, թէ կամ սիֆիլիսի մանրէները մի քանի ներքին գործարանների մէջ չեն մտնում և կամ մտնում են փոքր թւով ու նրանց առաջացրած հետևանքն այնքան թեթև է, որ բծաւոր սիֆիլիդի նման է լինում, առանց ցաւի է և առանց որևէ խանգարում առաջ բերելու՝ անցնում է։ Վերջինս աւելի ճիշտն է։ Ներկայումս սպիրօխէտներ գտնւած են փայծաղում, լեարդում, թոքերում, երիկամունքերում, մէզի մէջ, խալերի մէջ, սրտի արեան մէջ, աչքում, գլխի և մէջքի ուղեղում, ոսկորներում, ստամոքսում, աղիքներում և այլն:

կան դէպքեր, երբ գոյութիւն են ունենում անբարեյաջող պայմաններ. օրինակ, առաջուց մի որեւէ ներքին գործարան վնասուած է և չի կարողանում դիմադրել սիֆիլիսի մանրէներին. կամ թէ արեան հոսանքով մանրէները շատ են ներս մտել որեւէ ներքին գործարանի մէջ։

Այս անբարեյաջող պայմանները առաջացնում են ներքին գործարանների խանգարումը։

Ամենից յաճախ պատահում է սիֆիլիս՝ երակների, ուղեղի, լեարդի, երիկամունքների, փայծաղի և ոսկորների։

ՇՆՉԱՌՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՍԻՖԻԼԻՍ

Քթի մէջ պատահում է սիֆիլիսի կարմրութիւն, բորբոքումն և դուրս ուռածներ, որից և առաջանում է սիֆիլիսի հարբուխ. բայց դա հիւանդին մի առանձին անհանգստութիւն չի պատճառում։

Շնչափողի վրայ էլ են տարածւում սիֆիլիսի դուրս ուռածները, որից և ձայնը խռպոտւում է։ Իսկ եթէ դուրս են ուռել պզուկներ և սրանք ձայնի լարերի վրայ շատ են, այն ժամանակ ձայնը համարեա բոլորովին կորչում է և նոյն իսկ շնչառութիւնը խանգարւում։

Թոքերը և նրանց ծածկող փառը նոյնպէս պարունակում են սպիրօխէտներ՝ իրանց գրգռումով, բայց առանձին նշաններ չեն ցոյց տալիս և հիւանդին չեն նեղացնում։

ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՍԻՖԻԼԻՍ

Յաճախ բերանի մէջ դուրս ուռածների հետ միասին՝ կոկորդի մէջ կատիկն է սիֆիլիսից բորբոքման ենթարկւում. կարմրութիւնը, որը գոյանում է դրանից, հեշտ նշմարելի է. սահմանները պարզ են գծագրած, որով և տարբերւում է նա մրսելուց բորբոքուած կատիկի կարմրութիւնից։ Բացի կարմրութիւնից, նշմարւում են այդ սահմաններում նաև սիֆիլիսի պզուկներ, մանաւանդ կատիկի աջ և ձախ կողմերը, խուլերի վերայ, որոնք և խանգարում են ազատ կուլ տալու գործողութեանը։

Դա կոչւում է Սիֆիլիսային բկացաւ (Angina Syphilitica)։ Բերանից ստամոքս տանող սննդափողը և մանաւանդ ինքը ստամոքսը՝ ազատ չեն սիֆիլիսի տեսակ տեսակ բորբոքումից։ Սիֆիլիսի պզուկները ստամոքսում, թթու հիւթի (որը արտադրում է այդ գործարանը) ազդեցութեան տակ, կարող են վէրքեր դառնալ և ցաւեր պատճառել։ Նոյնը կարող է պատահել և աղիքներում։ Աղիքների գրգռումից առաջ է գալիս փորլուծութիւն։

Մարսողութեան գործարանների մէջ առանձին տեղ է բռնում լեարդը, որ շատ հարուստ է արեան երակներով. ամբողջ կոյտեր է նա կազմում՝ լեղիի անցքերի հետ միասին։ Ինչ ասել կուզէ որ սպրօխէտները այստեղ հեշտութեամբ են ընկնում և շնորհիւ այդտեղի դանդաղ արիւնադարձութեանը՝ նստում են, բուն դնում և խանգարում լեարդի գործը, որ շատ կարևոր է սնունդի մարսողութեան համար։ Լեղին չի

կարողանում ազատ և բաւականաչափ անցնել դէպի աղիքը, շատ անգամ կպչում է և տարածւում արեան մէջ, որից և սիֆիլիսային դեղնութիւն է գալիս։ Ամբողջ մորթը և աչքերը դեղին գոյն են ստանում։

ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՍԻՖԻԼԻՍ

Մեզ յայտնի է, որ մէզի հետ միասին շատ գըրգըռիչ հիւթեր են անցնում երիկամունքների միջով։ Ո՞ւմ յայտնի չէ, որ քութէշի թոյնը գրգռում է և հիւանդացնում, շատ անգամ մահացու կերպով, երեխաների երիկամունքները։ Սիֆիլիսի մանրէները նոյնպէս իրանց թոյնովը ուժեղապէս ներգործում են երիկամունքների վերայ։ Հետևանքը լինում է կամ անցողական բորբոքումն, եթէ վերցնում է պատճառը, և կամ երկարատև բորբոքումն։ Նշաններից մէկնէլ այն է, որ մէզը իր մէջ պարունակում է սպիտակուց։ Յաճախ այսպիսի դէպքում մէզը կարող է և պարզ լինել, բայց սպիտակուցը երևան է հանւում քիմիական տարրալուծութիւնով։

Այդ տեսակ բարդութիւնը շատ ծանր է և միշտ պէտք է դրա առաջն առնել. հակառակ դէպքում նա կարող է վտանգաւոր հետևանքներ ունենալ։

Մէզի մէջ սիֆիլիսից գոյանում է նաև շաքար, որ նոյնպէս քիմիական տարրալուծութեամբ է իմացւում։ Դա շաքարախտի եղբայրն է։

Մէզի մէջ գտնւելով, սպիրօխէտները թեթև կերպով գրգռում են նաև միզափամփուշտը։

Սեռական գործարանների հիւանդութիւնների մէջ՝ աչքի է ընկնում ամորձիքների սիֆիլիսը։ Նկատւում է ամորձիքների կցորդի (придатокъ яйчка) կոշտութիւնը։ Դժբաղդաբար, ինչպէս երևում է, ամորձիքների ծալքերը շատ լաւ թագուստի տեղ են ներկայանում սիֆիլիսի մանրէների համար։ Նրանք այդտեղ երկար են կարողանում ապրել։

ՈՍԿՈՐՆԵՐԻ ՍԻՖԻԼԻՍ

Մարդուս կազմւածքի նեցուկները ոսկորներն են։ Նրանց վերայ են ամրացած մկանունքները. իբրև լաւ հիմք, նրանց վրայով են անցնում ջղերը, երակները, նրանցով են ամուր շրջապատւած և պահպանւած մարդուս ամենակարևոր գործարանները—գլխի և մէջքի ուղեղները։ Ոսկորները պատած են բարակ փառով, որ կպած է նրանց. կան երկար և տափակ ոսկորներ էլ։ Որպէսզի մարդ կարողանայ զանազան շարժողութիւններ կատարել, դրա համար ոսկորները միացած են կապերով (խաղ, յօդ) այնտեղ, ուր հարկաւոր է. բնութեան այդ շէնքը զարմանալի կատարելութեամբ է սարքած և շաղկապւած։

Սիֆիլիսի մանրէները սիրում են հաստատւել ոսկորի փառի մէջ. իսկ որովհետև փառը սերտ կերպով է կպած ոսկորին, ուստի այնտեղ առաջացրած նրանց գրգիռը և ուռոյցքը զգալի է, ցաւեր է պատճառում։

Այդ բանը յաճախ պատահում է ոտքերի սրունքների վրայ։ Եթէ մատով շօշափէք բորբոքւած տեղը, կը գտնէք ոսկորի վրայ տարածւող ցաւոտ կոշտու-

թիւն։ Մորթը սակայն փոխած չի լինում իր գոյնը։ Ժամանակի ընթացքում այդ կոշտութիւնը անցնում է բոլորովին և կամ ոսկրանում է. շատ հազիւ է պատահում, որ թարախոտի և վէրք դառնայ։

Սիֆիլիսի մանրէները միայն ոսկորի փառովը չեն բաւականանում. Նրանք անցնում են նաև ոսկորների մէջ, ոսկորների ծուծն են մտնում և բորբոքում նրանց։ Ոսկորի թէ դրսից և թէ ծուծի բորբոքումը ազդում են ոսկորի սնունդի վրայ և քայքայում նրան։ Զէ՞ որ ոսկորների ծուծը սերտ կապ ունի արեան հետ էլ. ուրեմն դրանից վնասւում է նաև արիւնը։ Ոսկորների կապերի (յօդերի) մէջ սիֆիլիսի մանրէները ազատ են, դրա պատճառով էլ ցաւերը բացակայում են։ Բայց եթէ կապերի մէջ բորբոքումը շատ է տարածւում, խանգարում է ազատ շարժւելու, ծալելու ընդունակութիւնը։ Հիւանդը ստիպւած է պառկած մնալ։ Բարեբաղդաբար այդ տեսակ բարդութիւն հազւագիւտ է։

ՄԿԱՆՈՒՆՔՆԵՐԻ ՍԻՖԻԼԻՍ

Մկանունքների մէջ քիչ են բնակւում և զարգանում սիֆիլիսի մանրէները։ Նրանց ներկայութիւնը այնտեղ աչքի չի ընկնում առանձին նշաններով։ Հիւանդը զգում է միայն ընդհանուր ցաւեր մկանունքների մէջ. այդ ցաւերը ոչնչով չեն տարբերւում թեթև րէվմատիզմի (յօդացաւի) ցաւերից։

Առ հասարակ պէտք է նկատել, որ սիֆիլիսի երկրորդ շրջանում, տաքութիւնը անցնելուց յետոյ, հիւանդը շատ անգամ զգում է թէ ինչպէս ամբողջ

մարմինը կամ նրա այս ու այն մասը ցաւում է, կոտրատւում։ Դա պէտք է վերագրել մեծ մասամբ սիֆիլիսի ներկայութեանը՝ մկանունքների, ոսկորների և նրանց յօդերի մէջ։

ԱՐԻՒՆ ՊԱՏՐԱՍՏՈՂ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՍԻՖԻԼԻՍ

Յայտնի է թէ ամեն մի կենդանի արարածի համար որքան անհրաժեշտ նիւթ է արիւնը։ Նրանով է ամբողջ հիւսւածքը սնունդ ստանում։ Արեան գոյանալու տեղն ու շտեմարանները կազմում են ոսկորի ծուծը, ամեն տեղ տարածւած խուլերը և փայծաղը։ Դրանք բոլորն էլ կապ ունին երակների հետ, որոնց միջոցով է ահա գլխաւորապէս, որ սիֆիլիսի մանրէները անցնում են այդ գործարաններին։ Ինչ ասել կուզէ, որ նրանք այնտեղ խափանում են արեան հիւթի և նրա գնդակների զարգացումը, միւս կողմից էլ պատճառում են եղածի սպառումը։ Դրանից առաջ է գալիս առհասարակ արեան և նրա մի քանի հիւթերի պակասութիւնը։

Արեան այս փոփոխութիւնը այն աստիճան բնորոշ և նշանակալից է, որ առաջ, երբ սիֆիլիսի մանրէները դեռ չէին գտնւած, փորձեր էին անում կասկածելի դէպքերի ժամանակ և արիւնի այդ փոփոխութիւնների վերայ հիմնւելով, հաստատում էին կամ ժխտում սիֆիլիսի գոյութիւնը։ Նկատւած է թէ ինչպէս բժշկելու ներգործութեան տակ՝ արիւնը հետզհետէ մաքրւում է և վերակազմւում։

Սիֆիլիսով հիւանդների երեսի գունաւորութեան գլխաւոր պատճառներից մէկն էլ դա է. բժշկականութեան մէջ այդ գունաւորութիւնը կոչւում է „Սիֆիլիսային դժգունութիւն“։ Փորձւած աչքը իսկոյն կը ճանաչի նրան։

ԵՐԱԿՆԵՐԻ ԵՒ ՍՐՏԻ ՍԻՖԻԼԻՍ

Արեան խոշոր և մանր երակները լայն ու նեղ փողոցներ են ներկայացնում սիֆիլիսի մանրէների, սպիրոխէտների համար։ Նրանց ներկայութիւնը այնտեղ և արտադրած թոյնը՝ առանց հետևանքի չեն անցնում երակների համար։ Լուրջ կերպով և ընդ միշտ վնասւում են այդ ճանապարհները իրենց ամբողջ տարածութեան վրայ և տեղ տեղ։ Վնասը կրկնապատկւում է նրանով նաև, որ սիֆիլիսի մանրէի դէմ գործադրւող միակ դարմանը, սնդիկը, որոշ չափով վատ ազդեցութիւն ունի երակների վերայ։

Սպիրոխէտների արտադրած թոյնի ներգործութիւնը երակների ամբողջ տարածութեան վրայ այն ազդեցութիւնն ունի, որ շնորհիւ գրգռման և մեղմ կերպով բորբոքելուն՝ երակի ներսի շերտի մէջ հաւաքւում են գնդակները, միանում, կոշտանում և դրանով հաւասարապէս հաստացնում երակը ներսից։ Դրանից նեղանում է երակի անցքը այնպէս, որ այլևս ցանկալի քանակութեամբ արիւն չէ կարողանում հասցնել որոշ շրջանին՝ նրան սնունդ մատակարարելու համար։

Այսպէս ուրեմն, սիֆիլիսով վարակւածի երակները կոշտանում են (երակների սկլերոզ), կորցնում են

իրենց ճկունութիւնը, կարծես թէ 60—70 տարեկան մարդու երակները լինեն։ Այս փայտացած թոկերը — երակները, ինչպէս չորացած ռետինէ խողովակներ, դիմացկուն չեն, և քնքոյշ տեղերում, ինչպէս օրինակ՝ ուղեղն է, հեշտութեամբ են պատռւում արեան ճնշումից։

Ս Ր Տ Ի Ս Ի Ֆ Ի Լ Ի Ս

Բոլոր երակները կապւած են սրտի հետ։ Նրանց կրած վնասը սիֆիլիսից, այդ սկլերոզը, նախ և առաջ ազդում է սրտի վրայ և թուլացնում նրան։

Բացի դրանից, սրտի արիւնի մէջ էլ գտնւած են սիֆիլիսի մանրէներ. նրանք անմիջապէս ազդում են սրտի վրայ. եթէ այստեղ շատ էլ վնաս չեն բերում, մասամբ երևի պատճառը սրտի ամրութիւնն է և նրա անընդհատ աշխատանքը։ Արիւնը այդ գործարանում միշտ ուժեղ հոսանքով է մտնում վայրկենաբար և նոյնպէս դուրս գալիս տարածւում՝ տանելով իրա հետ սիֆիլիսի մանրէները։

Սիֆիլիսի թոյնի ազդեցութիւնից պատահում է սրտի բաբախում, զարկերակի անկանոնութիւն, փոքր ինչ էլ շնչարգելութիւն։

ԳԼԽԻ, ՈՂՆՈՒՂԵՂԻ
ԵՒ ՋՂԵՐԻ ՍԻՖԻԼԻՍ

Անցնենք այժմ մարդուս ամբողջ հոգեկան կեանքի, նրա բոլոր գործողութիւնների ղեկավար գործա-

րանին—ուղեղին և նրա կատարողական, լրատու հեռագրական թելերին—ջղերին։

Գլխի ուղեղի նշանակութեան մասին աւելորդ է խօսել. դա ինքնըստինքեան հասկանալի է։ Նրան հասցրած ամենափոքրիկ վնասը մեծ խանգարումներ է առաջ բերում. ի զուր չէ, որ բնութիւնը նրան այնքան ծածկած է պահում գանգի մէջ, ինչպէս մի ամրոցում, իսկ ողնուղեղը պատել է հաստ ոսկորներով, ողնաշարով։

Այդ ոսկորէ ամրոցները ունին միայն փոքրիկ անցքեր, որտեղից դուրս են գալիս ուղեղում գոյութիւն ստացող ջղերը և գնում ծածկում են ամբողջ կազմուածքը՝ մի սքանչելի ճիւղաւորուած ցանցով։

Իւրաքանչիւր ջղի թելը որոշ գործողութիւն է կատարում, ղեկավարուելով կենտրոնից ամենայն ճշտութեամբ. նրանցից ամեն մէկը կատարում է իր դերը։ Ջղերը և ուղեղը շատ քնքոյշ կազմ ունեն և ծածկուած են փառով։

Սիֆիլիսի մանրէները անարգել անցնում են այդ քնքոյշ և չափազանց կարևոր գործարանը, տարածւում են ուղեղի մէջ՝ դէպի ուղեղը գնացող արեան երակներով։

Նայելով թէ որտեղն է վնասուած, որոշ նշաններ են առաջ գալիս։ Պատահում են թոյլ կամ ուժեղ գլխացաւեր, մէջքի ցաւ, գլխի պտոյտ, սիրտ թափել։

Աւելի յաճախ վնասւում է գլխի ուղեղի հիմքը, նրա ցածի մասը։ Ուղեղի այդ շրջանից են դուրս գալիս հետևեալ ջղերը. տեսողութեանը — դէպի աչքը, լսողութեանը—դէպի քիթը, համառութեանը (ճաշակելու)—դէպի լեզուն, շնչառութեանը—

դէպի թոքերը, շարժումների, զգացողութեան և այլն։

Այդ ջղերը վնասւում են, սեղմւում, ցաւում սիֆիլիսի թոյնի ազդեցութիւնից, որով և խանգարւում է նրանց կատարած դերը։

Ողնուղեղը, շլնքից սկսած մինչև վերջ,—նստատեղը, ջղերի անհամար թելեր է տալիս։ Բացի այդ, նրա մէջ կան գլխի ուղեղի շարունակութեան թելերը, զետեղուած են նաև մեր գործողութիւնները ղեկավարող, այսպէս կոչուած, մի քանի կենտրոնները։ Թէև այդ կենտրոնների թիւը աւելի պակաս են քան թէ գլխի ուղեղինը—սակայն և այնպէս, նրանք էլ մեզ համար մեծ նշանակութիւն ունին։

Այստեղ, ինչպէս և գլխի ուղեղում, սիֆիլիսի թոյնից վնասւում են և բորբոքւում թէ ուղեղը ծածկող փառը, թէ ինքը ուղեղը և թէ նրանից դուրս եկած ջղերը։

Սիֆիլիսի մանրէների թոյնի անմիջական ներգործութեամբ՝ վնասը դեռ չի վերջանում։

Վերևում մենք յիշեցինք սիֆիլիսից առաջ եկած երակների կոշտութիւնը։ Ուղեղի երակների կոշտութիւնը և նրանց անցքի նեղանալը՝ ուղեղի քնքոյշ հիւսւածքին անմիջապէս զրկում է սնունդից։

Այդ բոլորը առաջացնում է *ուղեղի սիֆիլիս, ընդհանուր ջղայնականութիւն*։

Ուղեղի և նրա երակների հիւանդութիւնը սկիզբ է առնում երկրորդ շրջանի ընթացքում։ Թէև երբեմն լուրջ բարդութիւններ էլ են տեղի ունենում, բայց դա սիֆիլիսի երրորդ շրջանումն են պատահում աւելի։

III

ՍԻՖԻԼԻՍԻ ԵՐՐՈՐԴ,

ՈՒՌՈՒՑՔԱՅԻՆ-ԳՈՒՄՄԱՅԻՆ ՇՐՋԱՆ

Այս շրջանի արտայայտութիւնների սկզբնապատճառը նոյնն է, ինչ որ երկրորդ շրջանինը. այսինքն սիֆիլիսի մանրէները, սպիրօխէտները։ Թէ ինչ է պատճառը, որ սկզբում նրանք միայն գրգիռներ են առաջացնում և փոքրիկ պզուկներ, իսկ յետոյ ահագին ուռուցքներ—դեռ ևս լաւ պարզուած չէ։ Երկրորդ շրջանում սիֆիլիսի մանրէները ահագին քանակութեամբ են սփռուած կազմուածքի, դուրս տուածների, մանաւանդ թաց պզուկների մէջ։ Գումմային շրջանում նրանք չափազանց քիչ են։ Պէտք է շատ քննել և աշխատել, որպէս զի կարողանանք մէկ երկու սպիրօխէտ գտնել ահագին գումմայում, ուռուցքի մէջ։ Գումման կազմող գնդակները հեշտ են քանդւում, իսկ պզուկները չունին այդ յատկութիւնը։ Բացի ակնյայտնի այդ զանազանութիւնից, կայ և ուրիշը։ Տարիների ընթացքում սպիրօխէտները ոչնչանում են՝ մեր արեան մէջ գոյացած սիֆիլիսի հակաթոյնի շնորհիւ. սակայն հաւանական է ենթադրել, որ մի քանի թաղնուած ման-

րէներ մնալով՝ փոխում են իրենց բնոյթը։ Ինչպէս երևում է, աճման ընդունակութիւնը նուազեցրած, նրանք թոյն են արտադրում միայն, գրգռում են և հետևանքը լինում է ահագին ուռուցք-գումմա։

Առաջ կարծում էին որ գումմային շրջանը վարակիչ չէ բոլորովին. բայց փորձել են սրսկել կապիկներին գումմայի հիւթը և նրանք վարակւել են։ Եթէ վարակումները հազւադէպ են—պիտի վերագրել նրան, որ գումման շատ քիչ է սիֆիլիսի մանրէներ պարունակում իր մէջ, այն էլ ուռուցքի խորքում. ուրեմն և գումմայի սպիրոխէտները անմիջական շփման մէջ չեն գտնւում ուրիշի կազմուածքի հետ։

Բացուած գումմայում ոչնչանում են սպիրօխէտները։

Գումմային շրջանի ուռուցքները երկու տեսակ են լինում.—կամ տափակ, տարածուած հաստ շերտի են նման՝ լցուած գնդակներով և կամ հատիկ-հատիկ ուռուցքներ են, որոնց սահմանները լաւ են որոշւում՝ նստած առողջ մասերի մէջ։

Ուռուցքի մեծութիւնը զանազան է լինում. մի ցորենի հատիկի, մի փոքրիկ պզուկի մեծութիւնից՝ մինչև ձուի չափ և աւելի մեծ։

Այդ ուռուցք սկզբում լինում է ամուր, հետզհետէ փափկանում է և եթէ կտրելու լինէք, մէջը կը տեսնէք մոխրա-կարմրագոյն մսի նման հիւսուածք։ Դա գնդակների կոյտն է։ Բացի դրանից, քիչ ջրալից հիւթ էլ կայ մէջը, որը նման է պարզ սոսինձի—գումի *)։ Այդտեղից է որ նրա անունն էլ Գումմա է։

*) Խէժ։

Ուռուցքի գնդակների բազմանալը շարունակւում է, նայած թէ իրենց զարգացման համար ինչպիսի մղումն են ստացել։

Հասնելով զարգացման գագաթնակէտին, նրանք լուծւում են, ենթարկւելով իւղային կերպարանափոխութեան. և այդ դրութեամբ, արեան միջոցով, նրանք ցրւում—ծծւում են, և իրենց տեղը թողնում քստութիւն։

Պատահում է նոյնպէս, որ ուռուցքը դրգռելով իրեն շրջապատող առողջ մասերը, օղակ է կազմում իր շուրջը, որև ժամանակի ընթացքում սպի*) դառնալով՝ առանձնանում է և սահմանափակւում։

Բայց դրանք բարեյաջող դէպքեր կարելի է համարել։

Աւելի յաճախ՝ գումման քանդւելու հակումն ունի։ Ուռուցքի գնդակների մի մասը թարախի նման հիւթի է վերածւում. դրա հետևանքով՝ արտաքին մասերը կակղում են, յետոյ ծակւում են և բացւում, վէրք է գոյանում, որև քանդւելով, քանդում է իր շուրջը գտնւող առողջ մասերի հիւսւածքն էլ։ Սրանով է տարբերւում գումմային շրջանը՝ երկրորդ, պզուկների շրջանից։ Այնտեղ դրգիռ և մեղմ բորբոքումն է, այլև փոքրիկ պզուկներ, որոնք կորչում-անցնում են անհետ, իսկ այստեղ գումմա է—ուռոյցք, որ հակումն ունի քանդւելու և շրջակայ առողջ մասերն էլ աւերելու, թողնելով բաւական նշմարելի հետքեր ու այլանդակումներ։

Երկրորդ շրջանը ամենայն իրաւամբ կարելի է

*) Վէրքի տեղ, կամ չորացած վէրք։

ՊԱՏԿԵՐ VI

Սիֆիլիսի Երրորդ գումմաների շրջան

ԲԱՑՒԱԾ ՎԷՐՔՍ.ՑԱԾ ՍԻՖԻԼԻՍԻ ՈՒՌՈՒՑՔ ԳՈՒՄՄԱ

Լատին. Gumma exulcerata (*գումմա էքսուլցէրատա*)

Ոտքի սրունքի վրայ աճագին ուռուցք. գումման բացուել է, կերել է մորթը, քանդել մորթի տակ գտնուող հիւսուածքը, խոր վէրք է դարձել: Պատկերի մէջ բացուած կարմիր հիւսուածքն է երևում և նրա դեղնագոյն թարախանման պսպղուն մակերևոյթը:

անուանել գրգռիչ շրջան, իսկ գումմային շրջանը— քայքայիչ, աւերիչ:

Գումմային շրջանը պարտական է իր ծագումով երկրորդ շրջանից մնացած սիֆիլիսի մանրէներին, սպիրօխէտներին. ուրեմն գումմաները կարող են նմանապէս զարգանալ այն բոլոր գործարաններում և կազմուածքի հիւսուածքներում, ուր մուտք են գործում մանրէները՝ երկրորդ շրջանում: Ուրեմն և գումմաների կարելի է պատահել ամեն տեղ:

Սակայն նրանք էլ ունեն իրենց թագստոցները.—դրանք են մորթը, ներքին գործարաններից՝ լեարդը, յետոյ՝ քիթը, բերանը, ոսկորները և ուղեղը՝ իր թաղանթով, փառով:

Մեծ մասամբ այդ ուռուցքների թիւը շատ չէ: մէկ հատ է կամ մի քանիսը. ապա թէ ոչ՝ սարսափելի կըլինէր մարդուս դրութիւնը:

Մ Ո Ր Թ Ի   Գ Ո Ւ Մ Մ Ա

Մորթի գումմաները՝ երկու տեսակից էլ լինում են. թէ տափակ և տարածուած, և թէ առանձնակի, մէն-մենակ: Ուռուցքները գոյանում են թէ մորթի և թէ մորթի տակ գտնուող հիւսուածքի մէջ:

Մորթի ա ռ ա ն ձ ն ա կ ի զ ա ր գ ա ց ա ծ գ ո ւ մ մ ա ն ե ր ի մեծութիւնը զանազան է,—լինում է փոքր, նոյն իսկ այնքան փոքր, որ հազիւ սիֆիլիսի պզուկի չափ է: Շուտով սակայն պզուկանման գումմաները, որոնք շատ են լինում կաշւի մէջ, ցոյց են տալիս իրենց գումմայական բնոյթը. կամ փափկում են և անցնում, բայց հետք թողնում և կամ բացւում են,

վէրք դառնում։ Այդ փոքրիկ վէրքերը քանի գնում՝ մեծանում են. եթէ միմեանց շատ մօտ են, միանում են իրար և դառնում մի մեծ վէրք։ Երբ լաւանում է վէրքը, տեղը թողնում է մեծ, սպիտակ, մէջը կարմրագոյն և կապտագոյն գծերով ու կէտերով սպի, որը նման է մարմար քարին. այդ պատճառով էլ նրան կոչում են *մ ա ր մ ա ր է մ ո ր թ*։

Մ ո ր թ ի տ ա կ, հ ի ւ ս ո ւ ա ծ ք ի մ է ջ գ տ ն ւ ո ղ գ ո ւ մ մ ա ն ե ր ը եթէ առանձնակի են, տեղ-տեղ հետըզհետէ բարձրացնում են մորթը, մեծանում են և ենթարկւում իրենց յատուկ փոփոխութիւններին։ Յաճախ, երբ նրանք փափկում են, գումմա ուռուցքը այնպիսի տպաւորութիւն է թողնում, որ կարծես հասել է և թարախով լիքն է։ Եթէ սխալմամբ այդ ուռուցքը կտրում են և բաց անում, թարախ չի դուրս գալիս, այլ մի քանի կաթիլ արիւն և սպիտակ հիւթ, իսկ կտրած ուռուցքի մէջը փափուկ խուլի նման տեսք ունի. դա գնդակների կոյտն է, որից բաղկացած է գումման։ Երբէք չը պէտք է կտրել գումմաները, որովհետև ձեռք առած բժշկական միջոցներով նրանք ոչընչանում են։

Պատահում է որ գումման ինքն է բացւում և վէրք դառնում. այդպիսի վէրքը, որպէս կաշւի տակի հիւսւածքի մէջ գտնւող, աւելի խորն է քան մորթի դըրսի գումմային վէրքը. մուգ կարմիր է սա և խորքում ծածկւած՝ թարախանման փայլուն դեղին մի հիւթով։ Մեծ մասամբ կլոր է։

Եթէ այդ տեսակ գումման լաւանում է, գոյացած սպին ներս է քաշւում. իսկ եթէ այդտեղի գումման վէրք չի դառնում, այլ ծծւում է—կաշին աւելի է խորացնում, քան նոյն տեսակ, կաշւի գումմայից յառաջացածը։

Այս գումմաները մեծ մասամբ լինում են ոտքերի, ճակատի և շլինքի վերայ։ Եթէ պատահում են քթի և շրթունքների վերայ—այլանդակում են նրանց։

Տափակ և տարածւած գումմաները կաշւի և կաշւի տակ գտնւող հիւսուածքներում նոյն կերպարանափոխմանը կարող են ենթարկւել։

ՅՈՒՇԱԹԱՂԱՆԹԻ ԳՈՒՄՄԱՆԵՐ

Բերանի յուշաթաղանթի մէջ, թշերի, լնդերքի և շրթունքների վերայ գումմաները հազւագիւտ են։ Աւելի յաճախ պատահում են քիմքի և լեզւի վրայ, քթի և կոկորդի մէջ։

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՒՄՄԱՆԵՐ

ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՒՄՄԱ

Լ ե զ ո ւ ն, որ ուտելիս անմիջական շփման մէջ է կերակուրների հետ, և մեր ամենաշարժուն անդամներից մէկն է, բերնի մասերից աւելի յաճախ է ենթարկւում է գումմաների աւերածութեանը։

Լեզւի գումմաները լինում են նոյնպէս կամ տափակ, տարածւած և կամ մենակեաց, հատ-հատ զարգացած ուռուցքով։

Առաջին դէպքում լեզուն մեծանում է ամբող-

ջովին, կարծրանում է, ազատ չի կարողանում շարժուել, ճեղքւում է և նոյն իսկ շատ անգամ հիմք է դառնում քաղցկեղի անբուժելի հիւանդութեան։

Երկրորդ դէպքում լեզուի մի որոշ տեղը գոյանում է ուռուցք-գումմա, որ գնալով մեծանում է, կոշտանում, յետոյ փափկում է, ծակւում և վէրք դառնում։

Շնորհիւ այն հանգամանքի, որ լեզուն, այսպէս ասած, շատ շարժուն է, վէրքը գրգւում է, վրան աւելանում է և կերակուրների գրգիռը, առաջ է գալիս ցաւ, որ քանի գնում՝ աւելանում է և շատ անհանգստացնում հիւանդին։

Ք ի մ ք ի յուշաթաղանթը միայն բարակ շերտով է կպած ոսկորի հետ։ Այստեղ զարգացած գումման անմիջապէս սեղմում է՝ ուտում ոսկորը, և քիմքը ծակւում. այդպիսով ծակ պատուհան է բացւում բերանի և քթի մէջ տեղ, որ մեծ անյարմարութիւններ է պատճառում հիւանդին։ Կերակուրները ուտելիս կամ ջուր խմելիս՝ քիթն են թափւում և ձայնը այդ պատուհանից քթի մէջն է անցնում. այդպիսի հիւանդը կարծես քթով խօսելիս լինի։

Կ ա տ ի կ ը, ք ի մ ք ի յ ե տ և ի մ ա ս ը, չի յենւում ոսկորի վրայ, այլ յուշաթաղանթը իր մկանունքներով երակներով և ջղերով, վարագոյրի նման իջնում է դէպի կոկորդը։ Այստեղ գումմաները ծակում են այդ վարագոյրը—կատիկը, շատ անգամ ուտում, ոչնչացնում են նրան, իսկ վէրքերը առողջանալով՝ այս կամ այն կողմն են կպչում և դէպի իրենց քաշում կատիկի, փափուկ քիմքի մնացորդը։

Կերակուրը և ջուրը բերանից անցնում է կոկոր-

դի յետևի պատով, սննդափողով՝ դէպի ստամոքս, ինչպէս արդէն յիշել ենք։

Կ ո կ ո ր դ ո ւ մ և ս լ ի ն ո ւ մ ե ն գ ո ւ մ մ ա ն ե ր, որոնք նկատելի են լինում. եթէ բերանը լաւ բաց է, այն ժամանակ կոկորդի ետևի պատի վրայ կարելի է նշմարել կեղտոտ գումմայի վէրք. եթէ վէրքը խորն է գընում, այն աստիճան աւերմունքներ է գործում, որ նոյն իսկ ողնաշարին է հասնում։

Յաջող դէպքերում վէրքը մաքրւում է, լաւանում, բայց սպին հետզհետէ հաւաքւելով՝ նեղացնում է ս ն ն դ ա փ ո ղ ի մ ո ւ տ ք ը։

Ս ն ն դ ա փ ո ղ ի ն ե ր ք և ի մ ա ս ո ւ մ, ստամոքսի և աղիքների մէջ, գումմաներ հազիւ են պատահում. Բացառութիւն է կազմում միայն ա ղ ի ք ի ծ ա յ ր ը, այսպէս կոչուած՝ ո ւ ղ ի ղ ա ղ ի ք ը, որտեղ այնքան յաճախ գոյանում է «բաբասիլ» (մայասուլ) կոչուած հիւանդութիւնը։ Այդ մասում գոյանում են նոյնպէս գումմաները, որոնց կարելի է շօշափել կամ իբրև տափակ, տարածուած կարծրութիւն և կամ առանձնակի զարգացած ուռուցք։

Այդ գումմաները շատ անգամ շփոթում են բաբասիլի կամ քաղցկեղի հետ, որոնք նոյնպէս կարող են վէրք դառնալ։ Գումման ոչնչացնում, ուտում է ուղիղ աղիքը և մեծ վէրք է դառնում։ Լաւանալու դէպքում՝ սպին այդտեղ էլ հաւաքւելով՝ ուղիղ աղիքին նեղութիւն է պատճառում։

Լ ե ա ր դ ի գ ո ւ մ մ ա ն ե ր ը լինում են երակների շուրջը և տարածուած կարծրութեան տեսակից

են․ Նրանք ամբողջապէս սեղմում են լեարդը, ոչընչացնում նրա հիւսւածքը․ իրենք էլ կարծրանալով կծկւում են, որով ամբողջ լեարդը փոքրանում է և չի կարողանում կատարել իր դերը․ իսկ այդ դերը էական նշանակութիւն ունի մարսողութեան համար։ Այդ տեսակ սիֆիլիսային գումման յաճախ լինում է ժառանգական։

Առանձնակի ուռուցքներով՝ լեարդի գումմաները լինում են լեարդի զանազան տեղերում, մի քանիսը մեծ մասամբ միաժամանակ և լեարդի մակերևոյթից դուրս են գալիս։ Աջ կողի տակ, լեարդի վրայ, նրանց կարելի է նոյն իսկ ձեռքով շօշափել։ Այդ ուռուցքները յաճախ շրջապատւած են լինում սպիացած օղակով, կամ պատահում է, որ նրանք փափկանում են, վէրքի փոխւում և ի հարկէ մեծ բարդութիւններ ստեղծում։

Լեարդի գումմաները խանգարում են մեծ երակների մէջ՝ արեան շրջանառութեանը։ Արիւնը կուտակւում է փորի մեծ երակների մէջ, դրանից նրա ջրալից մասերը դուրս են գալիս, փորը ջրով լցւում է և այդպիսով գոյանում է ջրգողութեան հիւանդութիւնը։

Լեարդի գումմաների ժամանակ հիւանդը կամ զգում է ցաւ,—մանաւանդ երբ վնասւած է լինում նաև լեարդի փառը,—կամ ցաւի փոխարէն՝ զգում է միայն ծանրութիւն աջ կողի տակ։

Հիւանդը դեղնում է, գունատւում, մաշւում և վախճանւում, եթէ մնում է առանց օգնութեան։

ՊԱՏԿԵՐ VII

Սիֆիլիսի երրորդ գումմային շրջան

ՄԱՆՐ ՊԶՈՒԿԱՆՄԱՆ ՎԷՐՔԱՑԱԾ ԳՈՒՄՄԱՆԵՐ

Լատին. Syphilis papulosa tertiaria (*սիֆիլիս պապուլօզա տէրցիարիա*)։

Քթի մորթու և նրա տակ գտնուող հիւսւածքի մէջ և թշերի վրայ գոյացել են պալուկների նման փոքր գումմաններ, որոնք բացւել են, քանդել են մորթու տակի հիւսւածքը, նոյն իսկ քթի ոսկորները և դարձրել երեսի գըլխաւոր մասերը մի մեծ վէրք։

ԾՆՉԱՌՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՒՄՄԱՆԵՐ

Ում յայտնի չեն քթի այլանդակութիւնները սիֆիլիսից։ Այդ այլանդակութիւնները հետևանք են գումմաների։

Եթէ լինում է քթի մէջ տարածւած տափակ տեսակի գումմա, յուշաթաղանթը հաստանում է, կարմրում, արտադրում է դեղնագոյն ջրալից մի հիւթ, որ հետըզհետէ փոխարինւում է թարախանման հիւթով։ Շատ անդուրեկան հոտ ունի նա. դժբախտաբար հիւանդին զգալի չէ այդ, այլ միայն շրջապատողներին։ Սիֆիլիսի գումմային այս հարբուխը տևում է երկար. հետըզհետէ յուշաթաղանթը մաշւում է, բարակում և սպի դառնում։

Աւելի աւերիչ են քթի առանձնակի գումմաները —ուռուցքները։ Սրանք զարգանում են կամ յուշաթաղանթի կամ մեծ մասամբ ոսկորի փառի մէջ։ Երկու դէպքումն էլ նրանք բաւական մեծանում են և մաշում, ուտում քթի որոշ մասը, յետոյ վէրք դառնում։

Եթէ գումման գտնւի քթի կրճուկի միջնորմի մէջ —կը ծակի նրան։ Առանձնապէս չի նեղացնի դա հիւանդին. բայց եթէ քանդեց կրճուկը, —կընկնի քթի ներքևի մասը։ Եթէ քթի հիմքի ոսկորները փչանան — քթի վերևի մասը կիջնի, ծայրը կը բարձրանայ և հիւանդը "պ ա ճ օ ի" (զունդ և կարճ քիթ ունեցող) տեսք կընդունի։ Վերջապէս եթէ քթի մէջ գտնւող ոսկորները համարեա բոլորը փչանան—ամբողջ քիթը կընկնի և կը փռանայ։

Գումման քթի մէջ սկզբում քիչ է ցաւում. պա-

տահում է նոյն իսկ, որ քթի մեծ աւերւածքները անցնում են առանց որ և է ցաւի։ Յաճախ գումման քթի մէջ այնքան մեծ է լինում, որ խանգարում է շնչառութեանը, սակայն առանց ցաւի։

Հէնց ցաւերի այս բացակայութիւնն է պատճառը, որ հիւանդը, քթի գումմանները հասարակ հարբուխի տեղ ընդունելով, թոյլ է տալիս նրանց զարգանալու. չի նկատում թէ ինչ այլանդակութիւն և մշտական դրոշմ է պատրաստում նրա համար։ Դրան հակառակ, պատահում են դէպքեր, երբ սիֆիլիսով հիւանդները հէնց սկզբից իրանց ամբողջ ուշադրութիւնն ու երկիւղը կենտրոնացնում են քթի վրայ։

Կոկորդից ցած, կերակրափողի առաջ, գտնւում է շ ն չ ա փ ո ղ ը։ Որովհետև նրա ծառայութիւնը կայանում է ձայն տալու և մեզ օդ մատակարարելու մէջ, այդ պատճառով էլ ունի իր մէջը պնդացած կրճուկներ ու ոսկորներ, որոնք շնչափողը բաց են պահում։ Շնորհիւ դրա՝ օդը միշտ ազատօրէն անցնում է դէպի թոքերը։ Կերակրափողի նման աղիքաձև տեսք չունի նա, այլ իսկական փողի (խողովակի) նման է։ Որպէսզի նրա միջով, բացի օդից ոչինչ չանցնի, ունի վերևից մի ծածկոց, որով ամուր փակւում է մուտքը, երբ ուտում ենք կամ խմում։

Եթէ պատահմամբ որ և է բան ընկնի այնտեղ, օրինակ փոշի և այլն, իսկոյն շնչափողը հեռացնում է նրան հազալով։ Շնչափողի յուշաթաղանթը ունի ծալքեր ևս, որոնցից նշանաւոր են ձայնի լարերի վրայի ծալքերը։

Շնչափողում փափուկ ձևով տարածւող գումմա-

Պ Ա Տ Կ Ե Ր VIII



Սիֆիլիսի Երրորդ գումմային շրջան

Ք Թ Ի Գ Ո Ւ Մ Մ Ա

Լատին. Gumma nasi—(Գումմա նազի)։

Քթի մէջ գումմա-ուռուցքը կերել քանդել է միջից քթի ոսկորը, յետոյ քթի վերևի մասը, որից բացւել է մի մեծ փոս։

Տպ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ

յին ուռոյցքը խանգարում է նրա քնքոյշ կազմին և վնասում է գործունէութեանը։ Յուշաթաղանթը ուռչում է, անցքը նեղանում է այնքան, որ շնչարգելութիւն է առաջ գալիս, իսկ ձայնը աւելի յարատև կերպով է խռպոտում, քան պատահում է երկրորդ շրջանում։

Գումմանները առանձնակի ուռուցքներով այստեղ եթէ զարգանան, կուտեն որոշ մասերը, յուշաթաղանթը, կը փչացնեն կրճուկները, ոսկորները, կը քանդեն, կը վնասեն, ձայնի լարերը։ Գոյացած վէրքերը երբ լաւանում են, կպչում են միմեանց, սպիները այս այն կողմ են քաշում շնչափողի պատերը, անցքը խանգարւում է երբեմն այն աստիճան, որ ստիպւած են լինում շնչառութեան համար դրսի կողմից արհեստական ծակ բանալ, որ այդպիսով ազատ շնչի հիւանդը։

Շնչափողը շարունակւում է, բարակում, ճիւղաւորւում է կրծքում և տարածւում է թոքերի մէջ։ Ամեն տեղ նա օդ է տանում։ Ամեն մէկը տեսած կըլինի ոչխարի շնչափողը, որ իր վրայ կախւած երկու թոքերովը շատ նման է մարդուս շնչափողին՝ թոքերովը։

Այստեղ էլ լինում են գումմաններ՝ թէ տարածւած տափակ, և թէ առանձնակի ուռուցքներով։ Վերջինները աւելի յաճախ են պատահում։ Թոքերում այդ տեսակի գումմանները մեծանում են, փափկանում, վէրք դառնում և եթէ երակն էլ ուտւում է ուռուցքից, այն ժամանակ գումման կարող է պատճառ դառնալ արիւն թքելու, որ և յաճախ շփոթում են թոքախտի հետ։

ՄԻՋԱՍԵՌԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՒՄՄԱՆԵՐ

Միզասեռական գործարանների արտաքին մասերը հազիւ է պատահում որ հիւանդանան գումմաներով։ Աւելի ներսից է պատահում այդ. օրինակ՝ կանանց զաւակատան մէջ։

Ամենից յաճախ գումմաները լինում են երիկամունքների և ամորձիքների մէջ։

Եթէ երիկամունքների մէջ տափակ ձևի տարածուած գումման է զարգանում, այն ժամանակ վնասւում է երիկամունքների ամբողջութիւնը. Հետևանքը այն է լինում, որ նրանք փոքրանում են և չեն կարողանում իրենց գործը կատարել. այդ պատճառով մէզի որոշ բաղադրութիւնները—մասերը մնում են և կազմւածքը թունաւորում։

Բայց աւելի յաճախ պատահում են երիկամունքների մէջ առանձնակի գումմաներ. Նրանք այնտեղ զարգանում են և վէրք դառնում։ Նրանց արտադրութիւնը խառնւում է մէզի հետ և յանկարծ այդ պատճառով մէզը պղտորւում է, ապա նորից պարզւում։ Այսինքն, երբ գումմայի արտադրութիւնը դուրս է գալիս, մէզը մաքրւում է, մինչև որ նոյնը, կամ մի ուրիշ գումմա էլի զարգանայ, փափկի, պատռւի և էլի պղտորի մէզը։ Պատահում է որ գումման քանդում է երիկամունքների փոքր երակները. այն ժամանակ մէզը արիւնախառն է լինում, կարմիր գոյնով։

Երկրորդ շրջանում մեծ մասամբ վնասւում է ամորձիքների յաւելւածը—կցորդը. իսկ երրորդ շրջանում՝ ինքը ամորձիքը։

Տափակ ձևի տարածւած գումմային ուռուցքը հաւասարապէս ամբողջովին մեծացնում է վնասւած ամորձիքը, սեղմում, ոչնչացնում է հիւսւածքը և երբ ուռոյցքը անցնում է, ամորձիքը փոքրանում է։ Այդպիսի չորացած ամորձիքները կամ արտադրում են շատ քիչ սերմ, այն էլ ոյժը կորցրած, և կամ բոլորովին կորցնում են սերմի էական մասերը. սերմը ջուր է դառնում։ Սրանից է առաջանում յաճախ տղամարդի ամլութիւնը։

Եթէ ամորձիքների մէջ գումման զարգանում է իբրև առանձին ուռուցք—մեծանում է նա որոշ մասում, որ և կարելի է շօշափել մատներով։ Եթէ նա վէրք է դառնում—կպչում է շատ անգամ մորթին և բացւում է։ Գումման կարող է լինել մէկ կամ մի քանիսը. ամորձիքների վրայ կարծես փոքրիկ բլուրներ լինեն նրանք։ Հիւանդը զգում է ցաւեր, կամ միայն ծանրութիւն։

ՈՍԿՈՐՆԵՐԻ ԳՈՒՄՄԱՆԵՐ

Գումմաների երկու տեսակն էլ կարող են զարգանալ ոսկորում և կամ նրա փառի մէջ։ Աւելի աչքի են ընկնում առանձնակի գումմաների ուռուցքները, որոնք սկզբում լինում են շատ պինդ, յետոյ սովորաբար փափկում են։ Յաջող դէպքում նրանք ծծւում, անցնում են, տեղը միայն փոս թողնելով։ Բայց

պատահում են դէպքեր, երբ ուռուցքը կըպչում է մորթին, պատռւում է և վէրք դառնում։

Գումման կարող է նստած լինել նաև ոսկրի ներսի կողմից, զարգանալով ուտում է ոսկորը, կամ որևէ չնչին դէպքից՝ կոտրւում է, և ստանում է անվերջ ոսկրացաւ և թարախակալում։

Տափակ ոսկորների գումմաններից ամենավտանգաւորներ են նրանք, որոնք զարգանում են գանգի տափակ ոսկորներում։ Շատ էլ հազւադէպ չեն այդպիսիները։

Եթէ գումման գոյանում է ոսկրի կամ նրա փառի դրսի կողմից, այն ժամանակ նկատելի է դառնում, և մատով շօշափելի՝ գանգի վերայ։ Այդպիսի գումման յաճախ կամ տեղական ցաւ և կամ ընդհանուր գլխացաւ է պատճառում. ցաւերը աւելի գիշերներն են լինում կամ այդ ժամանակ ուժեղանում։ Ժամանակի ընթացքում ուռուցքը ուտում է ոսկորը։ Եթէ բժշկական օգնութիւնը հասնում է, ուռուցքը ծըծւում է՝ տեղը փոս թողնելով այնչափ, որչափ մաշւել է ոսկորը։ Իսկ եթէ հիւանդութիւնը առաջ գնայ, կարող է մորթը ծակւել և այն ժամանակ գլխի վրայ կը բացւի խոր ընկած սև վէրք։

Եթէ գումման գանգի ներսից է, միջի կողմից և այնտեղ էլ զարգանում է, աւելի լուրջ բարդութիւններ է առաջ բերում, որովհետև անմիջապէս սեղմում է ուղեղը, նրա մի մասը ոչնչացնում և բորբոքում։

ժամանակին վրայ հասնող և երկարատև բժշկութիւնը միայն այդպիսի դէպքերում կարող է փրկել մարդու կեանքը։

Նոյնը լինում է ողնաշարի ոսկորների հետ։

ՍՐՏԻ ԵՒ ԵՐԱԿՆԵՐԻ ԳՈՒՄՄԱՆԵՐ

Սրտի մկանունքները և այդ մկանունքներին սնունդ բերող երակը կարող են վնասւել գումմայից։ Եթէ սրտի մէջն է գումման—նշմարւում է սրտի գործունէութեան անկանոնութիւն, կարող է առաջանալ ժամանակի ընթացքում նաև սրտի պայթիւն։ Եթէ սրտի մկանունքներին սնունդ մատակարող երակն է վնասւում գումմայից, մկանունքները թուլանում են և սրտի ցաւեր է պատահում։

Հազւադէպ չեն գումմաները առանձնակի ուռուցքներով՝ բոլոր, մանաւանդ սրտի մօտ գտնւող երակների մէջ։ Այդտեղ նրանք զարգանում են, մեծանում և բարակացնում երակի պատը։ Երբ գումման անցնում է, բարակած երակի պատը արեան ճնշումից դուրս է պրծնում գրպանի նման (անէվրիզմա), գնալով հետզհետէ մաշւում է, նայած տեղին նոյն իսկ պատռւում է և մահւան պատճառ դառնում։

Փոքր, մանրիկ երակներից արժանի են ուշադրութեան գլխի ուղեղի երակները, որոնք չեն ճիւղաւորւած միւսների նման, այլ առանձնակի անցնում են դէպի ուղեղը և ամեն մէկ ուղեղի որոշ մասին արիւն մատակարարում։ Հեշտ է հասկանալ, որ երբ այդպիսի արեան երակի միակ անցքը գումման բռնում է և նեղացնում, նոյն իսկ փակում, ուրեմն և ուղեղի

որոշ տեղը սնունդից զրկւում է։ Աւելացրէք դրա վը-
րայ և այն, որ այս շրջանումն արտայայտւող ուղեղի
երակների կարծրութեան (սկլերօզը) շնորհիւ՝ հեշ-
տութեամբ են նրանք պատռւում, լուրջ բարդու-
թիւններ առաջացնում ուղեղի մէջ, յանկարծակի
մահւան և կաթւածի պատճառ դառնում։

ԳԼԽԻ ԵՒ ՈՂՆՈՒՂԵՂԻ
ԳՈՒՄՄԱՆԵՐ

Գլխի և մէջքի ուղեղների փառերը յաճախ են ծածկւում գումմաներով. մանաւանդ ուղեղի փառերը. իսկ ինքը ուղեղը մեծ մասամբ վնասւում է փառերի գումմաներից։

Ուղեղը ունի երկու փառ. մէկը դրսի, ոսկորի կողմից—կոշտ փառ, միւսը—քնքոյշ, բարակ կամ կակուղ փառ. սա ծածկում է ուղեղն անմիջապէս և մտնում է նրա ծալքերի մէջ։

Այս փառերի մէջ լինում են կամ տափակաձև, տարածւած գումմային կարծրութիւն և կամ առանձ-նակի գումմաների ուռուցքներ, որոնք կարող են հաս-նել ընկոյզի մեծութեան։

Եթէ գումմանները կոշտ փառի մէջ են գոյա-նում, նրանք զարգանում են, մեծանում, հասնում են ոսկրին, ուրեմն գանգին, ողնաշարին, կպչում են նրանց և ուտում։

Իսկ եթէ նրանք բարակ փառի մէջ են լինում—գնում են դէպի ուղեղը, սեղմում նրա որոշ մասը, հեշտութեամբ գրգռում են և բորբոքում։ Եթէ երկար

ՊԱՏԿԵՐ IX

Սիֆիլիսի երրորդ գումային շրջան

ԳԼԽԻ ԳՈՒՄՄԱ ԳԱՆԳԻ ՔԱՆԴՒԱԾՔՈՎ.

Լատ. Gumma capitis cum necros. os. frontalis.—*(Գումմա կապիտիս կում նէկրօզ. օս. ֆրօնտալիս)*

Բաւականի մեծ գումման-ուռուցքը գլխի վրայ բացւել է, խոր վէրք դարձել, քանդել է ոչ թէ միայն գլխի մորթը և նրա տակ գտնւող հիւսւածքի ու մկանունքների ու փառի բարակ շերտը, այլ և գանգի ոսկորը և ապառնում է ուղեղին։

ՏՊ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ

է տեւում նրանց ներգործութիւնը ուղեղի վրայ, նոյն իսկ ոչնչացնում է այդ մասը։

Ուղեղի այդ սիֆիլիսը արտայայտւում է գլխացաւով. եթէ ողնուղեղումն է՝ մէջքի ցաւով։ Ցաւում է որ և է սահմանափակ տեղ, կամ ամբողջ գլուխը. նոյնն է նաև ողնաշարի մէջ։ Ցաւերը սաստկանում են երեկոները։

Իբրև ուղեղի ճնշմանը հետևանք՝ յառաջանում է յանկարծական փսխումն, գլխի պտոյտ, ուշագնացութիւն, ձեռքերի և ոտքերի գալարումն (կուչ գալը)։ Երբ հիւանդութիւնը զարգանում է, սկսւում է զանազան տեսակի անդամալուծութիւն։

Գումմանները—ուռուցքները, ինչպէս երկրորդ շրջանում, նոյնպէս տարածւած են լինում մանաւանդ ուղեղի հիմքի, ներքևի մասի փառի մէջ և սեղմում են նաև ուղեղից այստեղ դուրս եկող և անցնող բազմաթիւ ջղերը, որոնց մասին արդէն յիշել ենք. այն է՝ տեսողութեան, լսողութեան, երեսի, զգացողութեան, շարժման։ Ուռուցքները խանգարում են նրանց գործունէութեանը այն աստիճանի, որ նոյն իսկ մարդ կորցնում է տեսողութիւնը և լսողութիւնը՝ երկրորդ շրջանում եղածից աւելի երկարատև և ծանր կերպով, յաճախ էլ ընդմիշտ։

Ողնուղեղի մէջ նոյն է պատահում, ինչ որ գլխի ուղեղում։ Այստեղ էլ գումմանները սկզբում ցաւեր են պատճառում։ Այնուհետև սկսում են ողնուղեղի հիւանդութեան արտայայտութիւնները,—ոտքերի և ձեռքերի թուլութիւն, մէջքի սեղմւելը (կարծես մէջքը գօտիով պինդ կապած լինի), միզասեռական անդամների թուլութիւն և այլն։

Գլխի ուղեղի սիֆիլիսից մեծ մասամբ առաջանում է միակողմանի, կէս մասի անդամալուծութիւն (մի կողմից ձեռն ու ոտքը). իսկ ողնուղեղից՝ համաչափ անդամալուծութիւն է պատահում, այն է՝ երկու ոտքերի կամ երկու ձեռքերի։

Անդամալուծութիւնները տեսակ-տեսակ են լինում, նայելով թէ ուղեղի որ մասն է վնասւում։

Անդամալուծութեան հետ միասին շատ անգամ թուլանում է նաև յիշողութիւնը, խօսելու, պարզ խօսելու, կուլ տալու և այլ ընդունակութիւնները։

Բացի դրանցից, գոյութիւն ունեն մի շարք ծանր ջղային հիւանդութիւններ, որոնք անուղղակի կերպով և որոշ չափով սիֆիլիսի հետևանք են. օրինակ՝ անբուժելի ընդհանուր առաջագնաց անդամալուծութիւնը (Paralysis progressivas), որի 95% պատճառը սիֆիլիսն է։ Զանազան տեսակի ողնուղեղի չորութիւն (Tabes dorsalis) 45—50%, ջղային խանգարումներ, մինչև իսկ խելագարութիւն։

Վերջին ժամանակներս շատ է պատահում առաջագնաց ընդհանուր անդամալուծութեան հիւանդութիւնը՝ մեծ մասամբ ծաղիկ, 25—30 տարեկան հասակում։ Շրջապատողների, մօտիկ անձնաւորութիւնների համար հիւանդութեան սկիզբը շատ անգամ աննկատելի է։ Հիւանդը փոխում է բնաւորութիւնը, հեշտութեամբ գրգռւում է, բարկանում, աստիճանաբար կորցնում է յիշողութիւնը և ընդունակութիւնները, սկսում է զանազան չափազանցութիւնների մէջ ընկնել, թուղթ խաղալ, աննպատակ ճանապարհորդութիւններ կատարել, կանանց ետևից ընկնել և այլն և այլն։

Շրջապատողները չը գիտեն ինչին վերագրել այդ փոփոխութիւնները, երբ մի գեղեցիկ օր ամեն ինչ արտայայտւում է հոգեկան հիւանդութեամբ։ Այն ժամանակ միայն պարզւում է մերձաւորների համար, թէ հիւանդի տարօրինակ գործողութիւնները նախաբանն էին մահացու հիւանդութեան։ Առաջին բռնկումից յետոյ, հիւանդը որոշ ժամանակ ցոյց է տալիս լաւանալու նշաններ։ Այդպիսի մի քանի փոքր ընդմիջումներով՝ հիւանդութիւնը տարէ ցտարի առաջ է գնում. այդ պատճառով էլ անւանւում է այդ հիւանդութիւնը՝ Ա ռ ա ջ ա գ ն ա ց։ Այնուհետև գալիս է անդամալուծութիւն և այդպէս, հիւանդութիւնը տևում է միջին թւով 3 տարի։ Մահը անխուսափելի է։ Ընդհանուր անդամալուծութեամբ հիւանդներին երկիւղալի է տանը պահել. գրգռման միջոցին կարող են վնասել շրջապատողներին։

Ողնուղեղի չորութիւնը (Tabes dorsalis), հակառակ առաջագնաց ընդհանուր անդամալուծութեանը, երկար տարիներ է տևում (նոյն իսկ 10—20 տարի)։ Հիւանդութիւնը սկսում է յաճախ ցաւերով։ Հիւանդը զգում է զանազան տեղերում—ոտքերում, մէջքում, կամ փորում և այլն, սուր ցաւեր։ Երկար ժամանակ այդ ցաւերը ընդունւում են, եթէ ոտքերումն է—իբրև ոտքերի րէվմատիզմ, քամի, եթէ ստամոքսումն է կամ աղիքներում—կատարի, (բորբոքման) նշաններ, և այլն։ Յետոյ, բաւական ժամանակ, տարիներ անցնելով, հիւանդը նկատում է խանգարումներ իր շարժողութեան մէջ. քայլելիս՝ կարծես թաղիքի վրայ է քայլում - ոտքերի տակը փափկու-

թիւն է զգում։ Շուտով նկատւում է ոտքերի մէջ թուլութիւն, չի կարողանում քայլել, ստիպւած է լինում հաւասարակշռութիւնը պահպանելու համար՝ ոտքերը լայն դնել, եթէ փակի աչքերը և կամ մութ սենեակի մէջ լինի՝ ճօճւում է, բոլորովին չի կարողանում քայլել և ցած է ընկնում. մէջքն էլ կարծես գօտիով սեղմւելիս լինի։ Տարիներ անցնելուց յետոյ, վրայ են հասնում միզասեռական, մարսողութեան և տեսողութեան գործարանների խանգարումներ։ Եթէ հիւանդը իրեն լաւ է պահում և բժշկւում է—ապրում է աւելի երկար։

Ուղեղի հիւանդութիւններից գլխաւորները նկարագրելով, կարելի էր էլի դեռ շատ հետևանքները թւել, բայց այսքանն էլ բաւական է ցոյց տալու համար, թէ սիֆիլիսի շնորհիւ մարդուս ուղեղը և նրա ամբողջ ջղային աշխարհը ինչպիսի ծանր հիւանդութիւնների են հանդիպում։

Ի Ր Ի Տ

Գոյութիւն ունի աչքի սիֆիլիսի մի արտայայտութիւն, որը հաւասարապէս յատուկ է թէ երկրորդ և թէ երրորդ շրջանին։ Նա կոչւում է լատիներէն Jritis syphilitica—Իրիտ։ Դա աչքի մի որոշ տեսակ բորբոքումն է։ Սիֆիլիսային իրիտը սկսւում է աչքի կարմրութեամբ. չնչին կարմրութիւնը հետզհետէ աւելանում է դանդաղ կամ արագ, կարծես աչքերը քօղով ծածկւած լինի. աչքի խորքի մասերը բորբոքւում են, միմեանց կպչում, հիւանդը համարեա ոչինչ չի տեսնում և եթէ օգնութեան չը հասնեն՝ կարող է բոլորովին կուրանալ։

ՀԱՄԱՌՕՏ ԱՄՓՈՓՈՒՄՆ ՍԻՖԻԼԻՍԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆՆԵՐԻ

Որքան հնարաւոր էր, ամփոփ կերպով տւինք սիֆիլիսի ընդհանուր վարակման երկու շրջանների արտայայտութիւնների նկարագրութիւնը։ Լրիւ չէ է հարկէ այդ ամենը։ Շատ մանրամասնութիւններ դիտմամբ բաց են թողնւած. տւած են միայն գլխաւորները և էականը։

Որքան սկզբում, այն է՝ երկրորդ շրջանում, սիֆիլիսը համեմատաբար թեթև հիւանդութիւն երևաց մեզ, (խօսքս բացառութիւնների մասին չէ), այնքան նա ծանրացաւ, երբ անցանք երրորդ շրջանի նկարագրութեան։

Այս տեսակէտից երկրորդ շրջանը կարելի է համարել ծանր դիպւածներ պատրաստող շրջան։

Եթէ հիւանդը այդ շրջանում չի աշխատում չէզօքացնել սիֆիլիսի մանրէներին և նրանց արտադրած թոյնը, եթէ նա միջոց է տալիս նրանց՝ մնալ իրենց թագստոցներում—ջղերում և ապագային գումմաներ արտադրել, կամ ուղեղի ծանր հիւանդութիւնների սկզբնապատճառ դառնալ,—այն ժամանակ սիֆիլիսը հանդիսանում է իսկապէս ամենածանր մի հիւանդութիւն, որ իսպառ քայքայում է կազմւածքը և վաղաժամ գերեզման է իջեցնում մարդուս։

ՍԻՖԻԼԻՍ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Սիֆիլիսը սկսւում է մի հասարակ վէրքով, շարունակւում է կազմւածքի ընդհանուր վարակումով, երկու շրջաններով։

Առաջին անգամին մարդու մտքովը անցնում է, թէ արդեօք հնարաւոր չէ՞ սիֆիլիսի մանրէների, սպիրոխէտների սկզբնական բունը, վէրքը քանդել, կտրել, բոլորովին հեռացնել և ազատել կազմւածքը ընդհանուր վարակումից։ Փորձել են, բայց դժբախտաբար ապարդիւն է եղել այդ։ Ընդհանուր վարակումը, չընայած կտրելուն, իր ժամանակին գալիս է: Դա հասկանալի է այժմ, քանի որ մեզ յայտնի է, թէ կոշտ շանկրի երեւան գալու հետ՝ գտնւում են սիֆիլիսի մանրէներ աճուկների խուլերում և արիւնի մէջ էլ։

Վէրքը, կոշտ շանկրը, երևալուց մէկ ամիս կամ քիչ աւելի անցած՝ վրայ են հասնում սիֆիլիսի երկրորդ շրջանի արտայայտութիւնները։ Առաջուց անկարելի է լինում գուշակել, թէ ինչ տեսակ և որտեղ կը լինեն այդ արտայայտութիւնները, այսինքն դուրս տւածները։ Գիտենք միայն, որ մարդուս կազմւածքի իւրաքանչիւր հիւսւածքը, իւրաքանչիւր մասը կարող է ենթարկւել սիֆիլիսի։ Շատ անգամ դուրս տւածները թոյլ են լինում, հազիւ նկատելի և երբեմն էլ ընդհակառակը։

Մարդուս բնական ոյժի, այլ և լաւ բժշկութեան միջոցով՝ կարելի է անհետացնել սիֆիլիսի այդ բորբոքումը։ Պատահում է, որ այլևս ոչինչ չի երևում, բայց աւելի յաճախ հիւանդութիւնը կրկին է երևան գալիս, վերանորոգւում է։ Սիֆիլիսի մի քանի մանրէները մնում են, թագնւում։ Այժմ պարզւած է, որ սիֆիլիսի դուրս տւած տեղերում, չընայած սիֆիլիսի արեան հակաթոյնին, այլև բժշկելուն, սպիրոխէտները տեղ-տեղ կարող են մնալ և ծածկւել։ Յետոյ, ժամանակի ընթացքում, երբ արեան մէջ սիֆիլիսի հակաթոյնի պաշարը պակասում է, այդ թագնըւած սպիրօխէտները նորից աճում են, զարգանում և այդպէս, 2—3 կամ աւելի ամիսներ անցնելուց յետոյ, նորից անցնում—տարածւում են արեան մէջ և նորից երևան հանում սիֆիլիսային արտայայտութիւններ։ Հիւանդութեան այս կրկնողութիւնները յիշեցնում են Կովկասի ջերմը, դողէրոցքը (ջերմուտենդը), որ պայմանաւորւում է նոյնպէս ջերմ առաջացնող մանրէների (պլազմօդիաների) բազմանալով և արիւնի մէջ մեծ քանակութեամբ երևալովը։

Սիֆիլիսի այդ վերերևումը երկրորդ շրջանի ընթացքում՝ կարող է մի քանի անգամ պատահել։

Յաճախ դրանով էլ վերջանում է հիւանդութիւնը։ Բայց տարաբաղդաբար լինում են դէպքեր, երբ սիֆիլիսի մանրէները (սպիրօխէտները) շատ կենսունակ են լինում, կազմւածքը բնութիւնից կամ ուրիշ պատճառներից թոյլ է, բժշկութիւնը թերի է կամ բոլորովին չը կատարւած, և այդպիսի դէպքերում հիւանդութիւնը, տարիների ընթացքում մնում է ծածկւած. մնացած սիֆիլիսի մանրէները, փոխելով իրենց բնոյթը գուցէ շնորհիւ արեան մէջ գտնւող սիֆիլիսի հակաթոյնի, իրենց գործն են կատարում։ Սիֆիլիսից երակների կոշտացման հետ՝ առաջ են գալիս երրորդ շրջանի գումմային արտայայտու-

թիւնները, որոնք սիֆիլիսին տւել են անբուժելի հիւանդութեան հուչակ։

Մեծ մասամբ այդպէս է սիֆիլիս հիւանդութեան ընթացքը: Բայց կան դէպքեր, որոնք հէնց սկզբից ծանր են և չը նայած բժշկութեան՝ շուտով են հասցընում գումմային շրջանին, անդամալուծութիւնների և այլն։ Բայց դրանք բացառութիւններ են և չեն կարող օրինակ լինել։

ՍԻՖԻԼԻՍԻ ՎԱՐԱԿԻՉ ՇՐՋԱՆԸ

Կոշտ շանկրի և երկրորդ շրջանի ընթացքում, երբ սիֆիլիսի մանրէները վխտում են արտադրութիւնների մէջ, հիւանդութիւնը վարակիչ է։ Այդ միջոցին է որ վարակւածը իր կոշտ շանկրի դուրս տւածների և կամ արիւնի միջոցով՝ հեշտութեամբ կարող է վարակել ուրիշին։

Երրորդ շրջանը վարակիչ չի համարւում, կամ, աւելի է ճիշտն ասած, շատ դժւար, հազւադէպ վարակիչ է․ այնպէս որ բժիշկները հիւանդութեան սկզբից 3—5 տարի անցնելուց յետոյ, թոյլ են տալիս նոյն իսկ ամուսնանալու։ Ուրեմն, միջին թւով, հիւանդութեան սկզբից հաշւած՝ երեք տարի է վարակիչ շրջանը սիֆիլիսի համար։

Այդ ժամանակւայ ընթացքում պիտի վարակւածը իրեն զգոյշ պահի և չ'ամուսնանայ, հակառակ դէպքում կարող է նա վարակել ուրիշների, ամուսնուն, այլև ունենալ ժառանգական սիֆիլիսով վարակւած սերունդ։

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍ

Երբ ծնողներից մէկը կամ երկուսն էլ գտնւում են սիֆիլիսի վարակիչ շրջանում, նրանցից ծնւած երեխան, մեծ մասամբ մօր արգանդում իսկ հիւանդանում է սիֆիլիսով։ Կոչւում է դա—ժառանգական սիֆիլիս:

Շատ քիչ մարդ կը գտնւի, ես գոնէ չեմ տեսել, որ ունենալով սիֆիլիսի ակնյայտնի դուրս տւածներ և արտայայտութիւններ, գիտակցաբար պսակւի և վարակի կնոջն ու իր սերունդը:

Համարեա միշտ պատահում է այնպէս, որ հիւանդը մէկ կամ մի քանի անգամ իրեն ենթարկած լինելով բժշկութեան, երկար ժամանակ, ըստ իր հասկացողութեան, (ոչ 3 տարի) չի նկատում ոչ մի նշան և իրեն համարում է բոլորովին առողջացած, ու պսակւում է։

Հետևանքը յայտնի է։

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍԻՑ ՊԱՀՊԱՆՒԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Սիֆիլիս ունեցած մարդը եթէ մտադիր է պսակւել, պէտք է շատ խստապահանջ լինի դէպի իր առողջութիւնը:

Պրոֆեսոր Ֆուրնիէի վիճակագրութեան համաձայն՝ սիֆիլիսով վարակւած 5 կանանցից մէկը հիւանդանում է իր ամուսնուց։ Մեզ մօտ հազւադէպ չեն վարակւումները ամուսնական կեանքում: Միայն

խնամքով ամեն ինչ ծածկւում է և վիճակագրութեան չի ենթարկւում։

Հարկաւոր է, վարակման թոյնը չէզօքացնելու համար, սպասել՝ ինչպէս ասել ենք 3 տարի միջին հաշւով։ Ամուրի մնացողների ձեռքին է վարակումը չէզօքացնող ժամանակը։ Բայց չը պէտք է այդ կողմից շատ էլ չափազանցութիւնների մէջ ընկնել, սիֆիլիսի պատճառով բոլորովին չ'ամուսնանալ, ինչպէս շատերն են անում։ Ուրեմն, որոշ ժամանակից— և դրան աւելացնենք լաւ բժշկւելուց—յետոյ, ամեն ոք իրաւունք ունի պսակւել առանց վախի։

Միայն այդպիսին չը պէտք է մոռանայ այն փաստը, որ մարդու ամորձիքներում ամենից երկար է պահւում սիֆիլիսի թոյնը, սպիրօխէտը. ինչպէս երևում է, սիֆիլիսի մանրէների համար այդ տեղը յարմար թագստոց է։ Նկատուած է որ սերմը իր մէջ պահպանում է վարակող ընդունակութիւն բաւական երկար, երբեմն մինչև 10—14 տարի անգամ։

Վարակման ընդունակութիւնը չէզօքացնելու միջոցներն են ուրեմն, առաջին—ժամանակը։ Պէտք է անցնեն սիֆիլիսի առաջին և երկրորդ շրջանների ժամանակամիջոցը, որ միջին թւով 3 տարի է։ Երկրորդ միջոցն է—կատարեալ և լաւ բժշկութիւն սիֆիլիսի առաջին (կոշտ շանկրի) և երկրորդ շրջանի, որը տևում է նոյնպէս միջին թւով 3 տարի.

Երրորդ միջոցը—անմիջապէս պսակւելուց առաջ նորից մաքրել իրեն. այն է՝ ենթարկել իրեն բժշկութեան, նոյն իսկ եթէ ժամանակին լաւ բժշկւած էլ լինի, նոյն իսկ եթէ անցած էլ լինի 5—10

տարի հիւանդութեան սկզբից։ Աչքի առաջ պիտի ունենալ այն հանգամանքը, որ սերմի մէջ սիֆիլիսի մանրէները երկար են ապրում։

Կարելի է նաև, և կարևոր է, քննել արիւնը Վասսերմանի եղանակով, և իմանալ թէ պսակւողի արեան մէջ կա՞յ արդեօք սիֆիլիսի թոյնը։ Եթէ ստացւեց դրական հետևանք, պիտի աւելի ևս հարկադրել բժշկւելու։ Ամենից լաւն է, իհարկէ, որ այդ ծանրակշիռ հարցը քննէ և կարևոր որոշումը տայ բժիշկը։

Բոլոր պահանջերը կատարելուց յետոյ միայն, հիւանդը բարոյական իրաւունք կունենայ ամուսնալու։ Հակառակ դէպքում նա, ինչպէս ասինք, իրեն կը մատնէ պատահականութեան և կարող է դառնա դժբաղդ ամուսին, վարակւած զաւակների հայր։

Պէտք է աւելացնել նաև, որ ոչ մի հիւանդութիւն, ոչ մի դժբաղդութիւն այնքան չի կործանում և վիրաւորում ընտանեկան սիրոյ ներդաշնակութիւնը, որքան սիֆիլիսը։

ԲԺՇԿԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Կան անձնաւորութիւններ, որոնք անգիտակցաբար, շատ անգամ ագիտութիւնից, իրենց ընտանիքի մէջ են մտցնում սիֆիլիսը։ Այդ դէպքերի առաջն առնելու համար է սահմանւած մեր եկեղեցու նոր օրէնքը—պսակւողից պահանջել բժշկական վկայական առողջութեան մասին։ Քանի որ մեզանում ամուսնութեան արտօնութեան իրաւունքը գտնւում է դեռ ևս հոգևոր իշխանութեան ձեռքում, երախտապարտ պէտք

է լինել նրա արժանաւոր ներկայացուցիչների յիշատակի առաջ—Խրիմեան Հայրիկի և Ա. եպ. Սեդրակեանի, որոնք հասկացան ժամանակի պահանջը և այդ օրէնքով բաւարարութիւն տւին նրան։ Դրանով նրանք աշխատեցին պահպանել ընտանեկան բաղդաւորութեան էական պայմաններից մէկը—նրա առողջութիւնը։ Սակայն շատ անգամ լաւ օրէնքը, ունենալով իր ներքին լաւ նպատակը, առօրեայ կեանքի մէջ դառնում է ձևականութիւն, որ և տալիս է զէնք հակառակորդներին։ Այս օրէնքի ճշգրիտ գործադրութեանը առթիւ, կը ցանկայինք, որ թէ քահանաները և թէ բժիշկները լինէին միշտ խստապահանջ և իրանց կոչման բարձրութեան վրայ։

Պէտք է ցաւել միայն, որ այս օրէնքը գործադրւում է ոչ ամեն տեղ, այլ քաղաքներում միայն։ գիւղերին նա չի վերաբերում։

Քաղաքի բնակչութիւնը քիչ թէ շատ գիտակից է։ Եթէ մենք ենթադրում ենք, որ տգիտութիւնից որև է քաղաքացի կարող է պսակւել և անգիտակցաբար վարակել իր ամուսնուն սիֆիլիսով և եթէ դրա համար բժշկական վկայական ենք պահանջում, միթէ միևնոյնը չի՞ անի աւելի հեշտութեամբ գիւղացին, որ աւելի յետամնաց է։

Ռուսաստանի գիւղացիները, մենք տեսանք, որ աւելի մեծ տուրք են տալիս սիֆիլիսին, քան քաղաքացիները։ Մենք պատկերացնում ենք մեր գիւղերի հին նահապետական կեանքը և մաքրութիւնը, բայց մոռանում ենք, որ կարիքը, հողի սակաւութիւնը և այլն, ստիպում են մեր գիւղացուն և նրա երիտասարդներին՝ գաղթել ու լցւել քաղաքները։

Իսկ զինւորագրութի՞ւնը. եթէ ենթադրենք որ բոլորը գիւղերից չեն գնում քաղաք բանւորութեան, չէ՞ որ ամեն գիւղ տալիս է որոշ քանակութեամբ զինւոր։

Թէ առաջինները և թէ երկրորդները քաղաքացու նման կեանք են վարում այն հասակում, երբ ամենից շատ կարելի է վարակւել սիֆիլիսով։

Բանւորները և զինւորները տարիներ ամբողջ ապրելով քաղաքներում, վերադառնում են իրենց տները։ Եթէ դեռ ամուրի են, ծնողների առաջին գործն է լինում պսակել նրանց։ Ի՞նչպէս ուրեմն պահպանել և փրկել գիւղի ընտանիքը վարակումից։

Այստեղ մենք կանգնած ենք մի տխուր իրողութեան հանդէպ։ Գիւղը զուրկ է բժշկից։ Շատ էլ պահանջէք, ո՞ւմ դիմի խեղճ գիւղացին.., ումի՞ց վերցնի պահանջած վկայականը...

Ըստ երևոյթին սա հեշտ լուծելի հարց չէ։ Ստիպել գիւղացուն պսակւելուց առաջ գնալ քաղաք՝ վերցնելու բժշկական վկայական, շատ դժւար է այդ, ծանր ծախսի առիթ գուցէ և մի նոր աղբիւր նրան շահագործելու...

Բայց չէ՞ որ նոյն գիւղացին, պսակւելուց առաջ շատ յաճախ գնում է քաղաք՝ պսակի համար զանազան անհրաժեշտ իրեղէններ գնելու։

Վերջապէս, եթէ այս էլ չը լինի, ո՞րն է աւելի թանգ.—ընտանիքի առողջութի՞ւնը, թէ՞ մի քանի, թէկուզ դժւարութեամբ ձեռք բերած րուբլիներ։

Վերջապէս բացի քաղաքից, կան նաև մօտիկ, շրջանային բժիշկներ, որոնց գուցէ աւելի դիւրութեամբ կարող է դիմել գիւղացին։

Իսկ բանւորները և զինւորները, որոնք գլխաւորապէս գիւղի մէջ սիֆիլիսի տարածողներն են, ամենայն դիւրութեամբ կարող են այդ պահանջը կատարել, տուն վերադառնալիս բժշկական վկայական վերցնելով։

Ամեն կողմից քննելով այս հարցը, դժւար է լուրջ արգելքներ գտնել նրա գործադրութեան համար գիւղի վերաբերմամբ։ Միայն թէ ցանկութիւն լինի մեր բանիմաց մասից և կոնսիստորեաներից՝ այդ գործը գիւղացուն յարմար կազմակերպելու։

Գիւղացիները գուցէ աւելի կարօտ են այդ վկայականներին, քան թէ քաղաքացիները։

Սպասենք և յուսանք, որ այդ լաւ օրէնքի միակողմանութիւնը կը վերացւի։ Իսկ մեր միւս, Թիւրքաց-Հայաստանի և Պարսկաստանի հայերին ցանկանում ենք տէր լինել իրաւական և կուլտուրական այնպիսի բարեկեցութեան, որ այնտեղ ևս հնարաւոր լինի մտցնել այդ լաւ օրէնքը և ծառայեցնել նրան մեր ցեղի բարելաւութիւն օգտին։

ՊԱՏԿԵՐ X և XI



ժառագական սիֆիլիս

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍ ՈՒՆԵՑՈՂԻ.—ԹԱՄԲԱՆՄԱՆ ՔԹՈՎ

Լատին. Syphilis hereditaria—(*Սիֆիլիս հէրէդիտարիա*)։

Այսպիսի քիթ ստացւում է շատ վաղ, երբ ժառանգական սիֆիլիս ունեցողի քթի ոսկորները փտսւում են. մի մասը նոյն իսկ ոչնչանում։

Ցածում կաննկարւած ժառանգական սիֆիլիսին յատուկ «Հուչինսոնի ատամները»։ Ատամների վերևի ծայրերը կիսալուսնի կամ սղոցանման տեսք ունեն։

Այս ձևը մնում է երկար, մինչև մօտաւորապէս 25 տարեկան հասակը, յետոյ մաշւում, ծայրերը հարթանում են, որից և ատամները կարճանում են։

ՏՊ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ

IV

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍ

Սիֆիլիսից վարակման դէպքեր դժբախտաբար տեղի են ունենում դեռևս ընտանիքներում. և քանի որ այդ այդպէս է, հետևանքներն են ուրեմն ժառանգակոն սիֆիլիս ունեցող երեխաների ծնունդը։ Ընտանեկան կեանքում, վարակողի դերը, ամենաչընչին բացառութեամբ, կատարում է տղամարդը։ Եթէ սիֆիլիսից։ երևոյթով առողջացած տղամարդի կամ նրա սերմի մէջ դեռ ևս գտնւում է սիֆիլիսի թոյնը—սիֆիլիսի մանրէները,—այն ժամանակ վարակումը մեծ մասամբ կատարւում է յարաբերութեամբ, սերմի միջոցով։ Նախ հիւանդանում է սաղմը—երեխան ապա և մայրը, կամ ընդհակառակ։ Առաջին դէպքում, մօտաւորապէս յղիութեան 3—4 ամսին, մայրը զգում է սաստիկ գլխացաւ, թափւում են գլխի մազերը և յօնքերը, յետոյ երևում են սիֆիլիսից դուրս տւածներ կաշւի, լուշաթաղանթի վրայ։ Իհարկէ վարակման ժամանակը և նշանները տարբեր են լինում։ Հիւանդ սաղմը, որից վարակւում է մայրը, ինքն էլ առողջ չէ։

Սաղմը արգանդում գտնւում է ձուի նման կեղևի մէջ։ Երեխայի այդ „բունը“ մի կողմով ագատ է,

իսկ միւսովը կպած է զաւակատան ներսի պատին, որ հաստ է և ամենաէական նշանակութիւն ունի սաղմի զարգացման համար։ Այդտեղ են գտնւում ահագին քանակութեամբ արեան երակներ, որոնք սերտ շփման մէջ են մօր երակների հետ, և որոնց միջոցով սաղմը ստանում իրեն անհրաժեշտ սնունդը։ Նրանով է զարգանում սաղմը, երեխայ է դառնում և ապրում։

Սիֆիլիսը հէնց այդ էական մասն է փչացնում։ Այդտեղ ժողովւում են սիֆիլիսի մանրէներ, կուտակւում են արեան գնդակները, կոշտանում՝ սեղմւում են երակները, որից թէ սաղմը և թէ «երեխայի բունը» զրկւում են սնունդից։ Քանի երակները ծակւում են և պատռւում, երեխայի բունը այնքան մաս մաս զրկւում է հիմքից։ Այդ միջոցին մայրը մէկ-մէկ արիւնհոսութիւն է նկատում արգանդից, զաւականից։ Վերջ ի վերջոյ սաղմը սնունդից կտրւում է բոլորովին. հետևանքը լինում է վիժումն, որ այնքան յաճախ պատահում է 3—4 ամսւայ յղիութեան ժամանակ։ Այսպիսով, վիժումների 35—40$^0/_0$ տոկոսը պէտք է վերագրել սիֆիլիսին։

Եթէ միջոցներ ձեռք չեն առնւում, յաջորդ վիժումները պատահում են աւելի ուշ,—մօտաւորապէս 5—6 ամսւայ յղիութեան ժամանակ. յետոյ վերջապէս 7—8 ամսւայ վրայ ծնւում է վաղաժամ, մեռած երեխայ, իսկ աւելի ուշ—ժամանակին (9 ամսւայ) է ծնւում երեխան, բայց կամ մեռած է լինում և կամ այնքան թոյլ, որ մի քանի ժամ, մի քանի օր է միայն ապրում։

Վիժումից և օրպակաս ծնունդից առաջացած երեխաների կորստեան 82$^0/_0$-ը ծնողների սիֆիլիսի արդիւնքն է։

Տարիներ անցնելուց յետոյ, սիֆիլիսի թոյնը և նրա ազդեցութիւնը թուլանում է ժառանգութեան համար։

Պատահում է որ սիֆիլիսոտ երեխան կենդանի է ծնւում՝ կրելով իր վրայ սիֆիլիսի նշաններ։ Այդ նշանները կարող են երևալ նաև ծնւելուց յետոյ, շատ ժամանակ չ՚անցած։ Կան հազւագիւտ դէպքեր, երբ ժառանգական սիֆիլիսը ուշ է արտայայտւում, մօտաւորապէս 10 տարեկան հասակում, կամ ամենաուշը, հասունութեան մօտենալիս՝ 18—20 տարեկան հասակում։

Այստեղ մենք օրինակ բերինք երբ մայրը սաղմի—երեխայի միջոցով է վարակւում։ Այս շրջանում կարող են զանազան դիպւածներ պատահել, որոնց գիտենալն աւելորդ չէ։

Կարող է լինել, նախ քան յղիանալը, ինքը վարակւել և յետոյ միայն վարակել սաղմին—երեխային։

Հօր սիֆիլիսը միշտ չի անցնում ժառանգի վրայ։ Պատահում է որ հայրը, ունենալով սիֆիլիսի ակընյայտնի դուրս տւածներ, այնուամենայնիւ չի վարակում ոչ կնոջը, ոչ ժառանգին։

Սա բացառութիւն կարելի է համարել. բայց եթէ մենք յիշենք որ կազմւածքում սիֆիլիսի մանրէների տարածւելը պատահական է, կ՚հասկանանք որ նրանք (սպիրոխէտներ) կարող էին պատահմամբ սաղմի մէջ չը մտնել և որոշ ժամանակ սաղմը կարող էր մաքուր մնալ, չը նայած որ միւս մասերն արդէն վարակւած են։

Իհարկէ այդ դէպքում պատահմամբ երեխան էլ, մայրն էլ կարող են առողջ մնալ։ Բայց սրա վրայ յոյս դնել չի կարելի։

Մօր սիֆիլիսը համարեա միշտ անցնում է զաւակին։ Վերոյիշեալ պատահականութիւնները հազուադէպ են, քանի որ նրա կապը երեխայի հետ աւելի սերտ է և տևական, ուրեմն և աւելի հաւանական է որ մանրէները կանցնեն երեխային՝ դեռ մօր արգանդում եղած ժամանակ։

Պատահում են և այսպիսի հետաքրքրական դէպքեր.—հայրը հիւանդ է սիֆիլիսով, ծնւում է հիւանդ երեխայ, իսկ մայրը չի հիւանդանում, չունի սիֆիլիսի և ոչ մի նշան։

Մայրը սկսում է կերակրել, ծիծ տալ հիւանդ երեխային և էլի չի վարակւում. իսկ եթէ նոյն երեխային տալիս են առողջ ծծմօր՝ կերակրելու համար, ծծմայրը իսկոյն վարակւում է։

Մի ուրիշ դէպք։ Մայրը հիւանդ է սիֆիլիսով, ծնւում է առողջ երեխայ. այդ երեխան կերակրւում է իր հիւանդ մօր ծծով և չի վարակւում։ Ըստ երեւոյթին այսպիսի առողջ մօր երեխայի նկատմամբ պէտք է ենթադրել, որ սիֆելիսի թոյնը նրանց արիւնի մէջ է մտել, այնտեղ զարգացել է սիֆիլիսի հակաթոյն, որ և սիֆիլիսի վարակումից ապահովացրել է նրանց։ Որ այդպիսի՝ իբր թէ առողջ մնացածները, [իսկապէս] ունեն գաղտնի սիֆիլիս,—հաստատում են նորագոյն հետազօտութիւնները։ Բացւել է որ այդպիսիների արիւնը, Վասսերմանի եղանակով քննած, պարունակում է իր մէջ սիֆիլիսի թոյն։

Այդ պատճառով, գաղտնի սիֆիլիս ունեցած դէպքերում, չը նայելով որ սիֆիլիսի նշաններ բացակայում են, աւելի լաւ է բժշկել, որպէս զի ապագայում ոչինչ չը պատահի։

Այս դէպքերը շատ տարօրինակ են և կարելի էր էլի նման օրինակներ բերել։

Մէկ բան միայն հաստատապէս պէտք է ընդունել, որ եթէ ամուսիններից մէկը կամ երկուսն էլ մի ժամանակ ունեցել են սիֆիլիս և կինը վիժում է, կամ մեռած երեխաներ է ծնում, կամ եթէ վիժումները անհասկանալի և կասկածելի են թւում, պէտք է երկու ամուսիններին էլ ենթարկել բժշկութեան։

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ժառանգական սիֆիլիսի արտայայտութիւնները այնպէս յաջորդաբար չեն հետևում իրար՝ ինչպէս վերևում նկարագրել ենք։ Պզուկների և զումմային շըրջանները խառն են և հէնց սկզբից կարող են ուղղակի զումմաններով արտայայտւել։

Կարող է պատահել, որ շնորհիւ բժշկութեան կամ ուրիշ պատճառների, մէկ-երկու առողջ երեխաներ ծնւեն, իսկ յետոյ էլի սկսւեն վիժումները, հիւանդ երեխաների ծնունդ։

Այդպիսի դէպքերում նորից պիտի դիմել բժշկութեան, որի շնորհիւ կը դադարեն վիժումները և կը ծնւեն առողջ երեխաներ։ Հակառակ դէպքում յաճախ կենդանի մնացածն էլ լինում է սիֆիլիսով հիւանդ, թոյլ և թշւառ մի արարած։

Բացի այս, ժառանգական սիֆիլիսի արտայայտութիւնները էլի փոքր ինչ տարբերւում են սովորական սիֆիլիսից։

Նախ բացակայում է կոշտ շանկրը, յետոյ՝ բուբոնները, խուլերի ուռուցքը։

Վերջիններիս բացակայութիւնը բացատրում են նրանով, որ երեխան ստանում է սիֆիլիսը արգանդում այն ժամանակ, երբ խուլերը դեռ զարգացած չեն։

Հիւանդ, սիֆիլիսոտ երեխան ամենից առաջ աչքի է ընկնում նիհարութեամբ. մորթը չոր է, գունատ և կնճիռներով լի, մանաւանդ երեսը, այնպէս որ կարծես ծեր մարդու դէմք լինի։

Բնորոշ է, որ բերանի շուրջը փոքրիկ վէրքեր կան, որոնք յետոյ լաւանում են և սպի թողնում։

Քթի հարբուխը լինում է հէնց սկզբում. քթից ջուր է գալիս առաջ, իսկ յետոյ թարախանման հիւթ, որը փակում է փոքրիկի քիթը և խանգարում է երեխային կաթ ծծել։ Երեխան հէնց որ սկսում է ծիծը բերանն առնել, իսկոյն ստիպւած է լինում թողնել, որովհետև շունչը կտրւում է։

Դրան շուտով աւելանում են սիֆիլիսից՝ բերանում դուրս տւածները, որոնք աւելի ևս խանգարում են երեխայի սնունդը։ Այդ դուրս տւածները շուտով վէրքեր են դառնում և ցաւում են. ծիծ ուտելիս՝ շնչարգելութիւնից երեխան թողնում է մօր ծիծը և ստիպւած են լինում գդալով կերակրել նրան։

15 օրից յետոյ, կամ 2—3 ամիս անցած, երեսի, ոտքերի, ձեռքերի, յետոյքի և այլ տեղերում մորթի վրայ դուրս են գալիս սիֆիլիսի պզուկներ։ Պատահում են երբեմն այնքան, որ միանում են իրար, հաստանում մանաւանդ ծալքերի մէջ և կոշտանում, կապոյտ գոյն ստանում ու արտադրում են ջրի նման մի հիւթ։

Սիֆիլիսի պզուկները երեխաների մօտ դուրս են տալիս մորթու վրայ ևս առանձնակի։ Պէտք է ասել, որ երեխաններին բծաւոր սիֆիլիդ քիչ է պատահում։ Սիֆիլիսի պզուկները ենթարկւելով յաճախ երեխայի բնական արտադրութիւններին, գրգռւում են և ստանում թաց պզուկների բնաւորութիւն, թացակալւում են։

Երեխայոց մանաւանդ ձեռքերի և ոտքերի ափերի մէջ, սիֆիլիսի պզուկները յաճախ լցւում են դեղին ջրով կամ թարախով, երբեմն արիւնախառն։ Դրանք շատ նմանում են ջրծաղիկին։ Երկար չեն մնում այդ բշտիկները. մօտաւորապէս 1—2 օրից յետոյ փլւում են. բացւում է վէրք, որին և ծածկւում է շուտով չորացած կեղև։

Ոտքերի տակ և ձեռքերի ափերի մէջ մորթը սիֆիլիսից կարմիր գոյն է ստանում և կարծես, լաքով ծածկւած լինի, պսպղում է. դա էլ բնորոշ է երեխայոց սիֆիլիսի համար։

Սիֆիլիսից յատկապէս վնասւում են երեխաների ոսկորների ծայրերը։ Դա շատ նման է ռախիտին — անգլիական հիւանդութեան, որ այնքան յաճախ է պատահում երեխաներին՝ վատ սնունդից։ Սիֆիլիսից երեխաների ոսկորների ծայրերը ուռչում են և ցաւում այնքան, որ երեխան չի կարողանում շարժւել։ Բացի ծայրերից, վնասւում են նաև երկար ոսկորները, գլխի տափակ ոսկորները և նրանց փառերը։

Այստեղ կարող են լինել և ժահրակալած բոր-

բորբոքումներ և գումմաներ, որոնք ուտում են ոսկորները։

Կապերի (յօդերի), մանաւանդ մատների մէջ, կարող են գոյանալ թարախ արտադրող յօդերի բորբոքումներ։ Ոսկորների և յօդերի այդ ցաւերը կարող են ամիսներ, նոյն իսկ տարիներ տևել և մաշել երեխային։

Քթի այլանդակութիւնից էլ ազատ չէ այդպիսի երեխան հէնց փոքրութիւնից, եթէ հիւանդանում են և վնասւում քթի ոսկորները։

Երեխաների ներքին գործարանների մէջ ամենից շատ վնասւում են նրանք, որոնք սնունդի հետ են կապւած. այսինքն մարսողութեան գործարանները։

Առանձնապէս աչքի են ընկնում սիֆիլիսոտ երեխաների ատամները։—Գոյնը մոխրագոյն, դուրս են գալիս ուշ, անկանոն և յաճախ դժւարութեամբ. ծայրերը, մանաւանդ վերին շարքի առաջի ատամներից երկուսը կամ չորսը, ունին սղոցի բերանի կամ կիսալուսնի տեսք։

Երեխայի ստամոքսն էլ կանոնաւոր չէ, մարսողութիւնը խանգարւած, շարունակ փորլուծութիւն, որ չը նայած գործադրած բոլոր միջոցներին, չի անցնում։ Այս փորլուծութիւնը յաճախ առաջանում է աղիքների միջի փոքրիկ գումմաներից։

Պատահում է, որ երեխաների կոշտ քիմքը գումմայից ծակւում է մեծերի նման։ Դա խանգարում է երեխաների սննդառութեանը, ուրեմն և աճմանը։

Լեարդը շատ է ենթարկւում սիֆիլիսին։ Սիֆիլիսից վախճանւած նորածին երեխաների լեարդերը լիքն են լինում սիֆիլիսի մանրէներով—սպիրոխէտներով։ Վասսերմանի եղանակով քննելու համար գործածւող սիֆիլիսի հիւթը վերցնում են այդպիսի լեարդերից։ Այդտեղ գտնւող սպիրօխէտները բորբոքում են լեարդը, մեծացնում, կոշտացնում կամ զարգացնում են գումմաներին։ Հետևանքը լինում է սիֆիլիսային դեղնութիւն և ջրգողութիւն։ Այդպիսով էլ իսպառ խանգարւում է երեխայի սնունդը, որի հետ կապ ունի լեարդը։

Շնչառութեան գործարաններից, բացի քթից, վնասւում են երեխայի թոքերն էլ աւելի յաճախ, քան թէ մեծերինը։

Քննութիւնը ցոյց է տալիս, որ մեռած երեխաների մեծ մասի մահւան պատճառը՝ թոքերի բորբոքումն է լինում։

Կենդանի մնացածների մէջ դա յաճախ է պատահում, միայն թոքերի այդ բորբոքումը դանդաղ ընթացք ունի. թոքերը կոշտանում են, իրենց ճկունութիւնը կորցնում։ Եթէ պատահմամբ այդ երեխաները ողջ են մնում, նրանք շուտով, չնչին պատճառից, զոհ են դառնում այս կամ այն հիւանդութեան, մանաւանդ թոքերի։

Առանձին ուշադրութեան արժանի են սիֆիլիսից առաջացած մի շարք ջղային հիւանդութիւններ:

Ժառանգական սիֆիլիս ունեցող երեխաները մեծ տոկոսով ապուշներ են տալիս, ուշ են զարգանում,

ընդունակ չեն լինում։ Երեխաների թէ գլխի և թէ մէջքի ուղեղ՚ները իրանց փառերով՝ կարող են վնասուել այնպէս, ինչպէս մեծերինը։ Յաճախ մանաւանդ երեխաներին պատահում է գլխի ջրգողութիւն։ Որովհետև գլխի, գանգի ոսկորները դեռ միմեանց հետ այնպէս սերտ չեն կպած, ինչպէս հասակաւոր մարդկանցը, այդ պատճառով էլ գլուխը մեծանում է և լաւ նկատելի է դառնում նրա մէջ ջրի գոյութիւնը։ Դուրս էք հանում, բայց թողնում այդ ջուրը, բայց շուտով նա կրկին լցւում է։ Բարեբաղդաբար այդպիսի հիւանդների մեծ մասը մեռնում են։

Եթէ երեխաների ուղեղում բուն է դնում սիֆիլիսի մի որևէ արտայայտութիւն, հեշտութեամբ մեծ վնասներ է տալիս.— առաջանում են գալարումներ, անդամալուծութիւն, համրութիւն, խուլութիւն, կուրութիւն։

Սիֆիլիսոտ երեխան եթէ մեծանայ, կարող է դարձեալ, սիֆիլիսի հիմքի վրայ, ջղային զանազան հիւանդութիւններ ունենալ. օրինակ՝ ընկնաւորութիւն (Epilepsia), ընդհանուր առաջդիմող անդամալուծութիւն և այլն։

Երեխաները առհասարակ շատ դժւար են դիմանում սիֆիլիսին։ Փորձերը ցոյց են տալիս, որ Վասսերմանի եղանակով այդպիսի երեխայոց քննած արիւնի մէջ դեռ երկար ժամանակ էլի գտնւում է սիֆիլիսի թոյն, նոյն իսկ բժշկութիւնից յետոյ էլ։ Այդ եղանակով՝ սիֆիլիսի թոյն գտնում են նաև այն երեխաների արիւնում, որոնք երկար տարիներ սիֆիլիսի նոյն իսկ արտաքուստ նշաններ չունեն։

Համառօտ կերպով նկարագրեցի ժառանգական սիֆիլիսի մի քանի առանձնայատկութիւնները, նրա զարգացման և արտայայտման միջոցին։

Շատ ծանր են անցնում նրանք փոքրիկ երեխաների համար և այդ բոլորը՝ ծնողների պատճառով։ Ինչո՞վ է մեղաւոր խեղճ երեխան, որ ծնողը այդպիսի չարիք է բերել նրա գլխին...

Մինչդեռ այս չարիքից ազատւած կը լինէր ժառանգը, եթէ ծնողը կատարէր մի պարզ և անհրաժեշտ պայման. այն է՝ սպասէր փոքր ինչ, բժշկւէր, և այնուհետև միայն պսակւէր։

Միայն ծնողներինը չէ վնասը. վնասւում է և հասարակութիւնը՝ ստանալով վատասերւած, ֆիզիքապէս փչացած սերունդ։

Ուրեմն ամեն մարդ, նախ քան ամուսնանալը, եթէ ունեցել է սիֆիլիս, երկու մեծ բարոյական պարտականութիւնների առաջ է կանգնած.—պարտականութիւն դէպի ինքը և իւր ընտանիքը, և պարտականութիւն դէպի հասարակութիւնը։

ՍԻՖԻԼԻՍԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Նախ քան սիֆիլիսի բժշկութեանն անցնելը, աւելորդ չեմ համարում փոքր ինչ կանգ առնել սիֆիլիսի որոշման եղանակների վրայ։

Մենք արդէն գիտենք, որ կոշտ շանկրը միջին թւով 4 շաբաթ անցնելուց յետոյ, առաջացնում է ընդհանուր վարակում, որ արտայայտւում է պզուկների և յետոյ, գումմանների շրջաններով։

Դժւար չէ նկարագրած արտայայտութիւններով որոշել սիֆիլիսը։ Բայց կան դէպքեր, երբ նշանները պարզ չեն, խառն են։ Խնդիրը պարզւում է, եթէ յաջողւում է գտնել արտադրութիւնների մէջ սիֆիլիսի մանրէներ և կամ, արտաքին նշաններ բացակայելու դէպքում, արեան մէջ Վասսերմանի եղանակով գտնում են սիֆիլիսի թոյն։

Վասսերմանի եղանակը բոլորովին նոր է, բայց շատ ընդունւած է և տարածւած։ Նա հիմնւած է մարդուս արեան մէջ առաջացած այն փոփոխութիւնների վրայ, որոնց ենթարկւում է արիւնը՝ վարակիչ հիւանդութիւնից յետոյ, երբ կազմւածքը ձեռք է բերում նոյն հիւանդութեամբ երկրորդ անգամ չը վարակւելու ընդունակութիւն, վարակումի դէմ ապահովութիւն։ Օրինակ՝ ծաղիկ, բծաւոր տիֆ (հարլինք) և այլն հիւանդութիւնները, որոնք չեն կրկնւում երկրորդ անգամ։

Ինչպէ՞ս է դա կատարւում։

Մեզ արդէն յայտնի է, որ վարակիչ հիւանդութիւնների միջոցին, երբ մանրէները մուտք են գործում մեր մէջ, մեր կազմւածքը իսկոյն սկսում է դիմադրել իր բնական ոյժերով։ Ըստ Մեչնիկովի, արեան սպիտակ գնդակների՞ մղած կռւին, թէ՞ մի ուրիշ գործողութեանը պէտք է վերագրել, — բայց ժամանակի ընթացքում հիւանդի արեան մէջ այնպիսի հիւթեր են արտադրւում, որոնք յատուկ են միայն որոշ մանրէների։ Օրինակ, եթէ մտել են տիֆի մանրէներ, հիւանդի արիւնում արտադրւում է տիֆի մանրէների և թոյնի մի հականիւթ-հակաթոյն, որ և մնում է արիւնի մէջ։

Այժմ, եթէ նոյն կազմւածքի արեան մէջ երկրորդ անգամ պատահմամբ մտնեն տիֆի մանրէներ, նրանք այնտեղ կը պատահեն առաջին անգամից գոյացած իրենց ոչնչացնող տիֆի այդ հակաթոյնին, որև իսկոյն կը կապւի նրանց հետ և չի թողնիլ կազմւածքին՝ հիւանդանալու տիֆով մի երկրորդ անգամ։

Առաջին անգամ ֆրանսիացի գիտնականներին (Բօրդէ և Ժանգու, 1901 թւականին) ենք պարտական, որ օգտւում ենք արեան տարրալուծութիւնից և ճանաչում ենք տարափոխիկ հիւանդութիւնները։ Օրինակ, քննում են արիւնը, և եթէ գտնում են նրա մէջ տիֆի հականիւթ-հակաթոյն, ուրեմն այդ անձնաւորութիւնը առաջ ունեցել է տիֆ։ Այս Բօրդէ-Ժանգուի գիւտով՝ սիֆիլիսի վերաբերմամբ՝ լիովին օգտւեց Վասսերմանը։

Նա ենթադրեց որ սիֆիլիսոտ մարդու արեան մէջ նոյնպէս կարող է կազմւած լինել սիֆիլիսի հականիւթ-հակաթոյն։ Դրա համար վերցրեց սիֆիլիսոտ մեռած երեխայի լեարդի հիւթը, որ լի է սիֆիլիսի մանրէներով, սպիրօխէտներով. այդ հիւթը, սիֆիլիսի թոյնը, խառնեց նա զանազան մարդկանց արեան հիւթերի հետ և նկատեց որ իսկապէս սիֆիլիս ունեցողի արեան հիւթը՝ կապեց սիֆիլիսի թոյնը, իսկ առողջ մարդունը չը կապեց։ Այստեղից նա ամենայն իրաւամբ եզրակացրեց, որ իսկապէս սիֆիլիսոտ մարդու արեան մէջ գոյութիւն ունի սիֆիլիսային հականիւթ —հակաթոյն։

Աւելի հեռու գնալով՝ եզրակացրեց, որ երբ որ և է անձնաւորութեան արիւնի մէջ գտնում ենք

սիֆիլիսի այդ յատուկ հակաթոյնը, ուրեմն նա ունեցել է սիֆիլիս։

Այսպէս, Վասսերմանի եղանակը կայանում է՝ արեան մէջ սիֆիլիսի հականիւթ-հակաթոյնը որոնելում։

Հեշտ է ասում, բայց դժուար է կատարում։ Վասսերմանի եղանակով քննութիւն կատարելու համար կարևոր են քննուողի արիւնը, սիֆիլիսոտ երեխայի լեարդի հիւթ, ծովային խոզիկի թարմ արիւն, ոչխարի թարմ արեան կարմիր գնդակներ, ճագարի որոշ տեսակ պատրաստած արեան հիւթը և վերջապէս, սխալմունքի մէջ չ՛ընկնելու համար, պիտի վերցնել նաև հաստատապէս սիֆիլիս ունեցող մարդու արեան հիւթն էլ։

Եթէ վերջինիս և քննուողի արեան հիւթերը միատեսակ հետևանք են տալիս, այն ժամանակ ուրեմն կարելի է հաստատապէս ասել, որ քննուողի արեան մէջ կայ սիֆիլիսի թոյն։

Վասսերմանի եղանակով արեան քննութիւն կատարելը շատ բարդ գործողութիւն է։ Ինչպէս յիշեցի, նրա համար շատ նիւթեր են հարկաւոր, այդ նիւթերն էլ ստանալը և պահելը դժուար է, որովհետև շուտով փչանում են և կարող են սխալեցնել։

Վասսերմանի եղանակը դեռ ևս կատարելագործման շրջանի մէջ է և *պէտք է օգտուել նրա տուած միայն դրական հետևանքներից*։

Սիֆիլիս հիւանդութիւնը որոշելու համար՝ սկզբում մեզ յենակէտ կարող է հանդիսանալ սիֆիլիսի մանրէների գտնելը։ Սակայն տարիներ անցնելուց յետոյ, գումմային շրջանում նրանով անկարելի է

ղեկավարուել։ Այդ շրջանում մեզ օգնութեան է գալիս Վասսերմանի եղանակով արեան քննութիւնը։

Թէ ինչ դէպքերում են դիմում Վասսերմանի եղանակով արեան քննութեան, թւենք գլխաւորները,—

Երբ սիֆիլիսը ծածկուած է (գաղտնի շրջանումն է), հիւանդանալուց յետոյ շատ տարիներ են անցել, կամ գուցէ միայն կասկածելի ուռուցքներ, ցաւեր, անդամալուծութիւն։ Երբ հաստատ յայտնի չէ՝ թէ սիֆիլիս եղե՞լ է։

Երբ կինը անհասկանալի պատճառներից վիժումներ ունի կամ մեռած երեխաներ է ծնում։

Երբ ծծմայր են վարձում, նախ քան վարձելը։

Երկրորդ և երրորդ շրջաններում, երբ հարկաւոր է բժշկութեան կարևորութիւնը որոշել։

Երկրորդ շրջանում, եթէ գտնում են Վասսերմանի եղանակով սիֆիլիսի հականիւթ—պէտք է բժշկել. նոյնը և երրորդ շրջանում։

Շնորհիւ այս երկու գիւտերի, այն է՝ սիֆիլիսի մանրէի և Վասսերմանի եղանակի, մենք—բժիշկներս այժմ շատ մութ դէպքեր կարող ենք երևան հանել և պարզել։ Մեզ մնում է միայն լայն կերպով օգտուել նրանից, մանաւանդ հիւանդութեան գաղտնի շրջաններում, երբ տարիներից յետոյ հիւանդը անսպասելի կերպով ծանր բարդութիւնների է հանդիպում։

Վասսերմանի եղանակը գաղտնի սիֆիլիսի գործը պարզում է, որով և միջոց ենք ունենում սիֆիլիսի ծանր բարդութիւնների առաջն առնելու։

ՍԻՖԻԼԻՍԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Նախատեսել ճիշտ կերպով թէ սիֆիլիսը որոշ անձնաւորութեան համար ինչպիսի հետեւանքներ կը տայ—անկարելի է։ Կարելի է այդ անել միայն մօտաւորապէս։

Հասարակութեան լայն խաւերի մէջ բոլորովին կորած են համարում այն անձնաւորութիւններին, որոնք դժբախտութիւն են ունեցել վարակւելու սիֆիլիսով։ Դա ի հարկէ չափազանցութիւն է. իրականութիւնը ցոյց է տալիս, որ այդ հիւանդութիւնից առանց վատ հետեւանքների ազատւելու հնարաւորութիւնը կայ։

Ծանր հետեւանքներով է վերջանում սիֆիլիսը միայն ժառանգական դէպքերում, ծեր և արբեցող մարդկանց համար, չը նայելով նոյն իսկ նրանց բժշկւելուն։

Բարեբաղդաբար ծեր հասակը ինքն ըստ ինքեան այնքան էլ չի տրամադրում զոհեր տալու վեներական հիւանդութիւններին, հասկանալի պատճառով։

Ծերերը և արբեցողները չեն կարողանում տանել սիֆիլիսը նախ նրա համար, որ նրանց կազմւածքները արդէն թուլացած են. յետոյ՝ նրանց երակներն էլ հիւանդ են և կոշտացած։ Իսկ մեզ արդէն յայտնի է, որ սիֆիլիսը ճիշտ այդպէս է ազդում — թէ ամբողջ կազմւածքն է թուլացնում և թէ երակները կոշտացնում։ Ուրեմն վատ հետեւանքները գումարւում են և դրա համար սիֆիլիսը ծանր ընթացք է ստանում։

Նոյնպէս ծանրանում է սիֆիլիսը՝ բնութիւնից թոյլ կազմւածք ունեցողների համար։

Հիւանդների բացարձակ մեծամասնութիւնը երի-

տասարդներից է։ Մեծ մասը նրանցից առողջակազմ և թարմ է լինում, հետեւապէս նրանցում սիֆիլիսի արտայայտութիւնները ծանր չեն։

Սիֆիլիսի ծանր կամ թեթև լինելու պայմանները շատ են։ Գլխաւորները հետեւեալներն են՝.—

Թէ որքան են մտել կազմւածքում սիֆիլիսի մանրէներ։

Հիւանդի հասակը.—(ծեր կամ երիտասարդ)։

Հիւանդի սեռը.—(կին թէ տղամարդ)։

Հիւանդի կազմւածքը.—(ամուր կամ թոյլ, հիւանդ կամ առողջ)։

Արտաքին պայմանները. — (ֆիզիկական և այլն. բարեկեցութիւն).

Բժշկութիւն. — (ժամանակին կատարւած է, թէ՞ ոչ)։

V

ԲՈՒԺՈՒՄՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հարկաւոր է առ հասարակ բժշկել սիֆիլիսը, թէ՞ աւելի լաւ է գուցէ թողնել մարդու բնական ոյժերին՝ մաքառելու համար նրա դէմ:

Պատահում են դէպքեր, երբ վարակումը թոյլ է արտայայտւում. և եթէ հիւանդը անհասկացողութիւնից անուշադիր է դէպի ինքը, հիւանդութիւնը ժամանակաւորապէս անցնում է և աննկատելի մնում։

Այժմ այդ երևոյթը բացատրւում է այսպէս.— սիֆիլիսի մանրէները բազմանալով արեան մէջ՝ հանդիպում են դիմադրութեան։ Նրանցից շատերը մեռնելով՝ արտադրւում են իրենց մէջ պարունակող թոյնը, որև արիւնի մէջ մեզ յայտնի սիֆիլիսի հակաթոյնն է արտադրել տալիս։

Արեան մէջի այդ հակաթոյնը իբրև դարման և իբրև թոյն է հանդիսանում միւս, կենդանի մնացած մանրէների համար։

Որպէս զի այս մեր ասածը աւելի պարզ լինի ընթերցողի համար, օրինակ բերենք թունաւոր կարիճը։ Մեր սպանած կարիճը դցում ենք ձէթի մէջ, այնտեղ, նրանից դուրս եկող թոյնը միանում է ձէթի հետ և կարիճի թունաւորման դէմ պատրաստւում է մի հակաթոյն։

Այդպէս էլ սիֆիլիսի մեռած մանրէների թոյնն է, որ խառնւելով արեան հետ, այնտեղ կազմում է սիֆիլիսին ոչնչացնող հակաթոյն։

Քանի շատ են մեռնում և ոչնչանում սպիրոխետները, այնքան այդ հակաթոյնը շատանում է և ուժեղանում։ Նրան ենք մենք պարտական, որ մեր արեան մէջ գոյանում է ինքնաբուժութեան մի ոյժ. Նրան ենք պարտական, որ թեթև դէպքերը առանց բժշկութեան իսկ անցնում են։

Բայց դրանով շատ էլ չը պէտք է ոգևորւել։ Դժբախտաբար բնական այդ ինքնաբուժութեան վրայ լիովին յոյս դնել չի՛ կարելի. փորձը ցոյց է տալիս, որ կարևոր է նաև կողմնակի կերպով օգնութիւն կազմւածքին՝ սիֆիլիսի մանրէների դէմ մաքառելու համար։

Առանց բժշկութեան գուցէ և անցնեն սիֆիլիսի արտայայտութիւնները, բայց դա հիմնական չի լինիլ։ Տարիներ անցնելուց յետոյ յանկարծ հանդէս են գալիս այնպիսի ծանր բարդութիւններ, որոնց շնորհիւ մարդս իսպառ կորչում է։

Առհասարակ նկատւած է, որ սկզբում թեթև անցնող սիֆիլիսը՝ վերջը մի՛շտ ծանր բարդութիւններ է առաջացնում։ Սա բացատրւում է նրանով, որ հիւանդութեան թեթև ընթացքի շնորհիւ՝ բժշկութիւնն

էլ թեթև կերպով է կատարել։ Յոյսը դնել բնական ոյժերի վրայ ուրեմն՝ անկարելի է։ Ամենաթեթև դէպքերումն իսկ պէտք է դիմել բժշկութեան։

Բնական ոյժը, ժամանակը և բուժումը—ահա սիֆիլիսի իսկական երեք թշնամիները, որոնց շնորհիւ կազմածքին յաջողւում է ազատել սիֆիլիսից։

Ծանր հիւանդութիւնների շարքում չը կայ մի ուրիշը, որ այնպէս լաւ ենթարկւէր բժշկութեան, որքան սիֆիլիսը։ Այդ պատճառով էլ հիւանդը երբէք չը պիտի յուսահատուի։ Բայց միևնոյն ժամանակ, ինչպէս թոյլատրելի չեն ծայրայեղութիւնները, նոյնպէս և թոյլատրելի չէ թեթև վերաբերմունք դէպի սիֆիլիսը։ Ամենալաւը միջին ճանապարհն է.—Սիֆիլիս ստանալու դէպքում՝ լինել խելացի և լաւ բժշկուել։

Դժբախտաբար իրականութեան մէջ լուրջ վերաբերմունք են ցոյց տալիս միայն ծանր սիֆիլիսով վարակւածները· իսկ մեծամասնութիւնը թեթև է վերաբերւում. կամ առաջ սկսում է լուրջ և ուշադիր կերպով բժշկւել, իսկ յետոյ, չը տեսնելով ոչ մի նշան, անհոգ է դառնում ու այլևս չի հետևում բժշկի խորհուրդներին։ Սակայն եթէ նշաններն անգամ վերացած լինեն, պէտք է բժշկութիւնը շարունակել և այդպիսով դէմն առնել ապագայ բարդութիւններին։

Շատ հիւանդներ թեթևամտաբար՝ չեն լսում բժշկի խորհուրդներին և կամ կարծում են թէ բժիշկը իր շահն աչքի առաջ ունի։ Ցաւը միայն դրանում չէ։

Շնորհիւ այն հանգամանքի, որ հասարակութիւնը

և մերձաւորները վատ են վերաբերւում դէպի սիֆիլիսոտները, նրանք աշխատում են ծածկել, դիմում են հէքիմների, մտերիմ մարդկանց, որոնք ոչ մի գաղափար չունեն հիւանդութեան մասին։

Հիւանդի տգիտութիւնը այդ հարցում, այլ և բժշկութիւնը ծածուկ տանելու ցանկութիւնը շահագործելով, այդ հէքիմները շռայլում են նրանց խոստումներ, տնային դեղեր են տալիս առանց բժիշկների, և կարճ միջոցում արմատախիլ անել են խոստանում հիւանդութիւնը այնպէս, որ ոչ ոք չ'իմանայ։

Ստացւում է մի խառնաշփոթութիւն։ Նախ հէքիմական տգիտութիւնից ամեն ինչ ընդունւում է սիֆիլիսի տեղ, նոյն իսկ երբ սիֆիլիսի նշոյլն անգամ չը կայ· ինչ ասել կուզէ, որ այդպիսի դէպքում իբր թէ „սիֆիլիսը“ կարճ միջոցում և ընդմիշտ արմատախիլ կարելի է անել։

Իսկ եթէ պատահմամբ սիֆիլիս է, մենք գիտենք, որ կան դէպքեր, երբ առժամապէս անցնում է հիւանդութիւնը, նոյն իսկ առանց բժշկութեան, կամ թեթև բժշկութիւնից յետոյ, բայց վերջը· . . . տարիներ անցնելուց յետոյ, չարիքը այլևս հէքիմին չի գնում, այլ թեթևամտութեան այդ զոհերը իրանց ծանր հետևանքներով բժիշկներին է վիճակւում, երբ շատ անգամ անկարելի է լինում մարդուն ազատել այլևս կորուստից։

Կարելի է հաստատ ասել, չը կան հիւանդութիւններ, որոնք այնքան յաճախ ընկած լինեն զանազան հէքիմների և շառլատանների ձեռքը, որքան սիֆիլիսն է և առհասարակ վեներական հիւանդութիւնները։

Մենք տեսանք որ սիֆիլիս հիւանդութիւնը իր ար-

տայայտութիւններով այնքան բարդ է, որ պահանջում է կատարեալ և հմուտ բժշկութիւն։ Երբէք վարակուածը չը պիտի մխիթարի իրեն՝ թէ ամեն ինչ անցաւ. միշտ պէտք է բժշկի անմիջական հսկողութեան տակը մնալ։ Եթէ երբ և իցէ նրան հանդիպի որ և է ցաւ, երևայ որ և է նշան,—պէտք է իսկոյն բժշկին յայտնի և, եթէ բժիշկը նրան չի ճանաչում, միևնոյն ժամանակ պիտի աւելացնի, որ ունեցել է սիֆիլիս։ Որովհետև այնքան բազմակողմանի են, այլ և կազմուածքի ամեն տեղ ցրուած են սիֆիլիսի արտայայտութիւնները, որ միայն բժիշկը կարող է պարզ կերպով որոշել թէ վիպուածը պէ՞տք է սիֆիլիսի՞ն վերագրել, թէ՞ ոչ:

ՍԻՖԻԼԻՍԻ ՍԵՌԱԿԱՆ ՎԱՐԱԿՈՒՄԻՑ ՊԱՇՏՊԱՆՒԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Մեզ արդէն յայտնի է, որ սիֆիլիսով վարակումը լինում է սեռական և արտասեռական։ Շատերը, մանաւանդ քաղաքներում, հիւանդանում են սեռական յարաբերութեան միջոցով։ Բաղդաւոր կը լինէր մարդկութիւնը, եթէ միջոց ունենար ազատ մնալ գալիք սիֆիլիսից և կամ նրան չէզոքացնել։

Հարցին այդ տեսակէտից նայելով՝ զանազան ժամանակներում առաջարկուած կան մի քանի արմատական, հիմնաւոր, այլև ոչ արմատական միջոցներ՝ սիֆիլիսից պաշտպանուելու համար։

Ա ր մ ա տ ա կ ա ն, հ ի մ ն ա ւ ո ր մ ի ջ ո ց ն ե ր ն ե ն.—

1. Գլխաւոր և հիմնական ու գործնական միջոցն է՝ չունենալ կասկածելի անձնաւորութիւնների հետ սեռական յարաբերութիւն և որ և է յարակցութիւն։

Այս արմատական միջոցի գործադրութիւնը աւելի տարածուած կը լինէր մեր հասարակութեան, մանաւորապէս երիտասարդութեան մէջ, եթէ նա, ինչպէս առաջ էլ մատնացոյց ենք արել, վաղօրօք լաւ ծանօթացած լինէր սիֆիլիսի պատճառած չարիքների հետ։ Ամեն թշնամի, որի ույժը և վտանգաւորութիւնը պարզուած չէ և անյայտ է, աւելի մեծ չարիք է առաջացնում։

Օրինակ՝ ձեռնաշարժութիւնը (օնանիզմը) տարածուած ախտ է դեռահաս երիտասարդութեան մէջ. բայց երբ պատանին վաղօրօք ծանօթանում է դաստիարակչի կամ գրքերի միջոցով նրա վտանգաւորութեան հետ—խորշում է նրանից, կամ եթէ նա անգիտակցաբար պարապելիս էլ լինի՝ թողնում է և իրան փրկում այդ ախտի բարդութիւններից։

16—18 տարեկան երիտասարդը, նայած սեռական զարգացմանը, պիտի պարզ գաղափար ունենայ սիֆիլիսի մասին։ Մենք ամենքս երիտասարդներ ենք եղել և եթէ հեռու գնանք մեր յիշողութիւնների մէջ, կը տեսնենք որ երբ իբր թէ „երեխաներ," էինք, բաւական բան գիտէինք սեռական աշխարհի մասին, միայն թէ բոլորն էլ լաւ քողարկուած։ Շատ երիտասարդներ սիֆիլիսից վարակուելով, գանգատուել են բժիշկներիս թէ՝ «Օհ, եթէ մէկը գտնուէր կամ անձամբ և կամ գրքոյկի միջոցով մեզ ծանօթացնող սիֆիլիսի հետ, երբէք չէինք վարակուիլ»։

Այս յուսահատ բացագանչութիւնները ճիշտ են և անկեղծ... բայց ուշ։

Երբ երիտասարդի մէջ սկսում են երևալ սեռական հասունութեան նշանները, նա գուցէ զգում է թեթև գլխացաւ, միտքը կարծես մոլորւում է, երեսը, ճակատը ծածկւում է վարդագոյն պզուկներով —«սիրոյ կոկոններով»։ Այդ բոլորը ուժեղանում է, երբ արհեստական կերպով, վատ ընկերների, վատ գրքերի և վատ պատկերների միջոցով՝ աւելի գրգռւում է երիտասարդը։ Այդ պարագաներում նրա գլխին թափւում են զանազան կողմերից «բարի խորհուրդներ»՝ անպատճառ ունենալու սեռական յարաբերութիւն։

Այդ բարի խորհրդատուների մտքից անգամ չի անցնում թէ ինչ ծանր փորձանքի մէջ են ձգում երիտասարդին։

Այն ինչ, եթէ առաջուց ծանօթացնեն նրան սեռական կեանքի առողջապահութեանը հետ, եթէ նրան բացատրեն, թէ ժուժկալութիւնը վնասակար չէ, թէ մարդս այնպէս է ստեղծւած, որ սերմի կուտակման առաջն առնւում է բնական միջոցներով, գիշերախաբութեամբ, իսկ կանանցը՝ ամսականով — այն ժամանակ երիտասարդը, մտքով և հոգով ուժեղ, բարոյականութեամբ կը ղեկավարւի և իրեն չի վնասի՝ ունենալով սեռական յարաբերութիւն կասկածաւոր անձնաւորութիւնների հետ։

Սիֆիլիսից պահպանւելու երկրորդ միջոցն է — ամուսնանալ, երբ սեռական հասունութիւնը երևան է գալիս։ Գիւղերում սովորութիւն կայ շուտ ամուսնանալ։ Այժմ երիտասարդները, առաւելապէս քաղաքներում, ծանր տնտեսական պայմանների շնորհիւ, զրկւած են վաղ ամուսնանալու հնարաւորութիւնից։

Սակայն աւելի գերադասելի է քչով բաւականանալ և մի կերպ կառավարւել, քան մնալ ամուրի, հիւանդանալու հաւանականութիւնը աւելացնել և ընդ միշտ անբախտանալ։

Դժբախտաբար կեանքը իրենը վերցնում է։ Սեռական պահանջը, նայած բնութեան, շատ անգամ մարդուն, մանաւանդ երիտասարդ հասակում, անսանացնում է, կուրացնում, ինչպէս ասում են՝ արիւնը գլխումն է տալիս։ Եթէ դրան աւելանում է նաև արբեցութիւնը,—բանականութիւնը միանգամայն խանգարւում է, մարդը չի կարողանում դիմադրել, գլուխը կորցնում է, դառնում է կրքի ստրուկ և հեշտութեամբ ընկնում է ցաւերի մէջ։

Այդպիսի դէպքերում մարդը կասկածաւոր անձնաւորութիւնների հետ շատ յաճախ սեռական յարաբերութեան մէջ է մտնում։ Վերջն է սթափւում, նայում արածի վրայ, սարսափում—բայց արդէն ուշ է։

Ինչպէս անել, որ այդպիսի դէպքերում — որոնց գոյութեան հետ պէտք է հաշտւել և որոնց պիտի հաշւի առնել—երիտասարդները չը հիւանդանան։ Արդեօք ինչ միջոցների դիմել։

Դրա համար գոյութիւն ունեն սիֆիլիսին դէմ պաշտպանելու ոչ-արմատական միջոցներ։

ՈՉ-ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Գ ո ն դ ո մ։

Ռէզինից կամ ձկան փշտիկից շինած մի բարակ թաղանթ է դա, որ հագցնում է սեռական անդամին և ծածկում է նրան լրիվին։ Հնարողը անգլիացի մի բժիշկ էր, որի անունն է կրում մինչև այժմ այդ փշտիկը։ Գոնդոմն շատ բարակ է և հեշտութեամբ կարող է պատռւել, եթէ կոպիտ են վարւում նրա հետ։ Նախ քան յարաբերութիւն ունենալը, պիտի փորձել նրան։ Պատահում են փտածները։ Եթէ լաւն է, պիտի հագցնել անդամի վրայ, այնպէս որ ծայրին քիչ ազատ տեղ մնայ՝ դուրս թափւող սերմի համար։ Զգոյշ պիտի վարւել, որպէս զի չը պատռւի։ Զգուշութեան համար՝ լաւ է վազելին կամ ձէթ քսել գոնդոմի վրայ յարաբերութեան միջոցին, որպէս զի դիմացկուն դառնայ և չը պատռւի։

Այդպէս պահպանելով անդամը անմիջական շփումից, վարակման առաջը կարելի է առնել։ Սակայն անդամի շրջակայ մասերը պիտի շապիկով և վարգիկով ծածկել։ Ինձ պատահել են հիւանդներ, որոնք գործածել են գ ո ն դ ո մ, բայց և այնպէս վարակւել են, ունեցել են կոշտ շանկր փորի ներքևի մասերում, աճուկներում կամ ամորձիքների մորթու վրայ։ Պատճառն այն է, որ այդ մասերը անդամի նման ծածկւած չեն եղել յարաբերութեան միջոցին։

Երկրորդ միջոցն է՝ անդամին լաւ իւղ քսել. վազելին, բորակի վազելին և կամ մի որև է ուրիշ իւղ։ Ինչպէս արդէն յայտնի է, առողջ մորթի միջով չեն անցնում սիֆիլիսի մանրէները։ Դրանով կարելի

է բացատրել այն դիպւածները, որ երբ մի քանի մարդ յարաբերութիւն են ունենում վարակւած անձնաւորութեան հետ, բոլորն էլ չեն վարակւում, որովհետև ոմանց մորթը յարաբերութեան միջոցին ողջ է մնում։

Անդամը լաւ իւղոտելը՝ նախ պահպանում է մորթըն ամբողջութեան մէջ. յետոյ, եթէ աչքի համար որև է անտեսանելի քերթւած, կամ չանգռւած կայ, նրանք ծածկւում են իւղով։ Յարաբերութիւնից անմիջապէս յետոյ պէտք է լաւ լւանալ սեռանդամը սապոնով։ Իւղի հետ միասին՝ եթէ կան նոյն իսկ սիֆիլիսի մանրէներ, կը հեռացւեն այդպիսով։ Վերջին ժամանակներս իւղի փոխարէն առաջարկել են օգտւել սնդիկի սպեղանիից։ Այդ նիւթը պարունակում է որոշ քանակութեամբ իւղ և որոշ քանակութեամբ սնդիկ։

Սիֆիլիսի վարակման առաջն առնելու համար, եթէ անհնար է արմատական միջոցներ գործ դնել, գոնէ պէտք է չը մոռանալ մեր ցոյց տւած ոչ-արմատական միջոցները, որոնք որոշ չափով վարակման դէմը առնում են։ Ասում ենք „որոշ չափով“, որովհետև այդ միջոցները ունեն միայն յարաբերական նշանակութիւն։ Կան դէպքեր, երբ, չը նայած նրանց գործադրութեանը, մարդիկ նպատակին չեն հասնում։ Ոչ-արմատական միջոցների մէջ՝ վարակման դէմ ամենից լաւ պաշտպանում է գոնդոմը։

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Ց Տ Ն Ե Ր Ը

Ռուսաստանում և մեզ մօտ Կովկասում գոյութիւն ունեն հասարակաց տներ, որոնք մեծ չարիք են ներկայանում հասարակութեան, մանաւորապէս երիտասարդների առողջութեան և բարքերի մաքրութեան համար: Այդ տների միջոցով են տարածւում վեներական հիւանդութիւնները, սիֆիլիսը:

Կան երկիրներ, ուր թոյլ չեն տալիս հասարակաց տներ բանալ, գտնելով որ նրանք միանգամայն վնասակար են։ Եւ յիրաւի, ի՞նչպէս կարելի է պաշտօնապէս արտօնել մարմնի վաճառքը: Բացի բարոյական այս տեսակէտից, հասարակաց տները ունին ուրիշ վնասակար կողմեր ևս։ Նրանց բաց և հրապուրիչ դռները, ուր կարելի է հեշտ կերպով ընկնել, նրանց ներքին ամբողջ կեանքն ու բարքերը, բացի հիւանդութիւններից, շատ երիտասարդների են անբարոյականացրել և շատ ոճիրների առիթ տուել։

Ոմանք նրանց գոյութիւնը արդարացնում են նրանով, որ պէտք է բաւարարութիւն տալ այն մարդկանց, որոնք ամուսնացած չեն։ Հասարակաց տները, գտնւելով բժշկական հսկողութեան տակ, իբր թէ չէզոքացնում են և սահմանափակում վեներական հիւանդութիւնների տարածումը։ Դժբաղդաբար նրանք այդպիսի նպատակի էլ չեն հասնում։

Բժշկական հսկողութեան տակ պէտք է առնւեն ո՛չ միայն այդ թշւառ կանայք, որոնց միայն ծայրահեղ չքաւորութիւնը և ուրիշ ձախորդ հանգամանքներն են ստիպել զբաղւելու իրանց մարմնի վաճառքով, այլ

նաև այն յաճախորդներին, որոնք օգտւում են վաճառքից և բերում են վարակման թոյնը։

Միակողմանի քննութիւնը՝ հիւանդութիւններից չի ազատում հասարակաց տների յաճախորդներին: Օրինակ, սիֆիլիսի մանրէները կարող են կնոջ միջոցով անցնել մէկ ուրիշին, երբ դեռ կինը ոչինչ էլ չի ունենում և երբ յարաբերութիւնը կատարւում է մէկը միւսի ետևից, ինչպէս այդ ընդունւած է նման տներում:

Յետոյ, պինդ շանկրը յաճախ պատահում է կանանց սեռական անդամների ներսի մասերում։ Կինը ցաւ չի զգում, չի նկատում եղածը, իսկ մինչև բժշկի քննելը և հաստատելը՝ քանի քանի մարդիկ կարող են վարակւել։

Դրա վրայ աւելացրէք և այն, որ շատ անգամ հասարակաց տների տէրերը, իրանց նիւթական շահերի համար, զանազան խարդախութիւնների են դիմում և բժշկից թագցնում են կամ ծածկում հիւանդացածներին: Զարմանալին և անհասկանալի այն է, որ թէ կին և թէ տղամարդ, երբ սիֆիլիսով հիւանդանում են, գիտակցաբար շարունակում են առողջ մարդկանց հետ սեռական յարաբերութիւնները, կարծես նրանց էլ կամենալով վարակել և իրենց հիւանդանալու վրէժը առնել։ Մի տեսակ պախարակելի անփութութեամբ են վերաբերւում նրանք դէպի ուրիշների առողջութիւնը, դէպի անծանօթները, մանաւանդ դէպի հասարակաց տների գոհերը: Օրինակ կարող է ծառայել այն սիֆիլիսով հիւանդ կինը, որ երբ Փարիզի վեներական ախտերի Սուրբ Լուդովիկոս հիւանդանոցը բերւեց ու իմացաւ թէ սիֆիլիս է ստացել, բացագանչեց.

— Ես այդպէս էլ ենթադրում էի. նա ինձ սիֆիլիս նւիրեց. բայց ոչինչ, ես էլ լաւ վրէժ առայ. հարիւրից աւելի տղամարդի վարակեցի…

Թ Ա Փ Ա Ռ Ո Ղ   Կ Ա Ն Ա Յ Ք

Չը նայած հասարակաց տների գոյութեանը, Ռուսաստանի քաղաքներում պակաս չեն թափառող կանայք, որոնք պոռնկութեամբ են զբաղւում, և քիչ բացառութեամբ, ազատ են բժշկական անմիջական հսկողութիւնից:

Սակայն դրանք, իբրև ազատ անձնաւորութիւններ, անձնապէս շահ ունեն հոգալու իրենց առողջութեան համար և իրենք-իրենց լաւ են պահպանում:

Իսկ եթէ հասարակութիւնը՝ չքաւորութեան և ձախորդ պայմանների այդ զոհերին որոշ կարեկցութիւն ցոյց տայ, եթէ գոնէ հիւանդացած միջոցին խնամէ նրանց և սփոփէ—թերևս նրանց գոյութիւնը աւելի վնասակար չը համարւի, ինչպէս շատերը ենթադրում են:

Քանի որ շնորհիւ հասարակական կարգերի և որոշ պայմանների՝ այս երկու չարիքն էլ զուգընթացաբար գոյութիւն ունեն, գերադասելի է վերացնել աւելի վնասակարը, այսինքն հասարակաց տները:

Նկարագրւած պաշտպանողական միջոցները սիֆիլիսի դէմ կարող են իրագործւել կեանքի մէջ՝ նայած պայմաններին:

Գիւղը, շնորհիւ իր մեկուսացած պարզ կեանքին,

տրամադրութեան տակը ունի արմատական միջոցներ.—ժամանակին ամուսնութիւնը և վեներական ախտերից հեռու գտնւելու հանգամանքը:

Քաղաքը, ընդհակառակը, պէտք ունի ոչ-արմատական միջոցների:

Ս Ի Ֆ Ի Լ Ի Ս Ի
ԱՐՏԱՍԵՌԱԿԱՆ ՎԱՐԱԿՈՒՄԻՑ
ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Բացի սեռական վարակումից, մարդ պէտք է իրեն պաշտպանէ նաև, մանաւանդ գիւղերում, արտասեռական վարակումից:

Հիւանդների ճակատի վրայ գրւած չէ, թէ նրանք հիւանդ են սիֆիլիսով: Որպէսզի մարդս ինքն իրեն պատահականութեան չը մատնէ սիֆիլիսի վերաբերմամբ, պիտի հետևի ուրեմն որոշ առողջապահական կանոնների. որովհետև սիֆիլիսոտը կարող է վարակել թէ ուղղակի, անձամբ և թէ անուղղակի—իր գործածած առարկաների միջոցով. այդ պատճառով էլ ամեն մարդ պիտի որոշ զգուշութիւն պահպանէ առօրեայ յարաբերութիւնների մէջ՝ թէ իր հետ շփւող մարդկանց և թէ գործածական առարկաների վերաբերութեամբ:

ՇՓՈՒՄՆ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Համբոյր.—

Վարակուած մարդը ունենում է սիֆիլիսի դուրս տուածներ բերանում, շրթունքների վրայ։ Որովհետև ցաւ չը կայ, հիւանդը կարող է նոյն իսկ չը գիտենալ որ վարակուած է, և համբուրել մի ուրիշի։

Ինքն ըստ ինքեան թուքը վարակիչ չէ, բայց երբ նա պարունակում է բերանի դուրս տուածների արտադրութիւնը՝ սիֆիլիսի մանրէների հետ, այն ժամանակ նրանք համբոյրի միջոցով կարող են անցնել մի ուրիշի և վարակել։

Հեշտութեամբ են վարակւում այս ձևով մանաւանդ երեխաները, որոնց մորթը քնքոյշ է և միշտ չանգռուածներ ունի։

Պէտք է հրահանգել երեխայ պահողներին, որ համբուրելու չըթոյլատրեն ո՛չ անծանօթներին և ոչ էլ ծանօթներին։

Պէտք է վերացնել նաև հանդիպման ու հրաժեշտի ժամանակ միմեանց բաշխուող համբոյրները, որոնք կարող են վարակման պատճառ դառնալ։

Ձեռք տալը.—

Ձեռքի ափի մէջ լինում են սիֆիլիսի դուրս տուածներ, մաշկւող պզուկներ։ Բարեբախտաբար նրանք լինում են չոր մորթի մէջ։ Մեր ձեռքի ափի մորթն էլ հաստ է և դիմացկուն։ Այդ շերտի միջով սիֆիլիսի մանրէները չեն կարող անցնել։ Միւս կողմից, ձեռքի դուրս տուածն էլ տեսանելի է. հիւանդն ինքը կը խուսափէ այդ պարագաներում՝ ձեռք տալուց։ Բայց քանի որ մեզանում շատ ընդունուած է ձեռք տալու սովորութիւնը, լաւ է որ մարդ օգտուի ձեռնոցներով. իսկ որտեղ այդ չի կարելի, յաճախ լուանալ պէտք է ձեռքերը սապոնով։

ՇՓՈՒՄՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԵՏ

Արհեստաւորները սովորութիւն ունին զանազան գործիքներ բերանը տանել և պահել ատամներով. օրինակ՝ մեխերը, ասեղը, արշինը և այլն։ Եթէ մէկ ուրիշը նոյնը գործածէ և նոյնպէս բերանը տանէ, կարող է հեշտութեամբ վարակուել այդ առարկաների միջոցով։

Գրական առարկաներ.—

Ընդունուած է նաև բերանը տանել մատիտը, գրիչը, դանակը, թերթել գիրքը թքոտած մատներով, պահել բերանում քանոնը և այլ գրական պիտոյքներ։

Նուագածութեան, փչելու գործիքներ.—

Կան առարկաներ, որոնց գործածութիւնը բերանով, շրթունքներով է կատարւում. օրինակ՝ երաժշտական գործիքները, ապակեայ գործարանում ապակեայ շիշեր փչելը, ոսկերիչների մօտ՝ փոքրիկ խողովակով կրակն արծարծելը և դրանց նման ուրիշ գործողութիւններ։

Մեր սնունդի համար գործածւելիք առարկաները.—

Ուտելիս և խմելիս՝ բերանի հետ սերտ շփւում են դգալը, դանակը, պատառաքաղը, բաժակը, անձե-

ռոցիկը: Հիւանդը միշտ պէտք է այս առարկաները առանձին ունենայ: Եթէ տանը որևէ անծանօթ մարդ հիւր է լինում, նրանից յետոյ պէտք է լուանալ տալ ամեն ինչ:

Լուացուելու պարագաները.—

Ամեն մարդ պէտք է ունենայ լուացուելու սեփական պարագաներ, ուրիշի ունեցածովը չը պէտք է օգտուի. ոչ երեսսրբիչ, ոչ ատամի վրձին, սապոն, սպունգ և այլն: Մանաւանդ երկիւղալի են մեր բաղնիքների քիսաները, այդ կեղտի բունը, որոնց միջոցով ոչ միայն սիֆիլիսը, այլ և ուրիշ մորթի հիւանդութիւններն էլ կարող են փոխուել:

Ծխելու առարկաները.—

Սովորութիւն կայ ծխած պապիրոսի կէսը կամ չիբուխը ուրիշին ներկայայացնել ծխելու, մանաւանդ բերանից բերան անցնող նարգիլէն: Այս ճանապարհով վարակումը հեշտութեամբ կարող է տեղի ունենալ: Պէտք է արգիլել երեխաներին՝ փողոցից կիսատ ծխախոտ վերցնելն ու ծխելը:

Սափրիչների գործիքները.—

Երկիւղալի են նաև մեր սափրիչների, մանաւանդ հասարակ դալլաքների գործիքները:

Սիֆիլիսի դուրս ուածները սպիրոխէտներով հանդերձ՝ լինում են նաև երեսի և գլխի վրայ:

Ածելիով, սանդրով, մկրատով, կեղծ մազերով (պարիկները) կարելի է վարակումն առաջացնել: Ես ինքս ունեցել եմ այդպէս վարակուած հիւանդներ: Այդպիսի դէպքերի առաջն առնելու համար՝ լաւ է ունենալ սեփական գործիքներ, մանաւանդ ածելին:

Արտասահմանում սափրիչներին ստիպում են ի-

րենց գործիքները ամեն անգամ, գործածելուց առաջ, ախտահանել: Տեղ տեղ մեզ մօտ էլ են անում:

Արտաքոցներ.—

Եղել են վարակման դէպքեր՝ նոյնպէս ընդհանուր արտաքոցների միջոցով, մանաւանդ երկաթուղիների վագոններում:

Փող.—

Փողը ձեռքից ձեռք անցնելով՝ մաքուր չի կարող մնալ: Քիմիական քննութեան են ենթարկել նրանց և երևացել է որ ամենից շատ մանրէներ եղել են թղթադրամի, ամենից քիչը ոսկու և պղնձի վրայ: Համրելուց յետոյ՝ միշտ ձեռքերը պէտք է լուանալ, փողը բերանը չը պէտք է տանել պահելու համար և մանաւանդ թղթադրամը համրելիս՝ մատը լեզուին չը տանել թքոտելու համար, ինչպէս շատերն են անում:

Շորերը, գլխարկը, մանաւանդ սպիտակեղէնը կարող են վարակում առաջ բերել:

Այդ վարակումից ազատ լինելու համար՝ հարկաւոր լաւ լուանալ, եփել և ախտահանել այդ բոլոր առարկաները:

Ծծմայրներ և ծառաներ.—

Ծծմայրները և ծառաները շատ անգամ վարակում են երեխաներին և նոյն իսկ ամբողջ ընտանիքը:

Մեզանում սովորութիւն կայ ծծմայր վարձելիս՝ կաթը զննել. իսկ ծառաներ վարձում են առանց որ և է բժշկական քննութեան: Սակայն չէ՞ որ ծծմայր հրաւիրելիս՝ նրան տալիս են մօր դերը, նրան յանձնում են մի թանկագին էակի: Իսկ ծառաները դառ-

նում են ընտանիքի մի անդամը և շփւում են ընտանիքի բոլոր միւս անդամների հետ ամէն օր, ամէն ժամ։

Այդ պատճառով, խելացի կը լինի միշտ, առողջապահութեան տեսակէտից, բժշկական մանրազննին քննութեան ենթարկել ընտանիքում ընդունւող ծառաներին, նոյն իսկ կասկածի դէպքում գործադրելով Վասսերմանի եղանակը, նրանց արիւնը քննելու։ Եւ երբէք չը պիտի ընդունել ծառայութեան այնպիսիներին, որոնք խուսափում են քննութիւնից։

Եթէ արտասեռական վարակման դէպքերի մասին քիչ է լսւում, պատճառն այն չէ, որ դրանք քիչ են պատահում, այլ այն, որ իրենք-հիւանդները կամ ծնողները թագցնում են սիֆիլիսը, համարելով ամօթալի հիւանդութիւն, եթէ նոյն իսկ ստացւած է անմեղ, արտասեռական ճանապարհով։

Այսպէս կարելի էր անվերջ թւել, վարակման շատ օրինակներ առաջ բերել, որովհետև յիրաւի բազմազան են հիւանդները և նրանց հետ կապ ունեցող ամէնօրեայ առարկաների թիւը։

Պէտք է ղեկավարւել միայն այն գլխաւոր կանոնով, թէ սիֆիլիսոտը կարող է վարակել անձամբ, նոյնպէս այն առարկաների միջոցով, որոնց հետ նա սերտ շփումն է ունեցել։

Ի՞նչ պէտք է անել, որ սիֆիլիսոտը անվնաս դառնայ մերձաւորների համար։

Երբ անդամներից մէկը վարակւել է, հարկաւոր է չը թագցնել այդ։ Ընտանիքի անդամների համար

աւելի անվտանգն այն է, որ գիտենան և զգոյշ լինեն։ Զարմանալի և տարօրինակ հասկացողութիւններ կան սիֆիլիսի մասին մեր հասարակութեան մէջ։ Քանի-քանի սիֆիլիսոտներ շրջում են մեր մէջ, ուտում են մեր սեղանի մօտ, նստում են մեր կողքին և... ոչ ոք չի վարակւում նրանցից, որովհետև հիւանդը պահպանում է որոշ զգուշութիւն։

Որքա՜ն աւելի լաւ կը լինէր, եթէ զգուշութիւնը պահպանւէր երկու կողմից և։

Ընտանիքում հանդուրժում են թոքախտաւոր անդամին և խորշում են սիֆիլիսոտից, որ վարակիչ է որոշ ժամանակ միայն և որից աւելի հեշտ է պաշտպանւել։

Պէտք է աւելի գիտակից և հանգիստ վերաբերւել այդպիսի խնդիրներում։ Երբ ընտանիքի որ և է անդամը հիւանդանում է, աւելի լաւ է յայտնել այդ մասին մերձաւորներին, չը համբուրւել նրա հետ և եթէ հիւանդը ամուսնացած է, սեռական յարաբերութիւնից զրկել, առանձնացնել նրա սենեակը և քանի հնարաւոր է, մահճակալի բոլոր պարագաներն ու սպիտակեղէնն էլ հեռու պահել։ Առանձնացնել պէտք է նաև նրա գործածելիք ամանեղէնը, դանակը, դգալը, պատառաքաղը, անձեռոցիկը, թաշկինակները, գրասեղանի և ծխելու պիտոյքները, և ամէն բան այդ եղանակով կարգադրել թէ՛ տանը և թէ այնտեղ, ուր հիւանդը պարապմունք ունի։

Դրանով՝ հիւանդութեան փոխանցման վտանգը խիստ հեռանում է, իսկ բժշկութիւնն էլ թուլացնում է վարակման վտանգի սրութիւնը։ Երեք տա-

րուց յետոյ այդ զգուշութիւններն այլ ևս աւելորդ են դառնում։

Թէ քաղաքներում և թէ գիւղում սիֆիլիսով հիւանդը կարող է մնալ ընտանիքում, եթէ այդ բոլորը կատարուեն։

Մեր գիւղերից շատ շատերը դեռ ազատ են սիֆիլիսից։ Կեանքը առաջ է գնում և գիւղը դուրս է գալիս պարզ նահապետական կեանքի շրջանից։

Այժմեանից պէտք է ըմբռնել, թէ ինչ ցաւեր կարող են դրսից գալ, ուստի և պէտք ձեռնարկել պաշտպանուելու։

Սրանից կը ցանկայի, որ մեր գիւղը ազատ մնար սիֆիլիսից, այդ վատ ցաւից, ինչպէս համեմատաբար ազատ են եւրոպական՝ կուլտուրապէս զարգացած գիւղերը։

ԴԵՂԵՐ

ՍԻՖԻԼԻՍԻ ԴԷՄ

Դարերի ընթացքում՝ սիֆիլիսի դէմ կռուելու միակ դեղը եղել է սնդիկը և այժմ էլ նա է։ Փոխուել են միայն գործածութեան եղանակները։

Ամենքը անհամբերութեամբ սպասում էին, թէ երբ վերջապէս կը գտնեն սիֆիլիսի մանրէները, որպէս զի կատարելագործեն նրա բժշկութիւնը։

Այժմ նա գտնուած է, մեզ յայտնի—Շաուդինի սպիրոխէտն է։ Որն է հիւանդութեան մանրէն գտնելը—դժուարութեան միայն կէս ճանապարհն անցնելն է։

Փաստերը մեզ ցոյց են տալիս, որ միւս կէսը նոյնքան դժուար է, որքան և առաջինը, թերևս աւելի դժուար։

Օրինակ, յայտնի գիտնական Նէյսսէրը դեռ 1879 թւականին, 30 տարի ուրեմն առաջ, գտաւ գօնօկոկները—սուսանակի, այսինքն տրիպէրի մանրէները. բայց մինչև օրս դեռ չունինք որև է հիմնաւոր լաւ միջոց՝ սուսանակի դէմ։

Վաղուց, 1882 թւականից, յայտնի է նոյնպէս պրօֆեսոր Կոխի՝ թոքախտի մանրէն, իսկ թէ որքան կատարեալ է նրա բժշկութիւնը, այդ ամենքս լաւ գիտենք։

Դեռ շատ քիչ ժամանակ չէ անցնել սիֆիլիսի մանրէն գտնելուց ի վեր։ Յոյս ունենանք, որ այս դէպքում գիւտութիւնը աւելի բաղդաւոր կը լինի և շուտով մարդկութիւնը կը հարստանայ սիֆիլիսի աւելի կատարեալ բժշկութեամբը։

Հարցի լուծումը այժմ աւելի հեշտանում է նրանով, որ մենք միջոց ունինք փորձեր կատարելու կապիկների վրայ։

Այս ուղղութեամբ աշխատում են պրոֆեսոր Նէյսէրը և փարիզի Պաստեօրի հիմնարկութիւնը, յանձին պրոֆ. Մեչնիկովի, Րուի, Գերմանական և ուրիշ շատ գիտնականների։

Մեզ մօտ առանձնապէս աչքի են ընկնում Պետերբուրգի փորձնական բժշկականութեան հիմնարկութեան մէջ պրոֆ. Զաբօլօտնի։

Կապիկներին վարակում են սիֆիլիսով, նրանց արիւնը ստանում է սիֆիլիսի թոյնի—նրա մանրէների դէմ կռւող ոյժ, կազմւում է մեզ յայտնի հակաթոյնը։ Յետոյ, այդպիսի արեան հիւթը գործածւում են բժշկութեան համար։

Այդ ձևը շատ լաւ յաջողւեց աւերիչ դիֆտէրիտի վերաբերմամբ. արդեօք կը յաջողւի նա նոյնպէս և սիֆիլիսի վերաբերմամբ, թէ ուրիշ կերպ կը լինի։ Դա ապագայի հարց է։

Իսկ քանի որ սիֆիլիս հիւանդութիւնը չի սպասում այդ փորձերին, իր գործը տեսնում է,—ցանկանալով գիտնականներին լիովին յաջողութիւն այդ ասպարէզում, անցնենք այն հարցին թէ ներկայումս ինչ միջոցներ ունինք մենք, նրանով հիւանդներին յաջողապէս բժշկելու համար։

Ս Ն Դ Ի Կ

Եթէ ուսումնասիրելու լինինք հնուց, բժշկականութեան մէջ ընդունւած դեղերի պատմութիւնը, կը տեսնենք որ բժիշկները նրանց մեծ մասը վերցրել են ժողովրդական փորձերից։

Երբ դեռ բժշկականութիւնը կատարելագործւած չի եղել, մարդս—ինքը, դրդւած ինքնապաշտպանութիւնից, այս կամ այն հիւանդութիւնը դարմանելու համար դիմել է սուրբերի, բոյսերի և ջրերի։

Բժիշկները միշտ քննել են այդ միջոցները և վերցրել այն, ինչ իսկապէս օգտակար է եղել։

Ուրեմն չարաչար սխալւում են նրանք, որոնք կարծում են՝ թէ այլ են ժողովրդական և այլ՝ բժշկական միջոցները։

Այսպէս, սիֆիլիսը դեղը—սնդիկը ընդունւած միջոցն էր ժողովրդի մէջ։ Նա երևաց սիֆիլիսի հետ միասին։

Սնդիկը—արծաթէ ջուրը, լատիներէն Hydrargyrum, դարերի ընթացքում եղել է միակ իսկական միջոցը սիֆիլիսի դէմ։ 19-րդ դարում սրան աւելացաւ Իօդը։ Միայն այս երկու դեղերն ունենք, որոնք յատկապէս ազդում են և բժշկում սիֆիլիսը։

Բժշկականութեան մէջ փորձով ընդունւած էր՝ ջերմի դէմ Խինին, (քինաքինան)։

Երբ գիտնական Լավէրանը 1880 թւականին գտաւ ջերմի մանրէն—պլազմօդիաները, երևաց որ ոչ մի դեղ նրանց վրայ այնքան քայքայիչ կերպով չի ազդում, որքան խինինը։

Նոյնը ցոյց են տալիս կատարւած նախնական

փորձերը՝ սնդիկի վերաբերմամբ։ Այսինքն որ սնդիկը նոյնպէս քայքայում, սպանում է սիֆիլիսի մանրէներին, սպիրօխէտներին։

Ինչպէս ջերմի պլազմօդիաները գտնելուց յետոյ նրա միակ դեղը մնաց խինինը և բացատրուեց նրա ներգործութիւնը գիտնական տեսակէտից, այնպէս էլ այժմ դեռ մնում է և էլի երևի երկար կը մնայ սնդիկը՝ իբր սիֆիլիսի դէմ գործածուող միակ միջոցը, օգնական ունենալով Իօդը։

Գործածուող տնային դեղերի, դեղահատերի և փոշիների ու ծուխի մէջ՝ մեծ մասամբ խառն է լինում սնդիկը, միայն անհաշիւ. այն ինչ, սնդիկի վերաբերմամբ զգոյշ պիտի լինել և պիտի լաւ գիտենալ նրա չափն ու սահմանը, որովհետև նա մեր կազմուածքի համար որոշ չափով թոյն է։

Սնդիկը ինչ ձևով որ մանի մեր կազմուածքի մէջ, վերջ ի վերջոյ անցնում է արիւնը և երակների միջոցով հասնում է ամենուրեք։ Ուր որ նա պատահի սիֆիլիսի մանրէներին, արգելք կը հանդիսանայ նրա անդորր կեանքին։ Ենթադրւում է ներկայումս, որ նա ուղղակի կերպով չի ազդում սիֆիլիսի մանրէների վրայ, այնքան չնչին է նրա պարունակութիւնը արեան մէջ,—այլ փչացնում է նա նրանց սնունդը և զարկ է տալիս կազմուածքը պաշտպանող նիւթերի զարգացման, այն է՝ մեր յիշած սիֆիլիսի հակաթոյներին։

Այսպէս թէ այնպէս, սնդիկը կարճ միջոցում ոյժ է տալիս մեր կազմուածքին՝ ազատուելու համար թէ սիֆիլիսի մանրէներից և թէ սիֆիլիսի արտայայտութիւններից։

Կատարելուց յետոյ իր դերը, սնդիկը ժամանա-

կի ընթացքում դուրս է գալիս մեր կազմուածքից՝ մէզի, քրտինքի, թուքի և այլ ճանապարհներով։

Սնդիկը ճարպի հետ խառնելով՝ նաև իբրև սպեղանի է (մահլամ) գործածւում սիֆիլիսի դէմ։ Զանազան աղերի հետ խառնած էլ գործածւում են. խառնուած, օրինակ, սուլէմայի, կալօմէլի, սալիցիլի և բէնզօյինի թթուաների հետ՝ հեղուկ կամ փոշի դրութեամբ։

Ինչի հետ էլ խառը որ լինի սնդիկը, ինչ կերպով որ ներմուծւի կազմուածքի մէջ, միևնոյն է, նա միանում է արիւնի աղերի հետ և այդպէս թափանցում մարմնի մէջ։

ԿՈՇՏ ՇԱՆԿՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Ներկայումս վէրքի արտաքինովը ղեկավարուելու հին ձևից բացի, պէտք է նաև քննել թէ կասկած յարուցանող վէրքը պարունակում է արդեօք իր մէջ մէջ սիֆիլիսի մանրէներ։

Դրա համար պէտք է որոշ կերպով վերցնել վէրքի հիւթը և դիտել խոշորացոյցի տակ։ Եթէ գտնուեն սիֆիլիսի մանրէներ, իսկոյն և եթ պէտք է դիմել գործի։ Քանի որ դեռ սկզբում սիֆիլիսի մանրէների բոյնը կոշտ շանկրն է և նրանցից շատ քչերը միայն հեռացել են այդ վէրքից, ուրեմն և ամենից նպատակայարմարն է հեռացնել գլխաւոր բոյնը։

Բերլինի հիւանդանոցներում այդպէս անում են, եթէ միայն վէրքի տեղը յարմար է։

Վէրքը կտրելուց յետոյ, ցանում են նրա վրայ

սնդիկի փոշի, կալօմէլ և իսկոյն ձեռնարկում են ընդհանուր բժշկութեան, որպէսզի ոչնչացնեն այն մի քանի մանրէներն էլ, որոնք իրանց բունիցը, այսինքն կոշտ շանկրից, բաժանուած են եղել վաղօրօք։

Բժշկութեան այդ ձևը սովորական է դառնում և դրական հետևանքներ է տալիս։

Եթէ կոշտ շանկրը այնպիսի տեղ է գտնւում, որ յարմար չէ կտրել, այն ժամանակ նրա վրայ պէտք է այրել դեղերով։ Ոմանք այրում են վէրքի տեղը, միւսները գերադասում են չը գրգռել նրան, այլ գործադրել միայն սնդիկը, իբրև սիֆիլիսի մանրէներին ոչնչացնող ուժեղ դարման։

Վերջին դէպքում պէտք է խնամել կոշտ շանկրը. այն է վէրքը լւանալ և մաքրել։ Դրա համար ամենագործածական միջոցներն են. — եփած գոլ ջուրը, կամ բորակաթթւատի (Acidum boricum) և կամ սնդիկային աղի-սուլէմայի լուծւածքը, այսպէս: 1:1000 կամ 1:2000։

Բորակաթթւատի լուծւածքը կարելի է տանը պատրաստել։ Պիտի վերցնել մէկ թէյի գդալ լէքը բորակաթթւատ և խառնելով մէկ թէյի բաժակ տաք, եփ եկած ջրի մէջ, հալեցնել լաւ. սառը ջրի մէջ նա չի հալւիլ։

Սուլէմայի լուծւածքը պիտի պատրաստել՝ առնելով մէկ մաս սուլէմա, հազար, կամ երկու հազար ջուր։ Եւ որովհետև սուլէման թոյն է, դեղատունից կը տան պատրաստւած, բայց բըժշկի տոմսով միայն։ Սուլէմայի լուծւածքը չը պիտի դպցնել մետաղէ առարկաների, ապա թէ ոչ՝ կը փըչացնի։

Այս հեղուկներից մէկն ու մէկը հարկաւոր է որոշ չափով ածել մի մաքուր ափսէի մէջ և այնտեղ գցել բամբակի կտորներից շինած մի քանի գընդակիկներ։ Երբ նրանք ծծեն հեղուկը, պիտի հանել և քիչ քամել վէրքի վրայ։

Այդպիսով կը լւացւի։ Յետոյ նոյն հեղուկի մէջ թաց արած և լաւ մզած բամբակով էլ պէտք է չորացնել վէրքը։

Այդպէս մաքրելուց յետոյ է միայն, որ դեղը պիտի դնել վէրքի վրայ։ Իբր դեղ՝ գործածւում է սնդիկի պլաստիր (եախու), սպեղանի (մահլամ) և կամ փոշի։

Սնդիկի պլաստիր (լատիներէն Emplastrum ֆրանսերէն Emplastre)։ Յաճախ են դիմում այդ բանին՝ սիֆիլիսի ցաների արտաքին արտայայտութիւնների ժամանակ։

Պլաստիրը կտաւի կամ մետաքսէ մի կտոր է, վըրան դանակի հաստութեամբ դեղ ծեփած։ Որպէսզի ծալելու ժամանակ քսած տեղերը միմեանց չը կպչեն, ծածկում են ծեփւածքը բարակ քողով (մարլայով)։ Շատերը գործածելու եղանակը չիմանալով, այդպէս քողով էլ դնում են վէրքի վրայ, որ ի հարկէ չի կպչի։ Պէտք է նախ հարկաւոր չափով կտրած պլաստիրի երեսից հանել քողը և յետոյ միայն կպցնել վէրքի վրայ: Այն առաւելութիւնն ունի պլաստիրը, որ առանց կապելու կպչում է վէրքի վրայ։ Եթէ պլաստիրը չի կպչում, ապա ուրեմն հին է նա կամ լաւ չի պատրաստւած. եթէ քիչ տաքացնէք—կը կպչի։

Ոմանք պլաստիրի տեղ գործածում են սնդիկի

սպեղանին։ Սպեղանին այնքան պիտի քսել, որ վէրքը ծածկուի, յետոյ պիտի վրան դնել բամբակի կամ փափուկ մարլայի (յատուկ վիրակապ) կտոր և վիրակապով էլ պինդ կապել։ Իսկ եթէ տեղը յարմար է, ինչպէս օրինակ, տղամարդու սեռական անդամի ծայրը, վրայ բերած մարլը փոխարինում է փաթեթին։

Գործ են ածում նաև անգլիկի փոշի—կալօմէլը։ Փոշին պիտի փոքրիկ վրձինով ցանել չորացած վէրքի վրայ։

Եթէ վէրքը շատ մեծ է, կեղտոտ և ժահրակալուած, գերադասելի է նախ մի քանի օր վրան ցանել եօդից պատրաստած փոշի—եօդօֆօրմ, մինչև որ վէրքը մաքրուի։ Դա շատ լաւ և շատ ազդող դեղ է, միայն նրա գործադրմանը շատ խանգարում է վատ հոտը, որ պատճառում է հիւանդին։ Բայց եթէ զգոյշ կերպով է հիւանդը գործ ածում և չի թափում շրջակայ մասերի կամ սպիտակեղէնի վրայ—հոտը այնքան էլ չի տարածւիլ։ Լւանալիս էլ պէտք է զգոյշ լինել։ Բայց չէ՞ որ եօդօֆօրմը ոչ միայն շանկրների համար է գործածւում, այլ և վիրաբուժութեան մէջ ընդունուած դեղ է. հետևապէս շատ էլ կարիք չըկայ քաշւելու նրա հոտից։

Բացի կալօմէլից և եօդօֆօրմից, գործածական են նաև ուրիշ փոշիներ—Դերմատօլ, Կսէրօֆօրմ։ Ցանելուց յետոյ պիտի կապել բամբակով և վիրակապով։

Ամենից գործածական միջոցներն են սակայն անգլիկի պլաստիրը—ծեփւածքը, անգլիկի սպիտակ սպեղանին (մհլամը) և կալօմէլը։

Վէրքը կապելուց առաջ և յետոյ՝ պէտք է ձեռքերը լւանալ սապոնով։ Լաւ է դրա համար ունենալ սուլէմայի սապոն։ Վէրքի հին կապը և բամբակները պիտի ոչնչացնել. ամենից լաւ է՝ այրել։

ՈՒՌԱԾ ԽՈՒԼԵՐԻ (ԲՈՒԲՈՆՆԵՐԻ) ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Կոշտ շանկրին մօտ գտնւող ուռած խուլերը և չըցաւող բուբոնները պարունակում են նոյնպէս բաւական շատով սիֆիլիսի մանրէներ։ Այդ ուռուցքները պէտք է նոյնպէս ենթարկել բժշկութեան, ինչպէս և կոշտ շանկրը։ Սիֆիլիսից ուռած խուլերի կամ բուբոնների վրայ կպցնում են անգլիկի պլաստիր։ Պլաստիրը պէտք է ոչ միայն ուռուցքը ծածկի բոլորովին, այլ շուրջն էլ մէկ մատի լայնութեամբ աւելի բռնի, որպէսզի լաւ ներգործէ։ Պէտք է ամեն օր փոխել պլաստիրը. և եթէ մաշկի վրայ մնացորդ լինի, պէտք է մաքրել իւղում, սպիրտում կամ օդէկօլօնում թաթախած բամբակով, չորացնել և յետոյ կպցնել նորը։

Պլաստիրի փոխարէն նոյն նպատակով կարելի է քսել նաև մոխրագոյն անգլիկի սպեղանի (Unguentum Hydrargyri cinerei)։

Դրանք օգնում են խուլերի—բուբոնների դանդաղօրէն իջնելուն։

Եթէ բուբոնները շատ մեծ են, սպիրօխէտների վրայ անմիջապէս ազդելու համար, ներարկել պէտք է անգլիկի լուծւածք, եօդ, որից և ուռուցքը անցնում է։ Ճիշտ է, այդ ներարկումները մի քիչ ցաւ են պատճառում, բայց շուտ է անցնում և ուռուցքը շուտով տեղի է տալիս, իջնում է։

ՍԻՖԻԼԻՍԻ ԵՐԿՐՈՐԴ, ՊԶՐԻԿՆԵՐԻ ՇՐՋԱՆԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Արեան մէջ տարածւած ու տեղաւորւած սիֆիլիսի սպիրոխէտներից առաջացող արտայայտութիւնների բռնկումը այս շրջանում՝ պիտի ենթարկւի ընդհանուր բժշկութեան. այսինքն սնդիկը պիտի ներարկւի արիւնի մէջ:

Ընդհանուր բժշկութեան մասին կան զանազան հայեացքներ։ Առաջին, հնացած հայեացքով, սպասում են սիֆիլիսի արտայայտութիւնների այս բռնկմանը և յետոյ են սկսում բժշկութիւնը։

Միւս, նոր հայեացքով, առաջարկում են սպասողական դերը թողնել։ Եթէ հնարաւոր է, հէնց սկզբում պիտի կտրել և հեռացնել կոշտ շանկրը և չը սպասել, որ սիֆիլիսի մանրէները հանգստօրէն զարգանան ու բազմանան։ Պիտի կանխել, առաջուց ներարկել արեան մէջ սնդիկը՝ մանրէների զարգացումը կանգնեցնող ու նրանց կոտորող այդ դեղը։

Դրա համար է հէնց, որ շանկրը կտրելուց յետոյ, ինչպէս արդէն յիշեցինք, իսկոյն դիմում ենք ընդհանուր բժշկութեան՝ սնդիկով։

Վիճակագրական նորագոյն տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ սիֆիլիսի այս շուտափոյթ ձևի բժըշկութիւնը շատ լաւ է ազդում։ Հիւանդների մէջ, հարիւրից երեսունի վրայ, այդ տեսակ բժշկութեան շնորհիւ, չեն երևացել ոչ մի նշան։ Ուրեմն այդքան հիւանդի համար պիտի համարել սկզբից և եթ սիֆիլիսի

դէմը առնւած։ Եւ եթէ երևացել էլ են նշաններ, նրանք եղել են թոյլ և թեթև անցնող։

Այսպէս, առաջին, այն է վաղեմի հայեացքի համեմատ՝ երբ սիֆիլիսի ընդհանուր վարակման նշանները երևան գան, իսկ երկրորդ, նոր հայացքի համեմատ երբ կոշտ շանկրը կտրւի, անմիջապէս յետոյ— պէտք է արեան մէջ ներմուծել սնդիկ, որպէսզի սիֆիլիսի մանրէների տարածւելու ճանապարհով էլ ներս գնայ նրանց մեռցնող նիւթը, սնդիկը։

Այդ նպատակին հասնելու համար՝ սնդիկը ներմուծւում է զանազան ձևերով։

Սնդիկի գործադրութեան եղանակներն են՝ ուրեմն.—

1. Քսումներ։
2. Ներարկումն՝ մորթի տակ։
3. Ներքուստ գործածութիւն։
4. Վաննայի միջոցով։
5. Ծուխ տալ.
6. Արտաքուստ՝ վրան դնելով։

ՔՍՈՒՄՆԵՐ (ՕԾԵԼ)

Սնդիկի գործադրութեան ամենահին ձևն է դա։ Քսելն կատարւում է սնդիկի ապեղանիով: Ապեղանին մոխրագոյն է և կոչւում է Նէապոլիտանի մոխրագոյն ապեղանի։ Կազմւած է նա սնդիկից և խոզի ճարպից, պարունակում է 40—50% սնդիկ։

Սնդիկը պիտի ճարպի հետ լաւ տրորւած և միացրած լինի, որպէս զի կոշտութիւններ չը մնան՝ նոյն

իսկ խոշորացույցի տակ դիտած։ Հետևապէս սնդիկը պէտք է լաւ շաղախուած լինի խոզի ճարպի հետ։

Վերջին ժամանակներս սպեղանին պատրաստում են՝ սնդիկը խառնելով ուրիշ իւղերի հետ և։ Ամենից լաւը և գործածականն է Բէզօրբինի հետ խառը սպեղանին։ Բէզօրբինը առաջարկուած է 1894 թուականին և խառնուրդ է նշի իւղի, մեղրամոմի, սապոնի, լանօլինի և ժէլատինի։

Սնդիկի սպեղանին դեղատներից տալիս են մոմած թղթէ և կամ մագաղաթեայ փոքրիկ ծրարներով։

Քսելու համար՝ պիտի ծրարի ամբողջ բովանդակութիւնը կիսել, կէս մասը քսել մարմնի մէկ կողմի վրայ, մնացածը՝ միւս, համաչափ կողմի։ Այս քսումների նպատակն է՝ ներմուծել սնդիկը մորթի մէջ։ Բայց որովհետև մեզ յայտնի է որ առողջ մորթով ոչինչ չի ներմուծւում մարմնի մէջ, ուրեմն և հարկաւոր է որոշ ժամանակամիջոց, լաւ քսելու ոյժ, որպէս զի սնդիկը սպեղանիի միջոցով ներս մտնի այն բազմաթիւ փոքրիկ խորշերը և անցքերը որոնք գոյութիւն ունեն մորթի վրայ։

Այդպիսի խորշերն են՝ մազերի արմատները, իւղային և քրտինքի ծակոտիքները, որոնք բաց են, վերին աստիճանի մանր են ու միմիայն խոշորացույցի միջոցով տեսանելի։

Հիւանդը քսումներով պիտի սնդիկի որոշ մասը ներմուծի այդ ծակոտիքների մէջ, որովհետև նրանց են մօտենում երակների մանր ճիւղաւորութիւնները և հետևապէս նրանցով են վերցնում այնտեղ գտնւող սնդիկն ու տանում խառնում արեան հետ։

Սպեղանիի մնացած մասը մնալով մորթի վրայ,

զգեստի կամ վերմակի տակ շնորհիւ մարմնի տաքութեան՝ գոլորշիանում է։ Հիւանդը շնչում է այդ գոլորշիացած սնդիկը, որ անցնելով թոքերը, այնտեղից էլ երակների նոյնպիսի փոքր ճիւղաւորութիւնների միջոցաւ՝ խառնւում է արեան ընդհանուր հոսանքին։

Նախ քսել պէտք է մորթի մի մեծ տարածութեան վրայ, նշանակած մասն ամբողջապէս։ Մորթի ծակոտիները, ինչպէս ասացինք, մանր են և սնդիկը նրանցով քիչ կանցնի։ Որպէսզի այդ մանրիկ անցքերի թիւը շատ լինի՝ պէտք է վերցնել ուրեմն մորթի մի մեծ տարածութիւն։ Բժիշկները փորձով տալիս են այնքան սպեղանի ամեն քսելու համար, որ որոշ տարածութեան վրայով ներմուծւի մորթի մէջը և դուրսը մնայ մէկ օրւայ ներշնչման համար սնդիկի գոլորշիի պաշար։

Ոմանք, մանաւանդ մաժողները (մասաժ անողները, մերսողները) աշխատում են քիչ տարածութեան վրայ քսել, որպէսզի մէջը շատ սնդիկ մտնի և չը տարածւի մորթի վրայ։ Մենք սակայն տեսանք, թէ որքան սխալ է այդ մտածութիւնը։

Քսումների տեղը պիտի փոփոխել յաջորդաբար, որպէսզի մորթը չը գրգռւի նախ, և յետոյ՝ ժամանակ տրւի սնդիկին՝ լցւած անցքերից ծծւելու. գործողութիւն, որ դանդաղ է կատարւում։ Ընդունւած է այսպիսի կարգ.—ամբողջ քսելու մորթը բաժանւում է չորս մասի, ամեն մասը քսւում է առանձնակի. այնպէս, որ չորս օրւայ մէջ վերջանում է, այսպէս կոչւած՝ մէկ շրջան։

Առաջին օրը — քսումը պիտի կատարել երկու կռների վրայ, միջին կողմից-ուսից ցած մինչև համարեա ձեռքի թաթը։ Պիտի աշխատել այնպէս քսել, որ սպեղանին չը մտնի կաշու տակը, որովհետև այդտեղ կաշին բարակ է և հեշտ գրգռւող։

Երկրորդ օրը — երկու կողքերի վրայ, կամ տակը. փորին չանցնել։

Երրորդ օրը — ազդրերը, սկսած վերևից, դրսի կողմից (սեռական անդամից հեռու) դէպի ցած, և ներսի կողմը մինչև ծնկները։

Չորրորդ օր — սրունքները՝ ետևից — ծնկան տակից ցած, մինչև կրունկները։

Երբ շրջանը վերջանայ, հինգերորդ օրը պէտք է բաղնիք գնալ, կամ տանը լաւ լուացւել սապոնով։

Այս հինգերորդ օրը լուացւելու և հանգստութեան օրն է։ Յետոյ շարունակել նոյն ձևով, կատարել այնքան շրջաններ, որքան բժիշկը կը նշանակի։ Առաջին ընդհանուր բժշկութեան ընթացքում առհասարակ ընդունուած է 8—10 շրջաններ անել, այսինքն 32—40 քսումն։

Քսումը պիտի գործադրել առաւօտները թարմ ուժերով, կամ երեկոյեան և ուրիշ ժամանակ՝ միայն յոգնած չը պէտք է լինի հիւանդը։ Ձմեռը գերադասելի է որ հիւանդը ինքը-իրեն քսի, իսկ ամառները՝ ոչ։

Աւելի յարմար է միանգամից քսել երկու ձեռքով՝ երկու նշանակած կողմերն էլ. ի հարկէ բացառութիւնը ձեռքերի համար է, որ նախ պէտք է քսել մէկ ձեռքը, յետոյ միւսը։ Սպեղանին պէտք է տեղաւորել քսելիք տեղի վերևի մասում և այնտեղից սկսել քսելը, հետզհետէ ցած իջնելով և ծածկելով ամբողջ մորթը։ Եթէ հիւանդը շտապել է և սպեղանին չը քսած հաւաքւել է ներքևում — վերցնել պէտք է նրանից ձեռքով և անցկացնել վերև ու շարունակել քսել այնքան, մինչև որ մասը քսած տեղովն անցկացնելիս՝ չորութեան տպաւորութիւն ստանայ։ Դրա համար պահանջւում է մօտ 15—30 րոպէ, նայած մորթի առանձնայատկութեանը և քողին։

Սպեղանին պիտի քսել միշտ վերևից ներքև. ձեռքի շարժումները միայն մէկ ուղղութեամբ պիտի գնան — վերևից ներքև և ոչ թէ հակառակ կողմը։

Քսումը կատարել պէտք է ձեռքի ափի փափուկ մասով. զգոյշ պիտի լինել, որ սպեղանին չը մտնի մազերի արանքը և մնայ չը քսած։

Քսելիս՝ գործադրել պէտք է միջակ ույժ. այսինքն ոչ ուժեղ և ոչ թոյլ։ Թոյլ մարդիկ լաւ է հրաժարւեն քսելուց։

Քսումը կատարելուց յետոյ, ոչ մի փոշի չը պիտի ցանել վրան։ Մասաժ անողները (մաժողները) շատ են սիրում վրան ցանել բրնձի, տալկի և այլ փոշիներ, որպէսզի սպիտակեղէնը մաքուր մնայ և իրենց ծուլութիւնը չերևայ շատ անգամ։ Չը պէտք է թոյլ տալ այդ. դրանով խանգարւում է սնդիկի գո-

լորշիացումը, ուրեմն և շնչառությամբ սնդիկը ներմուծելու գործողությունը։

Որպեսզի մորթը քսումների միջոցով լավ խորացնի սնդիկը, պետք է որոշ չափով պատրաստել նրան։

Մորթը պետք է լինի մաքուր և փափուկ. այդ ժամանակ ավելի բաց են լինում մորթի մուտքերն ու խորշերը։ Դրա համար, նախ քան քսելը՝ հարկավոր է բաղնիք գնալ և կամ տանը լավ լվացվել։

Մորթը պիտի ազատել մազերից։ Մազերը շատ են խանգարում և դժվարացնում քսելը։ Քսելիս նրանք ձգվում են, մորթը գրգռվում է այն աստիճան, որ ստիպված են լինում նույն իսկ մի առժամանակ դադարեցնել և ընդհատել բժշկությունը։ Դրա համար էլ ավելի լավ է քսելիք տեղերը ածիլել և կամ մաքրել մազթափ ցեխով։ Այդ ցեխից շատ է գործածվում մեր բաղնիքներում. նա իրա մեջ պարունակում է մկնդեղ. պետք է ուրեմն ցեխի հետ զգույշ վարվել։

Ցեխը քսելուց քիչ անց՝ պետք է փորձել. եթե հեշտությամբ են պոկվում մազերը, իսկույն տաք ջրով պիտի լավ լվացվել։ Եթե ուշացնեն, ցեխից կայրվի մորթը և այդ տեղերի վրա երկար ժամանակ հնարավոր չի լինիլ սնդիկը քսել։

Պատահում է, որ ցեխը այնքան գրգռում է մազերի արմատները, որ քսած տեղերը կարմիր պզուկներ են դուրս տալիս։ Մեծ մասամբ ցեխի գործածությունից մի քանի օր յետոյ են դուրս տալիս այդ պզուկները։ Հիվանդը շփոթվում է և կարծում է թե սիֆիլիսի դուրս տվածներ են։

Քսելու ժամանակ կաշին պիտի չոր լինի։ Եթե քրտինք կա, պիտի չորացնել մորթը և ապա քսելն սկսել։ Այդ պատճառով էլ գերադասելի է ամառը, որ ուրիշը քսի։ Շոգ ժամանակ հիվանդը քրտնում է քսելիս. աշխատանքից ավելի ևս քրտինքն է, որ խառնվելով սպեղանու հետ՝ ցեխ է դառնում և անհնար դարձնում մորթի մեջ թափանցելը, որքան և ուժով ու երկարատև աշխատեն։

Դրա համար, տաք վաննա ընդունելուց և կամ բաղնիքից յետոյ, պիտի 1—2 ժամ սպասել, մինչև որ քրտինքը անցնի։

Քսումները, բացի իրենք հիվանդները, կարող են կատարել նաև մերձավորները և կամ մասաժիստը։ Բայց որպեսզի քսողները իրենք իրենց մեջ չը ներմուծեն սնդիկ—ձեռքերին պիտի հագնեն ռետինից կամ ձկան փշտիկից ձեռնոցներ և կամ քսումը կատարեն սունկի նման փայտից շինած մի քսիչով։ Այդ գործիքը իր տափակ մասի վրա ունի հագցրած ձկան փշտիկ։

Ամենից յարմար գործիքն է սակայն մերկ ձեռքը, որովհետև ձեռնոցները և սունկանման գործիքը քաշքշում են և գրգռում մորթը։ Եթե սիֆիլիսով երկու հիվանդներ միասին են ապրում և կամ բժշկվում, ավելի յարմար է, որ մերկ ձեռքերով մեկը միւսին սնդիկը քսէ։ Սնդիկով բուժումը կատարելու ժամանակ կազմվածքը հեշտությամբ է ազդվում ցրտից և խոնավությունից ու հիվանդը կարող է հեշտությամբ մրսել, հիվանդանալ։ Այդ պատճառով էլ լավ է, որ հիվանդները հագնեն փափուկ բրդե շապիկ (ֆուֆայկա, ֆանելա) և մոխրագույն վարտիկ, որպեսզի մոխրագույն սպեղա

նին չը կեղտոտացնէ սպիտակեղէնը։ Բուռը պիտի կատարել մեծ և տաք մի սենեակում. ոչ ոք ներկայ չը պիտի լինի, քանի որ սնդիկի մի մասը գոլորշիանում է։

Տեսել եմ ես մասաժիստներ (մերսողներ), որոնք հիւանդների մարմնին մոխրագոյն սպեղանի են քսել, և իրանք առողջ, նոյն իսկ ձեռնոցով են քսել, բայց գոլորշիացած սնդիկից շնչառութեամբ թունաւորուել են։

Քսելուց յետոյ պատուհանները պիտի բանալ և օդը մաքրել։ Այդ միջոցին պիտի հիւանդը անցնի մի ուրիշ սենեակ։

Սնդիկի սպեղանին, բացի ծրարներով, վերջերս դեղատներում տալիս են ապակեայ խողովակով էլ, որը մի ծայրին մետաղեայ փոքրիկ խուփ ունի, միւս ծայրը կլոր է, խցանով փակած, վրայից փոքրիկ կլոր անցքով։

Խողովակի հետ տալիս են նրա երկարութեամբ մի կլոր փայտ էլ. խողովակը լիքն է մոխրագոյն սընդիկի սպեղանիով և վրան կրում է թղթի վրայ նշանակած բաժանմունքներ։ Իւրաքանչիւր երկու սև գծի տարածութեան մէջ մի գրամ սպեղանի կայ։ Եթէ բժիշկը նշանակում է քսել մի գրամ, պիտի հանել այնքան, որքան գտնւում է երկու գծի տարածութեան մէջ տեղը. եթէ երկու գրամ՝ 4 գծի մէջ եղածը։ Սպեղանին հանելու համար՝ պիտի նախ խուփը պտտեցնելով հանել, յետոյ ներքևից կլոր փայտովը հրել խըցանը և սպեղանին դուրս կը գայ վերևի նեղ անցքից այնքան, որքան որ ցանկանաք։

Սպեղանին ուզածին չափ հանելուց յետոյ, ամեն անգամ մնացածի բերանը պիտի ծածկել։ Խողովակը այն յարմարութիւնն ունի, որ մաքուր է և մէջը օդ չի մտնում, ուրեմն և նրան կարելի է պահել առանց

փչանալու՝ երկար ժամանակ։ Խողովակների սպեղանին պարունակում է $33^1/_3\,^0/_0$ (տոկոս) սնդիկ։ Կայ երկու անգամ ուժեղ սպեղանի էլ։ Առաջինը, աւելի թոյլը, լատիներէն կոչւում է «Միմպլէքս», իսկ երկրորդը «Դուբլէքս»։

Պատահում է, որ սպեղանին շատ խղալի է լինում, և ինչքան երկար քսեն, չի չորանայ։ Պէտք է փոխել այդպիսի սպեղանին։ Րէզօրբինով պատրաստած սնդիկի սպեղանին աւելի հեշտ է քսւում և շուտ է չորանում։

ՍՆԴԻԿԱՅԻՆ ՀԵՂՈՒԿԻ ՍՐՍԿՈՒՄԸ ՄՈՐԹԻ ՏԱԿ

Այս ձևը թէև համեմատաբար նոր է մտցրած բժշկականութեան մէջ, բայց արդէն շատ տարածուած է։

Երկու տեսակ հեղուկներ են գործածւում այդ նպատակով—լուծւող և չը լուծւող սնդիկի աղեր։

Լուծւող սնդիկի աղերից պատրաստած հեղուկը պարզ է. սնդիկի աղը ամբողջովին լուծուած է նրանում. ներարկումից յետոյ նա շուտով է ծծւում արեան մէջ, նոյնքան էլ շուտով դուրս է գալիս կազմւածքից։ Սրսկած տեղը քիչ ցաւում է, քիչ էլ ուռչում է, կարմրում։

Ամենից գործածական են Սուլէմայի, Բէնզօինի, Ցիանիի սնդիկներ։ Սովորաբար սրսկւում են ամեն օր։

Չը լուծւող, դժուարալոյծ աղը մեծ մասամբ պարզ չէ. սնդիկը նստում է սրւակի մէջ, այդ պատճա-

ռով էլ նախ քան գործածելը, մարդ ստիպված է լինում լաւ խառնել հեղուկը։ Մորթի տակ ներարկելով՝ նա ծծւում է դանդաղ, երկար է մնում կազմւածքի մէջ և իր այս յատկութիւնով նմանում է քսելու արդիւնքին։ Ներարկած տեղը աւելի է ցաւում, յաճախ տանջելու աստիճանի. աւելի է ուռչում, կոշտութիւններ է յառաջացնում և կարմրեցնում է. նոյն իսկ բացառիկ դէպքերում ժահրակալւում է տեղը և փտում: Գործածական են Կալօմէլի, Սալիցիլի, դեղին թթւատի մնդիկային աղերը։ Սրսկւում են դրանց շաբաթը 1—2 անգամ. այնպէս որ, շնորհիւ ընդմիջումների, տանելի է լինում։ Եթէ հիւանդը շատ է դժուարանում, չը պէտք է պնդել։

Ներարկումներին ամէն մարդ միատեսակ չի դիմանում, նոյն իսկ եթէ կատարում են մաքուր և լաւ։ Ոմանք շատ ցաւ են զգում, ոմանք քիչ։ Ոմանց վրայ ներարկած տեղը չի ուռչում և կարմրում, միւսներին՝ ընդհակառակն։ Եւ կամ մնդիկի մի տեսակ բաղադրութիւնը տանելի է լինում, միւսը ոչ։ Կախուած է դա մարդու առանձնայատկութիւններից, թէև հիւանդները աւելի տրամադիր են մեղադրել բժշկին։

Հիւանդների մեծամասնութիւնը 1—2 ներարկումից յետոյ սովորում է և հեշտութեամբ դիմանում։

Ցաւերը կարելի է մեղմացնել՝ դնելով վրան սառը ջրի մէջ թրջած և քամած քաթանի մի կտոր։ Առնել, օրինակ, թաշկինակը, ծալել 3—4 տակ, թրջել սառը ջրի մէջ, քամել և դնել ցաւող տեղի վրայ։ Երբ քաթանը տաքանայ, պիտի փոխել։ Ցաւերը յաճախ հանգստանում են նաև տաք վաննայով 30° R. նստել 15 րոպէ։

Ներարկումները պէտք է ինքը բժիշկը անի և կամ նրա օգնականը։ Դժուար բան չէ դա, բայց պէտք է վիրաբուժական խիստ մաքրութիւն պահպանել։ Հիւանդը, ամէն անգամւայ ներարկումի համար այցելելով բժշկին, միջոց կը տայ նրան ծանօթանալու թէ իր կազմւածքի առանձնայատկութիւնների և թէ հիւանդութեան հետ՝ մօտիկից։ Բացի այդ, բժիշկը հնարաւորութիւն կունենայ թունաւորման դէպքում՝ հէնց սկզբից նկատել և ժամանակին դադարեցնել ներարկումները։

Խորհուրդ կը տամ միայն, որ իւրաքանչիւր հիւանդ իր համար ունենայ սպիտակ ոսկուց (պլատին), կամ հասարակ պողպատից ներարկման համար յատուկ ասեղ։ Սպիտակ ոսկուց ասեղը թէև թանգ է, արժէ մօտ մի րուբլի, բայց միշտ մաքուր է մնում և երկար դիմանում։

Ներարկումները անում են մէջքից և նստելատեղից։ Գերադասելի է նստելատեղը, որովհետև շատ փափուկ մսի միջից մնդիկը տարածւում է և ծծւում հեշտութեամբ։

Շատերը վախենում են ներարկումից, այն ինչ այդ գործողութիւնը չնչին ցաւ է պատճառում և տեւում է մի վարկեան միայն։

Ծակելիս և սրսկելիս՝ չը պիտի շարժել. ասեղը կարող է կոտրուել, եթէ մանաւանդ հասարակն է։ Եթէ հիւանդը վախենում է ներարկումից, աւելի լաւ է երեսի վրայ պառկի։ Ներարկումից յետոյ սրսկած տեղը քիչ պիտի տրորել։

Ներարկումների ժամանակ վաննաներ ընդունելը թէև այնպէս անհրաժեշտ չէ, ինչպէս քսումների

ժամանակ, այնուամենայնիւ լաւ ազդեցութիւն է ունենում։ Վաննան արեան ընդհանուր շրջանառութիւնը կանոնաւորում է, փափկացնում է ուռկած տեղերը և նպաստում սնդիկի իւրացմանը։

ՍՆԴԻԿԸ ՆԵՐՔՈՒՍՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ

Սնդիկը ներքուստ տալիս են դեղահատերի (հաբեր, pilulae), փոշիի և կամ հեղուկի վերածած։

Ամենագործածականն են դեղահատերը։ Նրանց ընդունելու ձևը շատ հեշտ է. պէտք է ընդունել ջրով կամ կաթնով։

Եթէ դեղահատերը լաւ չեն պատրաստած, կամ հին են և չորացած, այն ժամանակ լաւ չեն լուծւում ստամոքսում, ուրեմն և կարող են չազդել հիւանդութեան վրայ։

Որպէսզի չը չորանայ, շինում են նրանց Լանոլինով։

Ինքնըստինքեան ներքուստ ընդունած սնդիկը վատ է ազդում ստամոքսի, աղիքների և բերանի յուղաթաղանթի վրայ, առաջացնելով բորբոքութիւններ։

Իբրև սնդիկի փոշի՝ ամենից շատ գործ է ածւում Կալոմէլը։ Նա սպիտակ է, սնդիկի քլորի (խլօր) բաղադրութիւն է։ Մանաւանդ յաճախ տրւում է նա ներքուստ՝ երեխաներին, որոնք շատ հեշտութեամբ են տանում։ Տալիս են ջրով, կաթով. դժւար է հալւում։

Սնդիկի հեղուկները զանազան են լինում և կազմած՝ սնդիկի աղերից, մեծ մասամբ ջրի հետ։ Ամենագործածականն է Սուլէման—կարմիր սնդիկ՝ իւդախտան։

Որովհետև բոլոր այս ձևերով սնդիկի գործածութիւնը, ինչպէս ասացինք, վնասում է ստամոքսին և աղիքներին, շատ անգամ փորլուծութիւն, փորացաւ է առաջ բերում—այդ պատճառով էլ սնդիկի հետ խառնում են նաև աֆիոնը (օպիի)։ Նա որոշ չափով թուլացնում է սնդիկի այդ վատ ազդեցութիւնը։

Սնդիկը ներքուստ ընդունելիս՝ պիտի խառնել կաթի հետ, որպէսզի ստամոքսը և աղիքները պաշտպանւեն, չը գրգռւեն և բժշկելով սիֆիլիսը՝ չը յառաջանայ բորբոքումն այդ գործարանների մէջ։ Սնդիկի հեղուկը պէտք է գործ ածել փայտեայ գդալով, որովհետև մետաղէ գդալները արծաթաջրւում են։ Ընդունել պէտք է ուտելուց յետոյ։

Եթէ, չը նայած ձեռք առած զգուշութիւնների, առաջանայ փորացաւ և փորլուծութիւն, պէտք է դադարեցնել դեղերի գործածութիւնը և դիմել բժշկին։

ՍՆԴԻԿԸ ՎԱՆՆԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ

Դրա համար պէտք է ունենալ տաք ջուր 29—31 աստիճան ըստ Րէօմիւրի. լցնել պէտք է վաննայի մէջ այնքան, որ ջուրը ծածկել կարողանայ մարմնի մասերը մինչև կուրծքը, ծծերը։ Վաննան պէտք է լինի փայտեայ կամ քարէ։

Ջրի, ինչպէս և սնդիկի քանակութիւնը պիտի որոշել՝ նայելով երեխայի համար է, թէ՞ մեծի։ Ասել ենք արդէն, որ սնդիկի հեղուկը առողջ, չը վնասւած մորթի միջով չի անցնիլ։ Բայց սնդիկի այս կերպ գործածութիւնը նշանակում ենք նրա համար, որ նա ազդի անմիջապէս հիւանդի մորթի երեսին տարած-

ւած սիֆիլիսի դուրս ուածների, վէրքերի վրայ։ Սընդիկի մի մասն էլ գոլորշիանալով կը ներմուծւի շնչառութեամբ։

Բուժման այս ձևը ընդունւած է մանաւանդ երեխաների համար, որոնց մարմինը յաճախ ծածկւած է լինում սիֆիլիսի ջրակալող կամ թարախոտ բշտիկներով։

Երեխայոց համար կարելի է սնդիկի վաննա պատրաստել նաև փայտեայ խոր տաշտերի մէջ։

Մորթի այդ անախորժ երևոյթները, դուրս ուածները, սնդիկի անմիջական ներգործութեան տակ՝ շուտով անցնում են։

Սնդիկը վաննայի ջրի հետ խառնելու համար նշանակում են փոշիի կամ հեղուկի ձևով, որ ամբողջովին պէտք է շուռ տալ մէջը և փայտով խառնել։ Զգուշանալ որ վաննայի ջուրից հիւանդը կուլ չը տայ։

Սնդիկի վաննա ընդունելուց յետոյ, նրա ջուրը իսկոյն պէտք է թափել արտաքնոցի կամ հորի մէջ. հիւանդին և պահողներին էլ պիտի տեղափոխել ուրիշ սենեակ, իսկ վաննայի սենեակի պատուհանները բանալ և օդը մաքրել։

Առհասարակ պէտք է զգոյշ վարւել սնդիկի հեղուկների, փոշիի և դեղահատերի հետ, պիտի միշտ փակած պահել նրանց առանձին, որպէսզի սխալմամբ մի ուրիշը չը վերցնի, գործածի և թունաւորւի։

ՍՆԴԻԿԸ ԾՈՒԽ ՏԱԼՈՎ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Այս ձևը շատ հին, միջնադարեան է, բայց ժողովրդի յիշողութեան և երևակայութեանը մէջ շատ վառ է մնացել, մանաւանդ ամենապահպանողական տարրի, հէքիմ կանանց մէջ։ Բժիշկները շատ հազիւ են գործածում ծուխ տալը։ Այդ գործողութիւնը կատարւում է հետևեալ կերպով —

Հիւանդին նստեցնում են մի աթոռի և կամ, եթէ հիւանդը թոյլ է, պառկեցնում են մահճակալի վրայ, տակը դնում են կրակարան, վրան ածում են սնդիկ (Կինավար-Cynabaris), որ այրւելով՝ մխում է։ Եւ կամ դնում են կաթսա սնդիկի հեղուկով, որ հետզհետէ գոլորշիանում է։

Հիւանդին իր մահճակալով, աչքերի տակից մինչև յատակը, ծածկում են վերմակների մէջ այնպէս, որ նա ներս շնչի սնդիկի այդ գոլորշիները և միևնոյն ժամանակ տաքութեան շնորհիւ լաւ քրտնի։

Նայած հիւանդի ուժերին, նրան պահում են երկար կամ կարճ ժամանակ։ Թոյլ կազմւածքի կամ սրտի տէր հիւանդները չեն կարողանում տանել, ուշագնաց են լինում։

Այս ձևով բժշկելիս՝ սնդիկը անհաշիւ քանակութեամբ է մտնում մարդու կազմի մէջ. այնպէս որ իբրև դրա հետևանք՝ երբեմն ուժեղ թունաւորումն է առաջ գալիս, որից և հիւանդը տանջւում է ամիսներով։ Այդ ձևը չունի ոչ մի առաւելութիւն։

Առաջ, միջին դարերում, երբ թունաւորումը սիֆիլիսի բժշկութեան համար համարւում էր ցան-

կալի և կարևոր,—հասկանալի էր այդ ձևի գործածութիւնը. իսկ այժմ նա համարւում է վնասակար կամ աւելորդ։ Դժբախտաբար քիչ չէ այն հիւանդների թիւը, որոնք դեռ այժմ էլ ծուխ անելու համար՝ դիմում են պառաւ կանանց և հէքիմներին։

Հասարակութեան համար ծուխ տալը ունի մի այլ վնասակար կողմ ևս։ Չը գիտեմ ինչից դրդւած, պառաւ կանայք և հէքիմները համոզում են հիւանդներին, որ ծուխ տալը վերջնական, լաւ և հիմնաւոր միջոցն է սիֆիլիսի դէմ, և որ նրա գործադրութիւնից յետոյ, կարիք չըկայ այլևս դիմել բժշկութեան. որ վատ ցաւը, սիֆիլիսը դրանից իսպառ կանցնի և դրա համար պէտք է համբերութեամբ տանել բուժւելու այդ տանջանքը, նրանից առաջացած թունաւորման չարչարանքները, որովհետև արիւնը դրանից բոլորովին կը մաքրւի։ Այդպէս են հաւատացնում հիւանդին և նա ծուխի ենթարկւելուց յետոյ, բոլորովին հանգիստ է և անհոգ։ Բայց անցնում է 1—2 կամ աւելի տարի և ահա սիֆիլիսի բարդութիւնները առաջ են գալիս իրենց բոլոր սարսափներով, որոնց մասին մենք արդէն խօսել ենք։

ՄՆԴԻԿԸ ԱՐՏԱՔՈՒՍՏ, ՎՐԱՆ ԿՐԵԼՈՎ

Մնդիկի զանազան բաղադրութիւնները դրսից կախում են, որպէսզի իւրացնեն նրանց գոլորշիները շնչառութեամբ։

Մենք քսուքները նկարագրելիս արդէն ասացինք, որ մնդիկի սպեղանին պէտք է թողնել մարմնի վրայ, չը լւանալ, փոշի չածել, որովհետև նա մեր տաքութիւնից գոլորշիանում է և շնչառութեամբ իւրացընւում։

Մնդիկի այս յատկութեանը վրայ հիմնւած, մարմնի որոշ մասերը ծածկում են մնդիկի սպեղանիով, կամ կպցնում են մնդիկի պլաստիրներ, և կամ փոքրիկ բարձեր են շինում լի մնդիկի որոշ բաղադրութեամբ և կախում են կրծքից։ Հիւանդը շնչառութեամբ իւրացնում է գոլորշիացած մնդիկը։

Բայց այստեղ էլ կատարւում է ամեն ինչ անհաշիւ.—յայտնի չէ թէ որքան է գոլորշիանում. գուցէ շատ, գուցէ քիչ։

Այս բժշկութիւնը կարելի է համարել ամենաթոյլը և գործադրւում է միայն այն դէպքերում, երբ հիւանդը շատ թոյլ է. այդպիսի դէպքեր էլ բարեբախտաբար շատ հազիւ են պատահում։

ԱՄՓՈՓՈՒՄՆ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՁԵՒԵՐԻ

Այդպէս ուրեմն, մնդիկը կազմւածքի մէջ ներմուծելու եղանակներն են.—ներարկումն, ներքուստ՝ դեղահատերով, փոշիով, հեղուկի ձևով, արտաքուստ՝ քսուքներով, ծուխ տալով, մնդիկի վաննաներով և մնդիկի բաղադրութիւնները զետեղած մարմնի վրայ։

Շատ գործածական են դրանցից՝ քսուքները, ներարկումները և ներքուստ դեղահատեր։ Քսելը մեզնում ընդունւած ձևն է. գերմանացիք գերադասում են ներարկումները, որ առաջին անգամ հէնց այնտեղ էլ առաջարկել է գործադրել պրոֆեսոր Լէվինը։ Ֆրանսիացիք չեն սիրում ոչ իրանց կեղտոտել մոխրագոյն սպեղանիով և ոչ էլ ցաւերի ենթարկել նե-

բակտերիների միջոցով։ Նրանք կողմնակից են դեղահատերի, որ հեշտ է ընդունել ու նրանց դեղարւեստական ճաշակին էլ հակառակ չէ։

Ես խօսում եմ ընդհանրապէս տարածւած ձևերի մասին։ Բժիշկները ի հարկէ հիւանդութեան ամեն դէպքը լաւ քննում են և համապատասխան ու յարմար ձևը գործադրում։

Այս երեք ընդունւած եղանակների գործադրութիւնը այն առաւելութիւններն ունին, որ նրանց միջոցով մենք կարողանում ենք հաշւով և ցանկացած չափով ներմուծել սնդիկը հիւանդի կազմւածքի մէջ. այսինքն այնքան, որքան մենք փորձով կարևոր ենք համարում հիւանդութիւնը բժշկելու համար՝ առանց թունաւորման։

Շատ հիւանդներ խորշում են սնդիկից, առարկելով թէ նա թոյն է, վնասակար է մարդուն, փչացնում է, փթեցնում ոսկորները։

Այս առարկութիւնները որոշ չափով հիմք ունին... Չափազանցութիւնները անհետևանք և անվնաս չեն անցնում։

Հէնց դրա մէջն է գիտական բժշկութեան առաւելութիւնը, որ գիտութեան և կեանքի դարաւոր փորձերի և դիտողութիւնների վրայ յենւած, մշակւել են վերջ ի վերջոյ այնպիսի ձևեր և չափեր, որոնք մաքառելով հանդերձ սիֆիլիսի դէմ, չեն քայքայում մարդու կազմւածքը, չեն թունաւորում նրան։

Այս տեսակէտից, բժշկութեան մէջ սնդիկի ամենալաւ գործածութեան եղանակները համարւում են քսելը, ներարկումը և ներքուստ՝ դեղահատերը. երեխայոց համար՝ փոշին, կալոմէլը։

Սնդիկի ներգործութեան մասին խօսելիս մենք ասել ենք, որ նա իր դերը կատարելուց յետոյ, թողնում է կազմւածքը և դուրս է գալիս մեր բնական արտաթորութիւնների միջոցաւ. օրինակ՝ թուքի, քըրտինքի, արտաշնչած օդի, կղոջ կաթի և ամենից շատ՝ փորի արտաթորութեան և մէզի։

Սնդիկի ընդունելուց մի երկու օր անց, կարելի է նրանից գտնել մէզի մէջ։ Բժշկութիւնը շարունակելու դէպքում՝ մէզի մէջ հետզհետէ աւելանում է սնդիկի քանակութիւնը. իսկ երբ վերջանում է բժըշկութիւնը, դեռ էլի ամիսներ շարունակ նշմարւում է նրանում սնդիկի հետքեր։

Վերջերումս կատարած հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ ներարկած սնդիկը, եթէ կազմւածքը առողջ է, շատ շուտ է դուրս ելնում. այն ինչ, սիֆիլիսոտի մէջ, երկար են մնում հետքերը, մանաւանդ հիւանդութեան սկզբի 2—3 տարւայ ընթացքում։ Սա պարզ կերպով ապացուցանում է, որ առողջ մարդը պէտք չունի սնդիկի և նրա կազմւածքն էլ աշխատում է շուտով ազատւել այդ աւելորդ բեռից, իսկ սիֆիլիսոտը պահանջ ունի և երկար պահում է նրան իր մէջ, մանաւանդ սկզբում, երբ կազմւածքը ուժեղ կռիւ է մղում սիֆիլիսի մանրէների դէմ։ Ուրեմն սնդիկը այդպիսի դէպքում բեռը չէ նրա համար, այլ ընդհակառակն՝ օգնող մի ոյժ. ուստի և կազմւածքը նրան աւելի երկար է պահում իր մէջ։

Սնդիկ բովանդակող մէզից մենք օգտւում ենք բժշկութեան միջոցին։

Ասացինք, որ սնդիկի գործածութիւնը պիտի ու-

նենայ չափ ու սահման. բայց ինչո՞վ և ի՞նչպէս չափել և սահման դնել։

Նախ որ, պիտի հետևել հիւանդի ընդհանուր դրութեան ընթացքին և տեսնել թէ ինչպէս է կազմւածքը տանում սնդիկը։ Դա սակայն յարաբերական նշանակութիւն ունի. կայ մի այլ, աւելի ճշգրիտ եղանակ, ուրիշ նշան սնդիկի վերաբերութեամբ։ Մէզի քիմիական վերլուծումն է դա։

Սնդիկը մէզի մէջ գտնելու և նրա քանակը որոշելու համար՝ գոյութիւն ունին մի քանի եղանակներ։ Ամենից յայտնին և գործնականն է՝ պրոֆեսոր Սաուկովէնկովինը։

Մի շարք քիմիական վերլուծութիւններով՝ կապում են մէզի մէջ պարունակող սնդիկը, ապա եփում և գոլորշիացնում են. փոքրիկ ապակեայ փորձիչ սրւակում (պրօբիրկա) եղած սնդիկը եփելուց՝ իօդի հետ խառը նստում է խողովակի վրայ, կազմելով կարմիր օղակ. հաստութիւնը, համեմատելով պատրաստի աղիւսակի հետ, ցոյց է տալիս, թէ մէզը որքան սնդիկ է պարունակում։

Այս տարրալուծութեամբ մենք հաստատ իմանում ենք թէ արդեօք հիւանդի կազմւածքում սնդիկը բաւակա՞ն է, թէ կարող ենք անվնաս շարունակել բուժումը և կամ թէ, փոքրիկ ընդմիջումից յետո՞յ պէտք է սկսել, թէ՞ դեռ էլի արեան մէջ կայ սնդիկի պաշար և պէտք է սպասել։

Փորձով նշանակւած է թւային որոշ սահման, որից և օգտւում ենք՝ սնդիկով բուժումը կատարեալ դարձնելու համար։

Նկատւած է, որ սնդիկը ամենից երկար է պահ-

ւում կազմւածքում այն ժամանակ, երբ բժշկութեան համար քսումներ են գործադրւում և յետոյ, ներարկումներ՝ դժւար լուծւող սնդիկի աղերի։

Քանի որ մենք գիտենք, թէ սիֆիլիսի մանրէները կարող են իրենց տեղերում կենսունակ մնալ և առաջ բերել նորից հիւանդութեան վերադարձը, ուրեմն և գնահատելի է առանձնապէս քսումների և ներարկումների գործադրութիւնը, որովհետև դրանցով սնդիկը երկար է մնում մարմնի մէջ և նրա երկարատև ազդեցութեան ներքոյ՝ կարող է ոչնչանալ հիւանդութեան սկզբնապատճառը։

Հէնց դրան պէտք է վերագրել, որ ծանր դէպքերում ամեն տեղ և միշտ գործ են ածում քսումները։

Ներքուստ ընդունած, խմելու սնդիկը, ինչպէս ասացինք, վնասում է ստամոքսի, աղիքների և բերանի յուշաթաղանթին, այն ինչ քսումները և ներարկումները ոչ մէկ գործարանի չեն վնասում։ Այդ պատճառով էլ նրանք աւելի են ընդունւած մեզ մօտ։

Բայց լինում են բացառիկ դէպքեր, երբ հիւանդը չի կարող իրագործել, չի կարող տանել ոչ քսում և ոչ ներարկումը։ Այդպիսի դէպքերում, եթէ հիւանդի ստամոքսը առողջ է, կարելի է տալ սնդիկը խմելու, ներքուստ։ Ինձ պատահել են դէպքեր, երբ հիւանդը պարտաւորւած պիտի գիւղ գնար, Տաճկահայաստան կամ որև է տեղ, ուր անկարելի էր բժշկութիւնը վարել քսումներով կամ ներարկումներով։ Այդպիսի դէպքերում բաւական յաջող ծառայութիւն են անում սնդիկի դեղահատերը։

Առհասարակ սնդիկի բժշկութեան այս կամ այն

ձևի ընտրութիւնը, գործադրութիւնը, սնդիկի քանակը և բժշկութեան ժամանակները որոշելը, այլև շատ ուրիշ պայմաններ—բոլորն էլ պէտք է ի նկատի ունենալ՝ սիֆիլիսից կատարելապէս բուժելու համար։

Սնդիկով բժշկութիւնը պէտք է յիրաւի վարել հաշւով և մեծ զգուշութեամբ։ Ամեն մարդ միատեսակ չի ազդւում սնդիկից։ Կան անհատներ, որոնք հեշտութեամբ են դիմանում նրան և այն՝ մեծ չափով ընդունելուց յետոյ էլ։ Կան, որոնց վրայ նոյն իսկ չնչին քանակութիւնը ազդում է վատ. երևան են գալիս թունաւորման թեթև նշաններ՝ չը նայած բժշկի ձեռք առած զգուշութեան ամեն միջոցներին։ Այդպիսի դէպքերում իսկոյն և եթ ի հարկէ պիտի ընդհատել սնդիկի ներմուծումը։

ՍՆԴԻԿԻՑ ԹՈՒՆԱՒՈՐՒԵԼՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ

Երբ կազմւածքի մէջ այնքան սնդիկ է մտցրած, որ այլևս չի կարողանում իւրացնել, և կամ աւելորդ մասը հեշտութեամբ արտաթորել—այն ժամանակ երևւում են թունաւորւելու նշանները։

Սնդիկից թունաւորւելը լինում է երկու տեսակ.— թեթև և զօրեղ. վերջինս պատահում է մեծ մասամբ հիւանդի ծայրահեղ անփութութիւնից։ Կամ նա չի կատարում բժշկի պատւէրները, կամ առանց թոյլտւութեան շարունակում է բժշկութիւնը և կամ գործածում է նշանակած չափից աւելի։ Մատնանիշ եմ անում այս երևոյթի վրայ, որովհետև այդ տեսակ անտար-

բերութիւն ու անզգուշութիւնը յաճախ են կրկնւում հիւանդների կողմից։

Թ ո ւ ն ա ւ ո ր մ ա ն ն շ ա ն ն ե ր ը բ ե ր ա ն ո ւ մ։

Սնդիկը ամենից առաջ և յաճախ սկսում է ազդել բերանի յուշաթաղանթի վրայ։

Հիւանդը սկսում է զգալ բերանում մի տեսակ մետաղի համ։

Եթէ ուշադրութիւն չի դարձնւում և շարունակ-
ւում է սնդիկի գործածութիւնը—թուքը աւելանում
է և ջրի նման հոսում, լնդերքը կարմրում են, ուռչում,
մանաւանդ այն մասերը, որոնք ատամին են կպած։
Այս երևոյթը լինում է առաջի ատամների շուրջը, բայց
պատահում է, որ լնդերքի այս բորբոքումը սկսւում
է ետևի մասերում, ետևի ատամների շուրջը։ Լնդեր-
քը ուռչելով՝ ծածկւում են այնտեղ սեղանատամները,
կամ թէ լնդերքի ներսի մասերը։ Գնալով՝ բորբոքու-
մը անցնում է վերևի լնդերքին, որոնք դրսից և ներ-
սից ուռում են. յետոյ տարածւում է լեզւի, թշերի,
կոկորդի յուշաթաղանթի վրայ. առաջ կարմրում է, յե-
տոյ տեղ-տեղ մոխրագոյն կղզիներ են երևում,
յուշաթաղանթը պոկւում է և վէրքեր են գոյանում։
Վէրքը կարծես կարմիր շրջանակի մէջ լինի. բերա-
նից վատ հոտ է գալիս, ցաւում է, ուտելուն և ծա-
մելուն խանգարում է, հիւանդը կարողանում է միայն
կաթ գործածել, այն էլ դժւարութեամբ։

Այնուհետև սկսում են ատամները շարժւել և եթէ
հիւանդը փչացած ատամներ ունի, ցաւում են, բորբո-
քումը անցնում է ոսկորի փառին. յետոյ ոսկորին, որից
և կարող են փթել բերանի շուրջը գտնւող ոսկորները։

Ստամոքսի և աղիքների մէջ:—

Մեզ յայտնի է, որ ամենից շատ աղիքների արտաթորութեան (փորի դուրս գնացածի) մէջ է գտնւում մնդիկը՝ բժշկութեան միջոցին։ Ուրեմն դիւրագրգիռ ստամոքսը և աղիքները կարող են գրգռւել, բորբոքւել՝ այնտեղ արտադրւող մնդիկից: Միաժամանակ կարող են տեղի ունենալ և կամ բացակայել բերանի լորձաթաղանթի թունաւորման նշանները:

Հիւանդը այդպիսի դէպքում՝ կորցնում է ախորժակը, զգում է պարբերական թոյլ կամ ուժեղ ցաւեր և խիթեր ստամոքսի, աղիքների մէջ։ Պատահում է նաև փորլուծութիւն և շատ անգամ լուծում է արիւնով:

Երիկամունքների կողմից.—

Արտաթորութիւնից յետոյ, մնդիկի համեմատաբար մեծ պարունակութիւն է լինում մէզի մէջ։ Մէզի հետ նա անցնում է երիկամունքներով և գրգռում նրանց քնքոյշ կազմը։ Հետևանքը լինում է այն, որ երիկամունքը, որոնք այնքան մեծ նշանակութիւն ունին մարդու համար, ժամանակաւորապէս կամ ընդմիշտ վնասւում են։

Երիկամունքների թեթև գրգռւելը մնդիկից՝ պատահում է նոյն իսկ սովորական բժշկութեան միջոցին, երբ չը կայ թունաւորման և ոչ մի նշան։ Այդ պատճառով էլ, զգուշութեան համար, բժշկութեան միջոցին, ստէպ պէտք է քննել մէզը:

Եթէ քիմիական վերլուծումը ցոյց է տալիս, որ նա պարունակում է սպիտակուց, այն ժամանակ պիտի ընդհատել բժշկութիւնը և թողնել, որ երիկամունքերը հանգստանան, գրգռումը անցնի։

Իսկ եթէ ուշադրութիւն չի դարձւում այդ բանի վրայ և շարունակում են մնդիկով բժշկութիւնը, այն ժամանակ կարող է գոյանալ երիկամունքների՝ բորբոքումն՝ ծանր հետևանքներով, որոնք յաճախ մահւան պատճառ են դառնում:

Ոսկորների կողմից.—

Յայտնի է, որ մնդիկի հանքերում բանւորների ոսկորները հիւանդանում են, ցաւում են մնդիկի ազդեցութիւնից և երբեմն փտում։

Նոյնը պատահում է, եթէ հիւանդի կազմւածքի մէջ չափից աւելի է ներս մտնում մնդիկը։ Բարեբախտաբար այդպիսի դէպքերը շատ հազւագիւտ են։

Կաշիի մորթի կողմից.—

Մորթը սկսում է շատ քոր գալ, կարմրում է. կարմրութիւնը սաստիկ տարածւում է մորթի վրայ:

Ջղերի կողմից.—

Հիւանդը կորցնում է քունը, սաստիկ դիւրագրգիռ է դառնում դէպի շրջակայ մարդիկը, շատ անգամ այս կամ այն նեարդը սկսում է ցաւել։

Արիւնի կողմից.—

Աչքի է ընկնում հիւանդի գունատութիւնը՝ արեան պակասութիւնից, որ առաջանում է մնդիկի գործածութեան չափազանցութիւնից։ Այս երևոյթը կոչւում է „մնդիկային ուժասպառութիւն„։

Մնդիկի թունաւորման գլխաւոր նշանները սրանք են։ Կարելի էր թւել նրա հազւադէպ վնասները և միւս գործարաններին, որովհետև արեան միջոցով մնդիկը հասնում է ամեն տեղ և քանի որ նա իսկապէս թոյն է, և գործում այն դէպքում, երբ նրա քանա-

կութիւնը արեան մէջ մեծ է—ուրեմն նա կարող է վնասել, բացի յիշածներից, այլ և ուրիշ ամէն տեղ, մեր մարմնի բոլոր գործարաններն ու հիւսուածքը։

Սնդիկի այս վնասակար ազդեցութեան հետ ծանօթանալով, մարդ մի տեսակ վախ է զգում նրանից. սակայն հէնց կողմնակի այդ վատ ազդեցութիւնը պէտք է հիւանդը աչքի առաջ ունենայ և լուրջ վերաբերւի դէպի իր բժշկութիւնը, կատարելով միաժամանակ իրեն ասած պատուէրները խիստ և բարեխիղճ կերպով։

ՍՆԴԻԿԻ ԹՈՒՆԱՒՈՐՄԱՆ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Մենք գիտենք այժմ, որ սնդիկից շուտով և հեշտութեամբ վնասւում են բերանի յուշաթաղանթը և լնդերքը, մանաւանդ այն անձնաւորութիւնների, որոնք ունին փչացած ատամներ և կամ ծխում են։ Ուրեմն նախ քան սնդիկ գործածելը, անհրաժեշտ է ատամնաբոյժի մօտ կարգի բերել ատամները, մաքրել, յետոյ՝ պիտի թողնել ծխելը։

Բայց դա բաւական չէ. արհեստական միջոցներով, դեղերով էլ միևնոյն ժամանակ պէտք է ամրացնել լնդերքը և բերանի յուշաթաղանթը։

Դրա համար, ամբողջ բժշկութեան ընթացքում, երբ սնդիկ է ներմուծւում կազմուածքի մէջ, հիւանդը պիտի բերանը միշտ ողողէ Բէրտոլէտեան աղաջրով. լատ. Kali chloricum:

Պէտք է վերցնել դեղատնից 1/4 ֆունտ Բէրտոլէտեան աղ, դրանից մէկ թէյի լիքը գդալ խառնել մի թէյի բաժակ եփած ջրի մէջ և դրանով ողողել բերանը, օրւայ ընթացքում 8—10 անգամ, մանաւանդ մի բան ուտելուց յետոյ։ Պիտի աշխատել ողողելիս կուլ չը տալ. հեղուկը պէտք է ծածկած պահել, որ մաքուր մնայ։ Եթէ հիւանդը դուրսը գործի է գնում, պէտք է փոքրիկ սրւակով դրպանում ունենայ և տանից դուրսն էլ չը դադարեցնի ողողելը։

Բացի ողողելու դեղից, միաժամանակ, առանձնապէս լնդերքը ամրացնելու համար, պիտի գործածել լնդերքը հաւաքող դեղեր։ Այս դեղից որքան հարկաւոր է, պիտի լցնել թէյի պնակի մէջ, յետոյ թաթախել փոքրիկ վրձինը, կամ լուցկիի մաքուր փայտի կտորի վրայ փաթաթած դեղատան մաքրած բամբակը, և նրանով քսել լնդերին, թէ առջևից և թէ ետևից, ներսի մասերը։

Նախ քան քսելը, պիտի բերանը ողողել։

Վրձինը, գործածելուց յետոյ, պիտի լւանալ ու մաքուր թղթի մէջ փաթաթել։

Դեղը բաց չը թողնել, կարող է փչանալ։

Նոյն նպատակով գործ են ածւում տաք վաննաներ, որոնք կանոնաւորում են և հեշտացնում սնդիկի ներմուծումը և արտաքսումը մեր մարմնի մէջ։

Եթէ հիւանդը կանոնաւոր և ուշադրութեամբ վարւի, երբէք չի վնասւի սնդիկից, որ ներկայումս միակ իսկական միջոցն է սիֆիլիսի դէմ։

Ի Օ Դ.

Սնդիկից յետոյ, սիֆիլիսից բժշկւելու միջոցների մէջ երկրորդ տեղը բռնում է Իօդը։ Սա սնդիկի նըման հին չէ։ Միայն 1812 թւականից յետոյ սկսեց գործածւել իբրև դեղ՝ սիֆիլիսի դէմ։ Իօդը ստացւում է ծովային բոյսերից։ Իսկական մաքուր իօդը մուգ գոյնի տափակ կրիստալ է, ջրի մէջ դժւար լուծւող։ Աւելի ընդունւած է հեշտ լուծւող իօդի աղերը. այն է՝ իօդը միացած զանազան աղերի հետ. օրինակ Կալիի, Նատրիի և այլն. սրանց թւում առաջին տեղն է բռնում Իօդ-կալի, լատիներէն Kali Jodatum. փոքրիկ, սպիտակ կրիստալներ է նա ներկայացնում, ջրի մէջ հեշտ լուծւող։

Իօդի միւս աղերի հետ համեմատած, ամենից լաւը՝ Իօդ-կալին է ազդում։ Նրան տալիս են հեղուկացրած, դդալով կամ կաթիլներով՝ ընդունելու համար. գործ է ածւում աւելի առաջինը։

Իօդը գրգռում է ստամոքսը. երկար գործածութիւնը կարող է ստամոքսի հիւանդութիւն, կատար առաջացնել։ Դրանից խուսափելու համար՝ Իօդ-կալին աւելի լաւ է ընդունել կէս բաժակ կաթի և կամ հանքային ջրի մէջ խառնած։ Սրա համար գործածւում է Բօրժօմի կամ Վիշիի ջուրը։ Պէտք է իօդը խմել՝ ուտելուց քիչ անց։

Դատարկ ստամոքսով, անօթի չը պիտի գործածել։ Ստամոքսի վերաբերութեամբ նախազգուշական այդ միջոցները պէտք չէ զանց առնել։

Որպէսզի միանգամից Իօդ շատ չը խմւի և նրա ազդեցութիւնը բաժանւի ամբողջ օրւայ ընթացքում—

մաս-մաս պիտի ընդունել ուրեմն Իօդ-կալիի հեղուկը, օրական 3—4 անգամ, առաւօտեան նախաճաշիկից, ճաշից և ընթրիքից յետոյ, հացի դդալով։

Հիւանդները փոխանակ Իօդ-Կալիի հեղուկը խառնելու կաթի և հանքային ջրի հետ, շատ անգամ խմում են ուղղակի հեղուկը և յետոյ վրայից խմում կաթ, կամ հանքային ջուր։ Միևնոյն է թէ մարդ խմի շատ տաք թէյ, այրի բերանն ու ստամոքսը, յետոյ սառեցնելու համար, պաղ ջուր խմի։ Միշտ պէտք է խառնել և այնպէս խմել։

Իօդը, Իօդկալին շատ հեշտութեամբ և շուտ է ծծում ստամոքսը։ Մի քանի րոպէ անց, արդէն կարելի է գտնել նրան թքի և մէզի մէջ։ Ինչպէս շուտ ծծւում է նա, տարածւում է բոլոր գործարանների մէջ, կազմւածքի բոլոր հիւսւածքներում, դուրս է գալիս կազմւածքից նոյն ճանապարհներով, ինչպէս սնդիկը, միայն անհամեմատ աւելի շուտ։

ԻՕԴԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Իօդը անմիջապէս չի ազդում սիֆիլիսի մանրէների վրայ։ Երբ, օրինակ, վարակւում են սիֆիլիսով կապիկին և միևնոյն ժամանակ սրսկում իօդը, չը նայած նրան, վարակումը տեղի է ունենում։

Ինչպէս երևում է, իօդը ունի սիֆիլիսի վերաբերմամբ մի այլ օժանդակիչ ազդեցութիւն. արտահանում է, դուրս է բերում սիֆիլիսի մեռած մանրէներից դուրս եկած թոյնը, մաքրում է արիւնը։

Բացի դրանից, ազդում է անմիջապէս սիֆիլիսի արտայայտութիւնների վրայ։

Որպէսզի Իոդի այս յատկութիւնը մեզ համար պարզ լինի, պէտք է յիշենք, թէ ինչ է առաջացնում սիֆիլիսի մանրէն հիւանդութեան երկրորդ և երրորդ շրջաններում։

Երկու շրջաններումն էլ նա գրգռում է իրա թոյնով կազմուածքը և հետևանքն այն է, որ երկրորդ շրջանում գոյանում է մեղմ բորբոքում, փոքրիկ ուռուցք, պզուկ, իսկ երրորդ շրջանում՝ ահագին ուռուցքներ, գումմա է առաջացնում։

Ամենքին յայտնի է, որ ուռուցքները հալեցնելու համար ամենալաւ միջոցը իոդն է։

Եթէ երկրորդ շրջանում մոգիկը դեռ էլի հասնում է սիֆիլիսի մանրէին, երրորդ շրջանում, որտեղ մանրէն պատսպարուած է ահագին ուռուցքի մէջ իբրև երկաթէ պատեանում, մոգիկը չի հասնում նպատակին, նա սիֆիլիսի մանրէին չի սպանում։ Ուրեմն նախ պէտք է քանդել ուռուցքը։ Եւ ահա այդ դերը հիանալի կերպով կատարում է Իոդը։ Նա քանդում է գումման, ուռուցքը և յետոյ մոգիկը գալիս է իր դերը կատարելու, յաջողութեամբ ոչնչացնելու արդէն անպաշտպան դարձած սիֆիլիսի մանրէներին։

Երկրորդ շրջանում Իոդի գործածութիւնը նոյն նպատակին էլ է ծառայում.—պզուկներ է հալեցնում։

Այս կողմով՝ նա մոգիկի ընկերն է, նրան օգնողը։

Մանաւանդ հիւանդութեան գումմաների շրջանում դժուար կը լինէր սիֆիլիսի բժշկութիւնը՝ առանց Իոդի։ Այդ պատճառով Իոդը, Իոդ-կալին երկրորդ յատուկ միջոցն է ներկայանում։ Սիֆիլիսի դէմ այս լաւ դեղն էլ տարաբախտաբար ազատ չէ կողմնակի վատ ազդեցութիւնից, որ կոչւում է «Իոդիզմ»։ Նա արտայայտւում է զանազան տեսակ։

ԻՈԴԻ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ, «ԻՈԴԻԶՄ»

Իոդից՝ կաշւի վրայ դուրս են գալիս *կարմիր պզուկներ*, կամ հէնց սկզբում, կամ մի որոշ ժամանակւայ գործածութիւնից յետոյ։

Այդ պզուկները տարածւում են մեծ մասամբ ուսերի, մէջքի և երեսի վրայ։ Յաճախ՝ նրանք սիֆիլիսի պզուկների տեղ են ընդունւում։

Իոդից առաջանում է թեթև հարբուխ և գլխացաւ, որոնք հետզհետէ անցնում են և հիւանդը կարողանում է շարունակել Իոդի գործածութիւնը։ Բայց պատահում է հիւանդ, որի հարբուխը քանի գնում՝ ուժեղանում է, զուգընթացաբար գլխացաւն էլ յաճախ աւելանում։ Հիւանդը ստիպւած է լինում մի առ ժամանակ թողնել Իոդը, հանգստանալ և յետոյ նորից սկսել։ Վերսկսելիս պատահում է, որ աւելի հեշտութեամբ են տանում Իոդը և կարողանում են շարունակել բժշկութիւնը։

Տարաբախտաբար կան և այնպիսի հիւանդներ, որոնք մի քանի գդալ Իոդ ընդունելուն պէս՝ ծանր դրութեան մէջ են ընկնում և մեծ հոգս և իրարանցում են պատճառում թէ իրանց, թէ շրջապատողներին և թէ բժշկին։ Սկսում է սաստիկ գլխացաւ, կարծես „գլուխը պատռելիս լինի", սաստիկ հար-

բուխ․-աղբիւրի նման քթից ջուր է հոսում, ամբողջ երեսը կարմրում է, ուռչում, մանաւանդ աչքերի տակը։ Դրանց վրայ աւելանում է սրտի բաբախումն, շնչարգելութիւն։ Եթէ Իոդի գործածութիւնը իսկոյն ընդհատեն, 1—2 օրւայ մէջ ամէն ինչ կանցնի առանց որև է հետևանքի։

Բարեբախտաբար չափազանց քիչ են Իոդին չը դիմացողները. աւելի ևս հազւադէպ են նկարագրուած ծանր “Իոդիզմի» նշաններ։

Յամենայն դէպս, ամէն հիւանդ, որին առաջին անգամ տալիս են ընդունելու Իոդը, Իոդկալին—այս բոլորը պէտի իմանայ և եթէ պատահմամբ ինքն էլ այն հազւադէպ անձերից է, որոնք Իոդը չեն տանում, —հէնց որ Իոդիզմի ծանր նշանները զգայ և նկատի, իսկոյն պէտի թողնի նրա գործածութիւնը և յայտնի այդ մասին բժշկին։ Եւ այնուհետև երբ և իցէ, և որտեղ էլ որ լինի, բժշկին դիմելիս, միշտ պէտք է յայտնի, որ իր բնութիւնը Իոդ չի ընդունում։

Իոդիզմ առաջ չը բերելու համար՝ առաջարկել են զանազան ժամանակ Իոդի զանազան խառնուրդներ, բայց ապարդիւն։

Իոդի այդ զանազան բաղադրութիւնները և զանազան տեսակները մեծ մասամբ այնքան լաւ չեն ներգործում, որքան Իոդ-կալին ինքը։ Այդ բաղադրութիւններից էլ առաջանում են Իոդիզմի նշաններ։

Այս անախորժ կողմնակի ազդեցութիւնր (Իոդիզմը) չի կախւած Իոդի քիչ կամ շատ քանակից։ Նոյն իսկ նկատել են, որ մեծ քանակութիւն ընդունելիս՝ աւելի քիչ է պատահում Իոդիզմ։ Իոդի բնաւո-

րութիւնից է, որ նա մի քանի անձնաւորութիւնների վրայ վատ է ազդում։ Թէ ինչ է պատճառը—յայտնի չէ։

Նոցա, որոնք ստամոքսի հիւանդութիւն ունին, բայց դիմանում են Իոդի, կարելի է Իոդը ներարկել մորթի տակ։

Ներարկելու համար ամենից լաւն է Իոդիպինը, որը Սէզամի ձէթի հետ խառնած Իոդ է։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

ԻՈԴԻ ԵՒ ՍՆԴԻԿԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՍԻՖԻԼԻՍԻ ՎՐԱՅ

Այժմ մենք ծանօթացանք մանրամասնօրէն սնդիկի և իոդի հետ։ Նախ քան սիֆիլիսի դէմ նրանց գործադրութեանն անցնելը, աւելորդ չի լինի առաջ բերել այն փորձերը, որոնք արւել են սիֆիլիսի այդ երկու գլխաւոր դեղերի վրայ։

Իոդի մասին մենք ասացինք, որ վարակւած կապիկի վրայ չի ազդում։

Նմանօրինակ դէպքում, երբ կապիկին վարակում են սիֆիլիսով և միևնոյն ժամանակ սրսկում սնդիկը, վարակումը տեղի չի ունենում, կապիկը մնում է առողջ։

Այստեղից ամենայն իրաւամբ եզրակացնում ենք, որ սնդիկը ոչնչացնում է սիֆիլիսի մանրէներին—սպիրօխէտներին։

Սիֆիլիսի երկրորդ շրջանում, երբ անհագին քանակութեամբ սպիրօխէտներ են շրջում և վխտում

կազմածքի մէջ, պէտք է իսկոյն ներմուծել սնդիկը։ Բայց երբ արեան մէջ, սպիրօխէտների ոչնչացմանը իբրև հետևանք, կուտակւում է նրանց թոյնը—մենք տալիս ենք Իօդը՝ արիւնը մաքրելու համար։

Երրորդ, գումմային շրջանում, այնքան սիֆիլիսի մանրէները չեն կենդրոնացնում իրանց վրայ մեր ուշադրութիւնը, որքան գումմաները իրենք, այդ ուռուցքները։ Այդ շրջանում պիտի տրւի ամենից առաջ ուռուցքների վրայ ներգործող, նրանց քանդող Իօդը։

Կար ժամանակ, որ նոյն իսկ երրորդ շրջանը միայն Իօդով էին բժշկում։ Իօդի ազդեցութեան տակ ուռուցքները (գումմաները) բառիս բուն նշանակութեամբ սկսում են քանդւել և հալւել, վէրքերը կարճ ժամանակամիջոցում ծածկւում և լաւանում են։

Բայց նկատւած էր, որ Իօդի գործածութիւնը դադարեցնելուց յետոյ, շատ անգամ էլի շուտով կրկնւում էր հիւանդութիւնը։

Այժմ դա հասկանալի է, քանի որ Իօդը քանդում է գումմաները, բայց սիֆիլիսի մանրէների վրայ չի ներգործում։ Ուրեմն գումման—ուռուցքը անհետանալուց յետոյ, տեղը մնում է Իօդից անվնաս գումմայի ստեղծողը՝ սպիրօխէտը։ Հէնց դրա համար էլ պէտք է Իօդի բժշկութեանը կցել փոքր ինչ սնդիկ։

Այսպիսով, երկրորդ շրջանում սնդիկին օգնութեան է գալիս, նրա գործը յաջողութեամբ պսակելու համար՝ Իօդը։

Երրորդ շրջանում Իօդին օգնութեան է գալիս Սնդիկը, Իօդի գործը յաջողեցնելու համար։

Միասին՝ նրանք կազմում են մի դաշնակցութիւն. նրանց համերաշխ գործունէութեամբն է, որ կազմածքը ազատւում է սիֆիլիս հիւանդութիւնից։

ՍԻՖԻԼԻՍԻ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Այժմ տեսնենք թէ ինչպէս է տարւում սիֆիլիսի ընդհանուր բժշկութիւնը՝ իօդով և սնդիկով։

Երկրորդ, պզուկային շրջանում, ներմուծում ենք սնդիկը միջին թւով 1—$1^{1}/_{2}$ ամիս։

Սնդիկով բժշկութեան շրջանը աւարտելուց յետոյ, տալիս ենք արիւնը մաքրելու համար իօդը՝ մօտաւորապէս 1 ամիս։

Ընդհանուր բժշկութեան առաջին շրջանից յետոյ մենք գիտենք, որ կարող են մնալ սիֆիլիսի մանրէներ և առաջ բերել հիւանդութեան վերադարձ։ Այդ է պատճառը, որ չը սպասելով դրան, ենթարկում ենք հիւանդին պարբերական բժշկութեան, համաձայն պրօֆես. Ֆուրնիէի դեռ վաղուց արած առաջարկին։

Հիւանդութեան առաջին տարին բժշկութիւնը մօտաւորապէս կատարւում է այսպէս.—

1 }
2 } ամիսներում — բժշկութիւն կոշտ շանկրի
3 ամսում — ընդհ. բժշկ. սնդիկով՝ քսումներ, ներարկումն և կամ ներքուստ տրւած, խմելու.
4 ամիս — Իօդ
5 — ընդմիջում և հանգիստ.

6 — Սնդիկ.
7 — Իօդ.
8 — ընդմիջում և հանգիստ.
9 — Սնդիկ
10 — Իօդ
11 — ընդմիջում և հանգիստ.
12 -- Սնդիկ.

Երկրորդ և երրորդ տարիներում՝ մօտաւորապէս նոյն տեսակ է տարւում բուժումը։ Եթէ վերադարձները յաճախ են և սիֆիլիսը ծանր ընթացք ունի, բժշկութիւնը շարունակւում է չորրորդ և նոյն իսկ հինգերորդ տարին։

Իբրև ցուցմունք երկրորդ շրջանի բժշկութեան աւարտելուն՝ համարւում է հիւանդութեան ընթացքը։

Եթէ բոլորում է բժշկութեան երրորդ կամ չորրորդ տարին և վերջին վեց ամիսներում սիֆիլիսի վերադարձ չի եղել—ուրեմն բժշկութիւնը կարելի է աւարտած համարել:

Բայց աւելի հաստատուն է, իմ կարծիքով, օգտուել Վասսերմանի եղանակով կատարած արեան քննութիւն ցուցմունքներովը։

Երբ արեան մէջ գտնում ենք սիֆիլիսի հականիւթ-հակաթոյն, մենք ենթադրում ենք թէ այդ կազմուածքի մէջ դեռ ևս գոյութիւն ունի սիֆիլիսի թոյնը, քանի որ ստիպում է արիւնին՝ հականիւթ-հակաթոյն արտադրելու:

Փորձերը ցոյց են տուել, որ հիմնաւոր բժշկութիւնից յետոյ, Վասսերմանի եղանակով արեան քննութիւնը տուել է թոյլ կամ բացասական հետևանք։ Այսինքն, որ սիֆիլիսի թոյնը բացակայում է։ Եթէ 3—4

տարուայ բժշկութիւնից յետոյ սիֆիլիսի վերադարձներ չը լինին և Վասսերմանի եղանակովն էլ արեան մէջ սիֆիլիսի հակաթոյն չը գտնուի—այն ժամանակ աւելի վստահօրէն կարելի է ասել, որ բժշկութիւնը աւարտած է։

Սիֆիլիսի երրորդ շրջանը բժշկւում է իօդով, որ տրւում է շատ անգամ ամիսներով, մինչև որ գումմաները անցնեն։

Իօդի հետ կամ նրանից յետոյ ներմուծւում է նաև սնդիկ, բայց շատ չնչին քանակութեամբ, քանի որ դա սպիրօխէտների դէմ է. իսկ վերջիններս շատ չնչին քանակութիւն են կազմում երրորդ շրջանում։

ՍԻՖԻԼԻՍԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Արտաքին արտայայտութիւնները սիֆիլիսի—վէրքերը, ցաները, ուռուցքները, թաց պզուկները, բերանի դուրս աւածները—անցնում են ընդհանուր բժշկութիւնով. բայց որպէսզի գործը աւելի արագ գնայ, միաժամանակ, նրանց վրայ անմիջապէս ազդելու համար, տալիս են տեղն ու տեղը գործածող դեղեր. օրինակ, ցանոտ տեղերը, ուռուցքները, վէրքերը ծածկւում են, վրան կպցնում սնդիկի պլաստիր. վէրքերի վրայ սնդիկի և իօդի սպեղանիներ են դընում, թացակալող պզուկների վրայ ցանում են սընդիկի փոշի—կալօմէլ վրձինով, բերանի դուրս աւածները, դանդաղ մաքրւող, մանաւանդ գումմայից առաջացած վէրքերի լաւանալը արագացնելու համար՝ այրում են նրանց Դժոխաքարով (Argentum nitricum in

bacil. № 1)։ Այսպէս, ներքուստ ընդհանուր բժշկութեամբ և արտաքուստ տեղային դեղերով՝ յաջողւում է սիֆիլիսը բժշկել հիմնաւորապէս։

ԲՆԱԿԱՆ ՈՅԺԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Բնական ույժի պահպանումը և նրանց ուժեղացնելը՝ անհրաժեշտ է սիֆիլիսի ժամանակ։

Մենք․ տեսանք՝ որ մեր արիւնը սիֆիլիսի թոյնին հակադիր է գնում հակաթոյնը, որ սնդիկն էլ համարեա նոյնպէս ազդում է և զարկ է տալիս հակաթոյնի զարգացմանը։

Ուրեմն այդ ույժը պէտք է պահել—պահպանել և խնամել՝ եթէ պակասի։

Մեզ զարմանք էին պատճառում սիֆիլիսի այն դէպքերը, որոնք իրենք-իրենց, առանց բժշկութեան անցնում էին։ Այո, որովհետև մենք՝ մարդիկս, մեր մէջ ունինք սիֆիլիսի դէմ բնական դեղ — մեր ույժը և նրա կազմած հակաթոյնը։

Ուրիշ բան է, եթէ յաճախ կազմուածքը պահանջ է զգում, որ նրան օգնեն։

Ինչպէս մի լաւ բեռնակիր ձիուն, ահագին բեռը տանելիս, ծանր տեղերում օգնում է տէրը՝ բոթելով անիւի ետևից, այնպէս էլ մեր բնական ույժին գալիս են օգնելու սնդիկը և յոդը։

Եթէ սիֆիլիտոտը թոյլ է, պէտք է վերականգնեցնել նրա ույժերը։ Այդ նպատակով գործածու-

թեան մէջ կան օժանդակող շատ միջոցներ։ Դրանց թւում առաջին տեղն է բռնում Մ կ ն դ ե ղ ը (Միշեակ)։

Այնքան լաւ էր ազդում նրա գործածութիւնը սիֆիլիսի ժամանակ, որ նոյնիսկ մի երկու տարի առաջ՝ առաջարկում էին սնդիկի տեղ գործածել Ա տ օ կ ս ի լ (լատ. Atoxil), որը մկնդեղի մի որոշ բաղադրութիւնն է։

Հիմա էլ սնդիկին զուգընթաց գործ են ածում յաճախ մկնդեղը։ Նոյն իսկ գոյութիւն ունի այնպիսի մի բաղադրութիւն սնդիկի և մկնդեղի, որի անունն է է ն է զ օ լ, (լատիներէն Enesol)։

Նոյն նպատակով, սակաւարիւնութեան դէպքում, տալիս են երկաթ. երեխայոց թուլութեան դէմ՝ ձկան իւղ։

Առհասարակ սիֆիլիսի բժշկութեան միջոցին կարևոր է ուշադրութիւն դարձնել բոլոր գործարանների վրայ ևս։

Եթէ որևէ գործարան վնասուած է, պէտք է բժշկել։ Մի խօսքով, պիտի աշխատել բոլոր ուրիշ հիւանդութիւններից ազատ պահել կազմուածքը, որպէս զի նա ույժ ունենայ մաքառելու միմիայն սիֆիլիսի դէմ։

Եթէ հիւանդը ջերմ ունի, տատմոքսի կատար, պալարիկների—երիկամունքների բորբոքում, ջղային խանգարում և այլ հիւանդութիւններ, նա պէտք է զուգընթացաբար բժշկւի նրանցից էլ։ Մանաւանդ որ սիֆիլիսի թոյնը աւելի շատ վնասում է այն գործարաններին, որոնք հիւանդութիւնից թուլացել են. այդ տեղերումն է որ գոյանում են բարդութիւններ։

Սիֆիլիսին չեն դիմանում, ինչպէս մի քանի անգամ յիշել ենք, արբեցողները, ծերերը և թոքախտա-

ւորները։ Նրանց վերաբերմամբ կարևոր է առանձին ուշադրութիւն՝ թուլացած ուժերը վերականգնելու համար։

Տխուր է թոքախտաւորների դրութիւնը։ Յայտնի է, որ նրանք շատ կրքոտ են դառնում, նրանց սեռական պահանջը աւելանում է. իսկ սիֆիլիսից վարակւելով, նրանց սպառւած ուժերը չեն դիմանում։ Այդ պատճառով էլ թոքախտաւորները, կամ դէպի թոքախտը հակում ունեցող թոյլ կրծքով, առհասարակ թոյլ ույժերով անձնաւորութիւնները պէտք է կրկնապատիկ զգոյշ լինեն սիֆիլիսից։

Շատ անգամ սիֆիլիսոտի ույժերը վերականգնելու համար՝ ստիպւած ենք լինում ուղարկել գիւղ կամ ծովափ, օգտւելու համար ջրաբուժութիւնով, էլէքտրականութեամբ և այլ օժանդակիչ միջոցներով, որոնց թիւը շատ հեռու կը տանէր մեզ։

Պէտք է ամեն անգամ կշռադատել դէպքը, և ի նկատի ունենալ հիւանդի կազմւածքը։ Երբէք չափազանցութիւնների մէջ չը պէտք է ընկնել դեղերի վերաբերմամբ։ Պիտի տալ այնքան, որ նրանցից չը թուլանան կազմւածքի բնական ուժերը։ Այդ կողմից միշտ պէտք է պահպանել որոշ ներդաշնակութիւն։

Դ Ե Կ Ո Կ Տ

Սիֆիլիսի բժշկութեան մէջ առանձին տեղ են բռնում Դեկոկտը և հանքային ծծմբային ջրերը, որոնցով օգտւելը որոշ դժւարութիւններ են ներկայացնում։

Դեկոկտը պահանջում է որոշ արտաքին պայմաններ, իսկ ծծմբային ջրերը ամեն տեղ չեն գտնւում։

Դեկոկտը (կոչւում է նաև Ցիտմանի դեկոկտ), իւր մէջ պարունակում է որոշ բոյսերի հիւթեր, որոնցից գլխաւորն է ամերիկական մի ծառի, Սարսապարէլի արմատը։

Ցիտմանի դեկոկտը երկու տեսակ է լինում. ուժեղ և թոյլ։

Ուժեղ տեսակը իր մէջ պարունակում է շատ չնչին քանակութեամբ սնդիկ։

Թոյլ տեսակի մէջ, ուժեղի հետ համեմատած, երկու անգամ պակաս կայ Սարսապարէլի քանակութիւն, իսկ սնդիկ բոլորովին չը կայ։ Ցիտմանի դեկոկտը մեծ մասամբ պիտի գործածել այսպէս.—առաւօտեան անօթի՝ կէս թէյի բաժակ խմել ուժեղ դեկոկտից, տաքացրած մինչև 32° ըստ Ռէօմիւրի. երեկոյեան կէս բաժակ—թոյլից, սառը։ Հետզհետէ պիտի աւելացնել քանակութիւնը այնպէս, որ հասնի օրական մի քանի բաժակի, նայած թէ ինչպէս է տանում հիւանդը։

Յաճախ Ցիտմանի դեկոկտից առաջանում է փորացաւ, փորլուծութիւն. այդ դէպքում պէտք է քչացնել, կամ մի առժամանակ ընդհատել նրա խմելը, յետոյ էլի շարունակել։ Ինչպէս տեսնում էք, դեկոկտով բժշկութիւնը բաւականի մեծ քանակութեամբ խմելիք է պահանջում. այդ պատճառով էլ գերադասում են միշտ կատարել ամառը, երբ մարդ կարող է գործածել շատ ըմպելիք և շոգից շատ քրտնել, որ նմանապէս հարկաւոր է այս բժշկութեան համար։ Քրտնելու համար տաք վաննաներ կամ ծծմբային ջրի վաննաներ էլ պիտի նշանակել միաժամանակ։

Եթէ Ցիտմանի դեկոկտի բժշկութիւնը կատարւում է ձմեռը, այն ժամանակ շատ անյարմարութիւններ են ստեղծւում։

Նախ որ հիւանդները դժուարութեամբ են դիմանում, չեն կարողանում մեծ քանակութեամբ խմել և դա ինքն ըստ ինքեան հասկանալի է. յետոյ հեշտութեամբ մրսում են, փորլուծութիւնը աւելի յաճախակի է տեղի ունենում։

Բայց եթէ ինչ ինչ հանգամանքներից դրդւած ուզում են դեկոկտով բժշկել ձմեռը, այն ժամանակ սենեակը շատ տաք պիտի պահել և աշխատել՝ քրտնեցնելու արհեստական կերպով։

Հասարակութեան մէջ այն կարծիքն է տիրում, թէ Ցիտմանի դեկոկտը արիւնն է մաքրում։

Մի ժամանակ, այն է 16-որդ դարի սկզբներում, Սարսապարելի արմատը համարւում էր, սնդիկի նման, յատուկ դեղ սիֆիլիսի դէմ և շատ տարածւած էր նրանից պատրաստած դեկոկտի գործածութիւնը։ Սակայն այժմ նա այնքան էլ ընդունւած չէ։

Ցիտմանի դեկոկտը հիմա գործածւում է երկրորդ շրջանի վերջում, բժշկութիւնը աւարտելու ժամանակ այլև երրորդ շրջանում թոյլ հիւանդներին տալով, երբ կազմւածքը չէ տանում սնդիկ և այլ նման դէպքերում։

ԾԾՄԲԱՅԻՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԸ։

Ծծմբային հանքային տաք ջրերը վաղուց արդէն ընդունւած են սիֆիլիսի բժշկութեան համար։

Երկար տարիների փորձը ցոյց է տւել նրանց օգտակարութիւնը։ Սրա պատճառը յայտնի չէ։ Հանքային ջրի ազդեցութիւնը միայն նրա քիմիական բաղադրութեանը չենք պարտական, այլ նաև ուրիշ շատ հանգամանքներին — ֆիզիքական, էլէկտրական և այլն յատկութիւններին, որ ունին հանքային ջրերը։

Ծծմբային ջրերը ընդունում են ներքուստ և արտաքուստ՝ վաննաների ձևով։

Ծծմբային ջրի վաննայի ջերմութիւնը առհասարակ անում են 27—32^0 ըստ Ռէօմիւրի։

Վաննայի մէջ նստում են առնւազն 10 րոպէ, 15 մինչև 30 րոպէ։ Որպէս զի հիւանդը առանց սրտնեղութեան դիմանայ այդ ժամանակամիջոցին, գործողութիւնը պէտք է յարմարեցնել նրա ույժերին։

Վաննայում նստած ժամանակ՝ գլխի վրայ պիտի դնել լաւ սառը ջրում թրջած և քամած շոր։

Վաննայի սենեակի օդը պէտք է մաքուր լինի. ծծմբային գոլորշիները շատ անգամ գլխացաւ են պատճառում։

Ծծմբային հանքային ջրի վաննան ազդում է նախ կաշւի վրայ.—փափկացնում է նրան և բաց անում ծակոտիքները. այդպիսով պատրաստում է՝ սնդիկի քսումը կատարելու համար։

Բայց որովհետև նա անհամեմատ աւելի է քրտնեցնում, քան թէ հասարակ ջրի վաննան, այդ պատճառով քսումը պիտի կատարել 1—2 ժամ յետոյ։

Ծծմբային վաննաները ընդունելիս՝ հիւանդը աւելի հեշտութեամբ է ենթակայ մրսելու։ Պէտք է տաք հագնւի, ուրեմն զգուշանայ մրսելուց. քամիի և անձրևի

ժամանակ, նաև արևը մայր մտնելուց յետոյ՝ տանը պիտի լինի։

Ծծմբային տաք վաննաները օգնում են հիւանդի կազմւածքին՝ իւրացնելու սնդիկի մեծ քանակութիւն, առանց թունաւորւելու. կարծես թէ նրանք սնդիկին աւելի կենդանութիւն են տալիս։

Հէնց դա է պատճառը, որ սիֆիլիսի ծանր դէպքերում, օրինակ սիֆիլիսից անդամալուծութիւն ստացած հիւանդները, դիմում են ծծմբային ջրերի վայրերը և օգնութիւն ստանում։

Ներքուստ ծծմբային ջուրը ընդունում են օրեկան 2—3 թէյի բաժակ. նա լաւ է ազդում թոքերի, ստամոքսի, աղիքների վրայ (եթէ առողջ են), կանոնաւորում է նրանց գործողութիւնը։

Օգտակար է մանաւանդ գեր մարդկանց համար, որոնք փորի արիւնալիութիւն ունի՛ն։

Ֆրանսիայի ծծմբային ջրերում շատ է ընդունւած ներքուստ գործածութիւնը. այնտեղ կարծում են որ նոյն իսկ լաւ է ազդում սիֆիլիսի վրայ ընդհանրապէս։

Նշանակում են ծծմբային ջուրը ողողելու համար քիթը, կոկորդը, այլ և աչքերը լւանալու՝ որոշ դէպքերում։

Մեզ մօտ՝ արտաքուստ աւելի գործածական են ծծմբային ջրերը, քան ներքուստ։

Ռուսաստանում յայտնի են ծծմբային ջրերով Պեատիգորսկ, Գորեաչէվօդսկ, Թիֆլիս և այլն, իսկ արտասահմանում՝ Ախէն, Բադէն, Լիւշօն և այլն։

Բայց ամենից լաւ յարմարեցրած են և իրանց

բաղադրութեամբ նշանաւոր են մեզ մօտ Պեատիգորսկ, իսկ արտասահմանում՝ Ախէն։

Ծծմբային հանքային ջրերում բժշկւելը օգտակար է աւելի ամառւայ ընթացքում. իսկ ձմեռը, միայն որոշ, լաւ պայմաններում։

ՅՂԻ ԿԱՆԱՆՑ ԲՈՒԺՈՒՄԸ ՍԻՖԻԼԻՍԻՑ։

Որովհետև յղի կանանց և երեխաների սիֆիլիսի բժշկութիւնը փոքր ինչ տարբերւում է ընդհանուր ձևից, այդ պատճառով աւելորդ չի լինիլ այստեղ կանգ առնել համառօտ կերպով դրանց բժշկութեան առանձնայատկութիւնների վրայ։

Յղի կանանց սիֆիլիսի բժշկութիւնը պէտք է տարւի զգուշութեամբ։ Մեզ յայտնի է որ սիֆիլիտոտ յղի կանայք հեշտութեամբ են վիժում։

Ամենաչնչին մի պատճառ, որ առողջ կնանց վրայ բոլորովին չի ազդում, սիֆիլիտոտ յղի կնոջը վիժել է տալիս։

Ուրեմն պէտք է կրկնապատիկ զգոյշ լինել։ Յղի կինը պիտի խուսափի ֆիզիքական աշխատանքից, պիտի պահպանի հոգեկան անդորրութիւն և տաք վաններ չը պիտի ընդունի (կարելի է շաբաթը մէկ անգամ 28—29°, լւացւելու համար)։ Այս տեսակէտով զգուշանում են և յղի կանանց չեն անում ներարկումները, այն է՝ սնդիկի սրսկումները մորթի տակ։

Սիֆիլիտոտ յղի կինը նոյնպէս ենթարկւում է պարբերաբար ընդհանուր բժշկութեան՝ ամբողջ յղութեան ընթացքում, նոյն իսկ եթէ նա չունի սիֆիլիսի որևէ նշան։

Գերադասելի է բժշկութեան համար՝ քսել սնդիկի մոխրագոյն սպեղանին, միայն փոքր շրջանից հեռու. իբր ընդունելու տեղ, պիտի տալ մանաւանդ դեղահատեր։

Յղի կանայք հակումն ունեն փորկապութեան (պընդութեան), այնպէս որ սնդիկի դեղահատերը հեշտութեամբ են տանում, փորլուծութիւն չի լինում։ Եթէ կայ պահանջ՝ կարելի է տալ Իօդ, միայն այն դէպքում, եթէ հիւանդ յղի կինը Իօդի սովոր է և բնոյթը հակառակ չէ նրան։

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ։

Երեխաների ժառանգական սիֆիլիսը բժշկւում է նոյն ձևերով, ինչպէս մեծերինը, քիչ տարբերութեամբ։

Գերադասելի է տալ երեխաներին ˝սնդիկը ներքուստ։

Առհասարակ սնդիկի վերաբերմամբ կարելի է ասել, որ երեխաները աւելի լաւ են տանում, քան թէ մեծերը։ Սովորաբար գործ է ածւում սնդիկի փոշի—Կալօմէլ։ Նա վատ համ չունի. երեխաները հեշտութեամբ են ընդունում՝ կաթի հետ խառնած։

Տալիս են նաև սնդիկի հեղուկ—Սուլէմա։

Դեղահատերը բոլորովին գործադրելի չեն, քանի որ երեխաները չեն կարող կուլ տալ։ Արտաքուստ գործածելու երեխաների համար, նշանակւում են քսուքներ սնդիկի և սուլէմայի վաննաներ։

Սիֆիլիսոտ երեխաներին պէտք է միշտ մաքուր պահել, շուտ շուտ լողացնել, թրջւող տեղերի, ծալւածքների վրայ փոշի ցանել, որ չոր մնան։

Թաշկինակով կամ մարլայով (վիրակապի շոր), թրջած Բորակային թթուատի կամ Բէրտօլէտեան աղի հեղուկի մէջ, պիտի սրբել երեխայի բերանն ու լնդերքը։ Երեխաները իրանք անընդունակ են բերանը ողողելու, որ այնքան անհրաժեշտ է բժշկութեան միջոցին մեծերի համար. Թաշկինակով սրբելն էլ բաւական է, որովհետև երեխայի լնդերքը չեն վնասւում այնքան սնդիկից, որքան մեծերինը։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՍԻՖԻԼԻՍԻ ՈՒՆԵՑՈՂԻ ՀԱՄԱՐ

Սիֆիլիսից բուժւելու համար դեղերի գործադրութիւնը միայն անելիքի կէսն է դեռ։ Որպէսզի դեղերը իրենց նպատակին հասնեն և բուժումը կատարեալ լինի, անհրաժեշտ է, որ հիւանդը իր ամբողջ նիստն ու կացը և սնունդը յարմարեցնի առողջապահական այնպիսի պայմաններին, որոնք հետևանք են այդ ծանր հիւանդութեան ընթացքի։

Մեզ համար դժւար չէ այժմ որոշել առողջապահական այդ պայմանները, քանի որ յայտնի է հիւանդութիւնը և նրա բնաւորութիւնը։

Գիտենք մենք, որ կազմւածքն ինքը իր բնական ոյժերով մաքառում է սիֆիլիսի թոյնի դէմ։ Ուրեմն, ամենաառաջին պահանջը պիտի լինի՝ աւելի ևս ոյժ տալ, ուժեղացնել մեր կազմւածքը։

Գիտենք, որ սիֆիլիսի թոյնը հեշտութեամբ վնասում է թոյլ և հիւանդ գործարաններին. ուրեմն այս-

տեղ դլուում է երկրորդ պահանջը—այն է՝ չը թու-լացնել կազմուածքի ոչ մէկ գործարանը։

Վերջապէս գիտենք մենք, որ սիֆիլիսի մանրէ-ները իրանց արտադրած թոյնով փչացնում են երակ-ները. կեանքի այդ թելերը։ Որեմն առաջ է գալիս երրորդ պահանջը՝ այն է լաւ պահպանել երակնե-րը և աշխատել չը մտցնել ու մեր կազմուածքում ոչ մի բան, որ վնասակար հանդիսանայ երակների համար։

ԱՌԱՋԻՆ ՊԱՀԱՆՋ

ՈՒԺԵՂԱՑՆԵԼ ԿԱԶՄՒԱԾՔԸ

Նպատակ չունիմ այստեղ առաջարկել զանազան արհեստական միջոցներ։ Դրանց թուել եմ ես արդէն։

Միայն մի պարզ բան.—այն է՝ չը շռայլել առող-ջութիւնը այնպէս, ինչպէս ընդունուած է մեզնում։ Եթէ այդ բանը մի կերպ ներելի է առողջ մարդուն, միանգամայն անթոյլատրելի է սիֆիլիս ունեցողի հա-մար։

Սիֆիլիտոտը պէտք է խիստ, ինչպէս մեզ մօտ ասում են, «վարդապետական» կեանք վարի, կազմը-ւածքը ուժեղացնելու համար, այն էլ ոչ միայն հի-ւանդութեան ընթացքում, այլ և միշտ։

Նա պիտի քնի վաղ, զարթնի վաղ։ Արթնա-նալուն պէս՝ պիտի ելնէ անկողնից։ Եթէ թոյլ է և նիհար, կարող է ճաշից յետոյ փոքր ինչ քնել կէս կամ մէկ ժամ։ Պէտք է նախաճաշի, ճաշն և ընթրիքը իր ժամանակին անի. ընթրիքը՝ ոչ ուշ քան երեկոյեան 8 ժամը։ Կերակուրը պէտքէ լաւ ծա-

մի և ետևի ատամներով. ուշք պիտի դարձնի ստա-մոքսի կանոնաւորութեան վրայ։ Կերակուրները պիտի լինեն պարզ, լաւ իւղով պատրաստած և անդարար։ Գերադասելի է.—

Մսեղէնից—սպիտակ միսը, յետոյ՝ կարմիր միսը։

Թռչուն—հաւ, վառեկ, հնդկահաւ, սագ, բադ։

Ձուկ—թարմ ձկնեղէն, խաւիար։

Ձու—թարմ։

Խմորեղէն՝—սպիտակ հաց, լաւ թխած հաց։ Գաթան ծանր է, չը պիտի գործածել։

Արմտիք—գետնախնձոր, սիսեռ, ոսպ և այլն.

Մրգեղէն—հասած մրգեր, քաղցրեղէն՝ չափա-ւոր։

Կանաչեղէն—թարմ կանաչի, լօբի (բացի ձնե-բեկից և ղանձիլից)։

Կաթնեղէն—կաթից պատրաստած կերակուր-ներ, թարմ մածուն, պանիր, սեր, սերուցք (ղայմաղ) և մանաւանդ կաթ։

Կաթը շատ առողջարար է. իր մէջ պարունակում է սննդարար շատ մասեր և միևնոյն ժամանակ օգտա-կար է այն գործարանների համար, որոնք ամենից շատ են ենթակայ սիֆիլիսի թոյնին.—այսինքն երակ-ների և երիկամունքների համար։

Կաթը պահպանում է դրանց, չեզոքացնում է թոյնի ազդեցութիւնը նրանց վրայ. իզուր չէ որ երի-կամունքների բորբոքման ժամանակ հիւանդին բացա-ռապէս միայն կաթ են տալիս իբրև դեղ և իբրև սը-նունդ։ Հիւանդը պէտք է խմի օրւայ ընթացքում առ-նուազն 3 թէյի բաժակ կաթ։ Ուտելու ժամանակ նա գինու տեղ աւելի լաւ է խմի կաթ։

Հիւանդութեան առաջին երեք տարիների ընթացքում կաթը իբրև դեղ էլ պէտք է ընդունել. իբր սիֆիլիսի թոյնի ազդեցութիւնը չեզոքացնող: Ուրեմն նրա գործածութիւնը այդ միջոցին նոյն իսկ անհրաժեշտ է և կարևոր:

Տատերը չեն սիրում կաթ: Առհասարակ յաճախ մարդիկ չեն սիրում այն, ինչ իրենց օգտակար է. բայց պէտք է սովորել:

Թէ ինչ տեսակ պէտք է գործածել կաթը— դա միևնոյնն է. պէտք է նայել թէ ինչպէս է սիրում հիւանդը— հում, թէ եփած, սառը, թէ տաք:

Հում կաթը կարելի գործածել այն դէպքում միայն, երբ յայտնի է, որ կովը առողջ է և կաթը թարմ. հակառակ դէպքում՝ պէտք է ա՛պատճառ լաւ եփել:

Սառը կաթը կարելի է լինում աւելի մեծ քանակութեամբ խմել, քան թէ տաքը:

Այն հիւանդները, որոնց երակները որոշ չափով առաջուց փչացած են, օրինակ հարբեցողները, երկարատև հիւանդութիւններ քաշածները ջերմից, արեան պակասութիւնից և այլն, հասակաւորները, որոնք դժբաղդութիւն են ունեցել ստանալ սիֆիլիսը— աւելի ևս պարտաւոր են կաթ գործածել:

Կաթ խմելու սովորութիւնը ձեռք է բերւում ոչ միանգամից: Սկզբում պիտի խմել քիչ-քիչ և հետզհետէ աւելացնել:

Եթէ կաթը փորը ուռեցնում է, քամիներ է առաջացնում, նրան քիչ Սօդա (Natrium bichloratum) խառնել պէտք է: Այսպէս թէ այնպէս, վերջ ի վերջոյ հիւանդը երբ սովորի կաթ գործածելը, էլ չը պէտք է

թողնի երբէք: Դրանով նա իր առողջութեան համար էլ մեծ բան կը շահի:

Ուրիշ խմիչքներից կարելի է գործածել հանքային ջրեր՝ Բօրժօմի, Նարզանի, նոյնպէս խաղողի հիւթ և արհեստական գազային ջրեր:

Բայց պէտք է գիտենալ, որ նոյն իսկ այն, ինչ թոյլատրելի և օգտակար է, չի կարելի շատ գործածել. չափազանցութիւնը այդ կողմից ևս վնասակար է թէ ստամոքսին և թէ սրտին:

Հիւանդի բնակւելու սենեակը պիտի լինի չոր, լուսաւոր և մաքուր: Սենեակի օդը պէտք է յաճախ փոփոխել:

Հիւանդը պէտք է պարզ օդում զբօսնի, մանաւանդ առաւօտները վաղ, երբ նոյն իսկ քաղաքներում դեռ օդը մաքուր է (Գուցէ մեր քահանաները առաւօտեան ժամասացութեան են պարտական, որ աւելի երկար են ապրում): Փակւած, նստակեաց, սենեկային կեանք չը պիտի վարել:

Սպիտակեղէնը և շորերը պէտք է լինեն մաքուր: Հագնւել պէտք է տաք, մանաւանդ բժշկութեան առաջին տարիները. բայց ոչ այնքան, որ մարդ քրտնի և յետոյ հեշտութեամբ մրսի:

Ուշադրութիւն պէտք է դարձնել մորթի մաքրութեան վրայ. շաբաթը մէկ անգամ պիտի լուացւել տանը, կամ բաղնիքում:

Եթէ հիւանդը յարմարութիւն չունի, այն ժամանակ նա կարող է թաց սրբիչով մաքրել ամբողջ մարմինը:

Դրա համար պիտի վերցնել մի մեծ թաս գոլ ջուր, խառնել նրա մէջ 1—2 գինու բաժակ օղի

կամ սպիրտ, որբիչը պիտի լաւ թրջել, աւելորդ ջուրը քամելով հանել, յետոյ նրանով շփել նախ կուրծքը մի քանի անգամ արագ և իսկոյն չորացնել ուրիշ չոր սրբիչով։

Այդպէս շարունակել պէտք է մաս-մաս ամբողջ մարմինը։ Դա թէ մաքրում է և թէ թարմացնում մարդու։ Կարելի է այդ գործողութիւնը կատարել շաբաթը մէկ անգամ և աւելի յաճախ, սպիրտով կամ առանց սպիրտի։

Հիւանդը պէտք է ունենայ ֆիզիքական և հոգեկան հանգստութիւն, պիտի վարի սեռական չափաւոր կեանք, այլ և գործադրի ֆիզիքական և մտաւոր սակաւ աշխատանք, մանաւանդ հիւանդութեան սկզբի երեք տարիների ընթացքում։

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՀԱՆՋ

ՉԸ ԹՈՒԼԱՑՆԵԼ ՈՉ ՄԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Երբ սիֆիլիսով հիւանդը չափազանց աշխատում է և յոգնածութեան է հասնում, բացի ընդհանուր վնասից, դրանով նա թուլացնում է այս կամ այն գործարանը և նրանք աւելի հեշտութեամբ են սիֆիլիսին ենթարկւում։

Պիտի չը մրսել, խոնաւութեան չը պիտի ենթարկել անձը. դա յառաջացնում է յօդացաւ (ռէվմատիզմ. քամի)։

Պէտք է հեռու մնալ տենդոտ վայրերից, որպէսզի ջերմից չը հիւանդանայ փայծաղը, լեարդը։

Ծխելը պէտք է թողնել այլ ևս։ Նա թուլացնում է բերանի լուշաթաղանթը, թոքերը, սիրտը և ախորժակը։ Դրանով առաջ են գալիս սիֆիլիսային բարդութիւններ բերանում։ Ծխելից այդպիսի լուշաթաղանթը շուտով է վնասւում և մենք ստիպւած ենք լինում ընդհատել բժշկութիւնը։

Որպէսզի այս բարդութիւնները երևան չը գան, պէտք է միանգամից թողնել ծխելը. կամ եթէ անհնարին է, թողնել գոնէ բժշկութեան միջոցին։

Հիւանդները թող չը վախենան, որ միանգամից ծխելը թողնելով՝ կարող են վնասւել։

Ընդհակառակը, ես նկատել եմ, որ դրանից լաւացել է ախորժակը և աւելի կանոնաւորւել մարսողութիւնը, հիւանդները գիրացել են և լաւացել։

Վնասակար են հոգեկան տանջանքները նոյնպէս։ Կան մարդիկ, որոնք սիֆիլիսից վարակւած՝ հոգեպէս տանջւում են, իրենք-իրենց անբուժելի հիւանդ և դժբախտ համարում։ Նոյն իսկ լինում են այնպիսի փոքրոգիներ, որ ինչպէս արդէն միանգամ յիշել ենք, անձնասպանութիւն են գործում։

Ներկայ դէպքում հոգեպէս տանջւելը կատարեալ անմտութիւն է։ Մնացորդ է դա հին ժամանակւայ գաղափարների, երբ սիֆիլիսի բժշկութիւնը դեռ կատարեալ չէր։

Այդպիսի մտածմունքներով՝ մարդ թուլացնում է իր ջղերը, կորցնում է ախորժակը, ենթարկւում է գլխացաւի և այլն. այսինքն, արհեստական կերպով հող է պատրաստում, որ սիֆիլիսը ներգործի նրա ջղային դրութեան վրայ։

Ես չեմ ասում ի հարկէ, որ սիֆիլիս ստացողը պէտք է ուրախանայ. բայց նա պիտի աշխատի իսկոյն հաշտուել նրա հետ և հանգիստ ու ինքնավստահ կերպով պիտի բժշկուի։

ԵՐՐՈՐԴ ՊԱՀԱՆՋ.
ՊԱՀՊԱՆԵԼ ԵՐԱԿՆԵՐԸ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԻՑ

Երակները իրանց մէջ եղած արիւնի միջոցով ստամոքսից և աղիքներից ընդունում են սնունդ, թոքերից օդ և տանում հասցնում են մեր մարմնի բոլոր հիւսւածքներին, որով և վերջիններս էլ ապրում են։

Պէտք է ուրեմն աշխատել, որ երակների մէջ չը մտնի գրգռող սնունդ։

Այդ տեսակէտից՝ չի կարելի գործածել թ ը թ ւ ե ղ է ն.—քացախ, թթու դրած կաղամբ, վարունկ, խաղող, պղպեղ (տաքդեղ, ծիծակ), թթու մրգեղէն և այլն։

Ա ղ ի.—աղի կերակուրներ, պանիրներ, որոնք միևնոյն ժամանակ և կծու են, օրինակ՝ մոթալի որոշ տեսակները։ Թարմ, ոչ կծու պանիրը կարելի է։ Չը պէտք է գործածել նաև աղի ձկնեղէն—դօշ, զուրգէլ և այլն, զանազան սուր համեմներով ապուրներ, վայրենի, որսի թռչուն և այլն։

Ամենից շատ երակները գրգռում և վնասում են ոգելից ըմպելիները.—օղի, գինի, գարեջուր։ Դրանց մէջ պարունակող սպիրտը—ալկօհօլը թուլացնում է

մարդու բոլոր գործարանները ընդհանրապէս, և կոշտացնում է երակները՝ մանաւորապէս։ Իսկ մեզ յայտնի է, որ սիֆիլիսը ինքը իր թոյնով կոշտացնում է երակները։ Եթէ դրան աւելանայ և սպիրտը, ուրեմն երակների ստացած վնասը կարող էք ազատօրէն բազմապատկել երկուսով։

Սիֆիլիս ունեցողը պէտք է միանգամայն և ընդմիշտ հրաժարուի ոգելից ըմպելիներից։

ԵԶՐԱՓԱԿՈՒԹԻՒՆ

Սիֆիլիս հիւանդութիւնը նկարագրելիս, մենք աշխատեցինք նրա արտայայտութիւնների բոլոր աչքի ընկնող երեւոյթները առաջ բերել։

Մատնանիշ արինք սիֆիլիսի մանրէի սպիրօխէտի յատկութիւնները, և որքան ներկայումս հնարաւոր է, նրա կատարած դերը մեր կազմւածքում։

Յետոյ անցանք սիֆիլիսի բժշկութեան, ուր առանձնապէս կանգ առինք սիֆիլիսից պաշտպանւելու միջոցների վրայ։

Տեղ-տեղ դիտմամբ կրկնել ենք մեր ասածները, որպէսզի աւելի լաւ մնայ յիշողութեան մէջ կարեւոր բաները։

Տեղ-տեղ դրել ենք համանիշ խօսքեր միմեանց կողքին, աւելի պարզ հասկանալի դարձնելու համար։

Յիշատակել ենք որոշ գիտական-բժշկական գործողութիւնների բացատրութիւններ եւս: Գուցէ ինձ առարկելու լինեն, թէ դրանք հետաքրքիր են մասնագէտների համար միայն, իսկ հիւանդի գործն է միմիայն իրեն պատւիրածը կատարել, թէկուզ հասկանայ պատւէրի նշանակութիւնները, կամ ոչ։

Բայց արդեօք աւելի լաւ չէ՞, երբ հիւանդը կուրօրէն չի կատարում ամեն ինչ, այլ գիտէ թէ ինչ է

հարկաւոր անել և բժիշկն ինչու համար է պահանջում այս կամ այն հետազօտութիւնը կատարել տալ. օրինակ՝ արեան հետազօտութիւնը Վասսերմանի եղանակով և այլն։

Նոյնն է նաև բժշկութեան վերաբերեալ.—Նկարագրելով սիֆիլիսի բժշկութեան ձևերը, դեղերը, օժանդակիչ միջոցները, գործադրութեան եղանակները—ես գուցէ մտայ մանրամասնութիւնների մէջ, որոնք հիւանդի համար այնքան էլ հետաքրքիր չեն։ Բայց իմ կարծիքով օգտակար է, որ հիւանդն ինքը ուսումնասիրի և տեղեակ լինի ոչ միայն իր հիւանդութեան էութեանը, այլև գիտենայ թէ ինչ հիմունքով է ղեկավարւում բժշկութիւնը։

Այն ժամանակ հիւանդը աւելի լուրջ և խելացիօրէն կը վերաբերւի դէպի իր բժշկութիւնը։

Շատ անգամ բուժման մասին հիւանդները բժիշկներին հարցեր են տալիս։ Բժիշկը եթէ ցանկութիւն էլ ունենայ, անկարող է իր ընդունելութեան միջոցին այդպիսի հարցերին լիուլի գոհացում տալ։

Եւ ահա, գուցէ այդպիսի հետաքրքրւող հիւանդները կարողանան գտնել այստեղ, այս գրքում, իրանց հարցերի պատասխանները և որոշ չափով հանգստանան։

Բժշկութեան ձևերը նկարագրելիս՝ ես թւել եմ դեղեր, գրքի վերջումն էլ զետեղել եմ սիֆիլիսի բժշկութեան միջոցին գործածւող գլխաւոր դեղերի դեղատոմսերը, յիշել եմ թէ ինչպէս պէտք է այս կամ այն դեղը գործածել։ Այնպէս որ, այդ ցուցմունքները կարող են օժանդակել բժշկի տւած խորհուրդներին։

Բայց օգտւել այդ մասնաւոր ցուցմունքներից ինքնաբժշկութեան համար—դա կը լինէր հիւանդի կողմից մի շատ վտանգաւոր քայլ։ Որովհետև, ինչպէս մենք ցոյց ենք տւել, սիֆիլիս հիւանդութիւնը, նրա արտայայտութիւնները, այլև նրա բժշկութիւնը և և նրա դէմ գործածւող դեղերի յատկութիւնները այնքան բարդ են, որ անհրաժեշտ են դարձնում ամեն անգամ դիմելու բժշկի խորհրդին։

Թէև ես վերևում բերի առաջին տարւայ բժըշկութեան մի աղիւսակը, բայց դա միայն ընդհանուր գաղափար կազմելու համար էր արւած։

Անկարելի է սիֆիլիսի բժշկութիւնը վարել միաձև,—միօրինակ կերպով, առանց մանրազննին ուսումնասիրելու իւրաքանչիւր հիւանդին, նրա ունեցած սիֆիլիսը, նրա վրայ ներգործող դեղերի ազդեցութիւնը, նրա ամբողջ կազմը։

Բժիշկը ստիպւած է հաշւի առնել հիւանդի թէ՛ ներքին և թէ արտաքին հանգամանքները և ըստ այնմ բժշկել, որպէսզի հիւանդը իսկապէս հիմնովին բժշկւի. իսկ դա՝ շատ լուրջ և դժւար գործ է։

Հիմնովին բժշկւելու համար՝ մեծ նշանակութիւն ունի հիւանդի կենցաղը։

Մենք մատնացոյց արինք, որքան հնարաւոր էր ընդհանուր գծերով, սիֆիլիսից հիւանդացողի համար ցանկալի կենցաղը։

Սկզբում, քանի դեռ կայ սիֆիլիսի որ և է արտայայտութիւն, կամ վերադարձ, հիւանդը ուշադիր իր առողջութեանը, կատարում է բժշկի պատ-

ւէրները։ Սակայն մի քանի տարուց յետոյ, երբ այլ ևս ոչ մի նշան չը կայ, ամեն ինչ տրւում է մոռացութեան և անտարբերութեան, իսկ բժիշկները մեղադրւում են խստապահանջութեան մէջ։

Եւ նորից սկսւում է հին կեանքը, առողջութեան վատնումը...

Ակամայ մարդու միտքն է գալիս մի հին բժշկի, որը մարդկանց մահւան պատճառները ուսումնասիրելուց յետոյ, բացագանչեց թէ՝ «Մարդիկ չեն մեռնում, այլ իրենք են իրենց սպանում»,

Ներկայ դէպքում ևս զանցառուներին կարելի է իսկական ինքնասպաններ անւանել։

Ուրեմն սիֆիլիսից կատարելապէս բժշկւելը՝ իրեն—հիւանդի ձեռքն է։

Աւելորդ չեմ գտնում բերել այս առթիւ մի ուրիշ գիտնականի, յայտնի վեներապէտ բժշկի կարծիքը.—

„Չի կարելի վստահել բացառապէս սիֆիլիսի բժշկութեան վրայ, ասում է նա—որովհետև գուցէ աւելի քան թէ մի ուրիշ հիւանդութեան ժամանակ, նրա լաւ հետևանքները կախումն ունին նրանից, թէ ինչպէս է ինքն իրեն խնամում հիւանդը„։

Դրա համար է, որ մենք կրկնում ենք, թէ հիւանդը պէտք է իր ամբողջ կենցաղը բարեփոխի ընդ միշտ։

Այդպէս միայն, բժշկութեամբ և իրա բնական ոյժերի օգնութեամբ, կազատւի նա սիֆիլիսից, երկար տարիներ առողջ կեանք կը վարի, կունենայ առողջ ընտանիք և առողջ սերունդ։

Կարծեմ բաւական մեծ վարձատրութիւն է այդ և դրանով գոհ պիտի մնայ իւրաքանչիւր հիւանդ։

ԴԵՂԱՏՈՄՍԱՅԻՆ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Rp—recipe – *Դեղատոմս* (рецептъ)
Sol—Solutio—*Լուծուածք* (ратворъ)
M—Miste—*Խառնել*
D—Dentur—*Տալ*
S—Signe—*Գրել, նշանակել*
Ung—Unguentum—*Սպեղանի*
D. s. ut. f—*Որքան հարկաւոր է որ շինուի։*
D, t. dos—*Իւրաքանչիւրը տալ նշանակած չափով.*
Precip.—*Դիրտը. տակի նստածը*
Par.—*Պատրաստել*
Ana—*Հաւասարապէս*
Cum—*Հետ. միասին*
Simpl —*Հասարակ*
Duplex—*Կրկնակի*

VI

ՍԻՖԻԼԻՍԻ ԴԷՄ

ԳՈՐԾԱԾՈՒՈՂ ՄԻ ՔԱՆԻ ԴԵՂԱՏՈՄՍԵՐ

ԱՐՏԱՔՈՒՍՏ

Լատիներէն դեղատոմսեր.	*Հայերէն թարգման.*

ԿՈՇՏ ՇԱՆԿՐ

1. Rp. Sol. acidi carbolici 1%—200,0	*Կարբոլեան թթուատի լուծուածք.* 1 %. *վերցնել 200 գրամ.*

D. S. *Վէրքը լուանալու համար.*

---

2. Rp. Sol. Sublimati 1:1000—200,0	*Սուլէմայի լուծուածք.* 1 *մաս Սուլէմա,* 1000 *մաս ջուր։ Տալ* 200 *գրամ.*

D. S. *Վէրքը լուանալու համար.*

---

3. Rp.

Emplastri Hydrargyri extend. Supr. lint. 1/4 arschin

Սնդիկի պլաստիր, քսած կտորի վրայ.
Տալ 1/4 արշին.

D. S. Դնել կոշտ-շանկրի վրայ, սիֆիլիսից ցաւող տեղերը, ուռուցքների վրայ, և այլն.

---

4. Rp.

Calomel 15,0

Կալոմէլ 15,0.
(Սնդիկից ստացւած սպիտակ փոշի), 15 գրամ։

D. S Ցանել վրձինով կոշտ-շանկրի և թաց պզուկների վրայ։

---

5. Rp.

Xeroform 15,0

Կսէրոֆորմ. 15,0 գրամ.
(Դեղին փոշի է, առանց հոտի. մէջը կայ Բիսմուտ, Բրոմ-կարբոլ.

D. S. Ցանել վրձինով նոյնպէս շանկրի և վէրքերի վրայ։

---

6. Rp.

Dermatol 15,0

Դէրմատոլ, 15,0 գրամ.
(Դեղին փոշի է, առանց հոտի. մէջ կայ Բիսմուտ, որ չորացնում է վէրքը և մաքրում, լաւացնում)։

D. S. Նոյն ձևով, ինչպէս 5-րդ դեղատոմսում։

---

7. Rp.

Iodoform 15,0

Իոդոֆորմ 15 գրամ
Վատ հոտ ունի

D. S. Ցանել վրձինով Կոշտ-շանկրի և ժանրակալող վէրքերի վրայ.

---

8. Rp.

Iodoformogen 15,0

Իոդոֆորմոգէն 15 գր. Բռնում է իոդոֆորմի տեղը. 10% իոդոֆորմ կայ մէջը. հոտ չունի։

D. S. Ցանել իոդոֆորմի պէս։

Բացի փոշիներից, գործ է ածւում կոշտ շանկրի և վէրքերի համար հետևեալ սպեղանիները.—

9. Rp.

Ung. Hydrargyri pp. albi ex 0,3—0,5. par 30,0

Սպիտակ սնդիկի սպեղանի.
0,3—0,5 պատրաստել 30 գրամ, Վազելինով.

D. S. Քսել վէրքերի վրայ,

---

10. Rp.

Ung. Xeroformi cum Vaselini flavi parate ex 2,0: 8,0

Քսերոֆորմի սպեղանի.
Պատրաստած Վազելինով 2 գրամ, 8 գրամի հետ այսինքն՝ Կսէրոֆորմ 2 դեղին վազելին 8.

D. S. Քսել վէրքերի վրայ։

---

11. Rr.

Ung. Dermatoli cum Vaselini flavi parate ex 2:8	Դէրմատօլ—2 գրամ Դեղին վազելին—8.

D. S. Նոյն կերպ, ինչպէս 10-րդ դեղատոմսը.

Այսպէս, կոշտ շանկրի համար գործ են ածում և՛ սպեղանի և՛ պլաստիր։ Որի՞ն տալ գերադասութիւն։

Նախ լւանում են և խնամում մնդիկի բաղադրութիւններով. եթէ հնարաւոր է կպցնել մնդիկի պլաստիրը, հիանալի միջոց է. յետոյ փոշի՝ Կալօմէլ։

Եթէ գրգռւում է շանկրը, կարելի է իւղով Կալօմէլ վերցնել. այսինքն Վազելինի հետ խառն։ Եթէ շատ է գրգռւած—միւս փոշիները. օր. Դէրմատօլ, Կսէրօֆօրմ և նրանց սպեղանիները։

Եթէ կոշտ շանկրը առնանդամի կաշւի տակ է ծածկւած, պէտք է սրսկիչով (որը բանեցնում են սուսունակի ժամանակ) սրսկել կաշւի տակ սուլեմայի լուծւածք՝ 1:1000. (տես. դեղատոմս № 1)։ Յետոյ լուցկիի վրայ փաթաթել բամբակ, թաթախել Կալօմէլի սպեղանիով և անցկացնել անդամի մորթի տակ։

Եթէ կոշտ շանկրը միզանցքումն է՝ դնել հետևեալ մոմերը.—

12. Rp.

Calomel Butyri cacao ana 5,0 M. f. d. s. bacil. urethrae. crassitudine 4 mm. longitud. 10 cm.	Կալօմէլ, կակաօի իւղ. հաւասարապէս 5-ական գր. Խառնել, որ դառնայ միզանցքի համար մոմեր, հաստութիւնը 4 միլիմէտր, երկարութիւնը 10 սանտիմ.

ՍԻՖԻԼԻՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

ԲԵՐԱՆԻ ԵՒ ԼՆԴԵՐՔԻ ԽՆԱՄՔԸ

13. Rp.

Kalí Chlorici 100,0	Բերտօլէտեան աղ. 100 գրամ։

D. S. Վերցնել մէկ թէյի գդալ այս աղից և լուծել մի բաժակ եփած ջրի մէջ։ Դրանով ողողել բերա՛նը օրական 10 անգամ։

---

14 Rp.

Tinc. Gallarum — Ratanhae ana 15,0	Տինկտուրա (լուծումն) Գալարում Ռատանիէի. Խառնել հաւասարապէս 15 գրամ։ Սպիրտով շինած գըլտորից և Ռատանիի արմատից։ Հաւաքում է լնդերը։

M. D. S. Վրձինով քսել լնդերին, օրական 1—2 անգամ.

ՔՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ

15 Rp.

Ung. Hydrargyri
Cinerei, 2,0
D. t. dos. in charta
cerata. № 8.

Սնդիկի մոխրագոյն սպեղանի. 2 գրամ, տալ մոմած թղթի մէջ, 8 հատ։

D. S. Գործածել օրական մի ծրար.

---

16 Rp.

Ung. Hydrargyri
Ciner. cum. Resorbini
parate 2,0
D. t. dos. № 8.

Նոյնը ինչ որ № 15 դեղատոմսը, միայն խոզի ճարպի փոխարէն՝ պատրաստած է Րէզօրբինով, որ աւելի հեշտ է քսւում.

D. S. Գործածել օրական մի ծրար.

---

17. Rp.

Ung. Hydrargyri
ciner. cum. Resorbini
parat. $33\frac{1}{3}\%$ Simpl.
in tubul graduata № 1.

Նոյնը ինչ որ № 16 դեղատոմսը. Սնդիկի մոխրագոյն սպեղանի, խողովակի մէջ, հասարակ, որը պարունակում է $33\frac{1}{3}\%$ սնդիկ։ Եթէ Simpl. տեղը գրել Duplex, ուրեմն երկու անգամ ուժեղ կը լինի (50%)։

D S. Հանել խողովակից օրական 2 բաժանմունք—2 գրամ.

Որովհետև մոխրագոյն սնդիկի սպեղանին շատ կեղտոտացնում է, կարելի է վերցնել նաև ուրիշ բաղադրութիւն սնդիկի, որ չը կեղտոտի թէ մարմինը և թէ սպիտակեղէնը։

18. Rp.

Hageen 30,0
d.ad. tubula graduat.
$33\frac{1}{3}\%$ 2,0—4,0

Հ ա գ է է ն

30 գրամ. տալ բաժանմունքները նշանակած խողովակի մէջ $33\frac{1}{3}\%$ տոկոս սընդիկով։ Նշանակել 2 գրամից մինչև 4 գրամ օրական։ Սա սնդիկի սպեղանի է։

D. S. Քսել օրական խողովակի 2—4 բաժանմունք։

ՍՆԴԻԿԸ ՆԵՐՔՈՒՍՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ

19. Rp.

Protojoduret Hydrargyri 0,02
Extr. Opii 0,01
Extr. et pulv. rad. Gentianae g. s. ut. f. pilul. d. t. d. № 30.

Սնդիկը իօդի հետ միացրած. 0,02 գրամ Աֆիոնի հիւթ 0,01 գրամ. Հիւթ և փոշի Գէնցիանի արմատի, վերցնել այնքան որքան հարկաւոր է որ շինուի այս բաղադրութեամբ 30 դեղահատ.

D. S. *Ընդունել 1 դեղահատ օրական 2—3 անգամ, ուտելուց յետյ։*

---

20. Rp.

Protojoduret Hydrargyri 0,02
Extr. Opii 0,01
Lanolini 0,03
Sacchari lactis 00,9
M. f. pilul. d. t. d. № 30.

Նոյն դեղահատները, որոնք նշանակւած են դեղատոմս № 19. միայն խառնած Լանօլինով, որ չը չորանան,

D. S. *Օրական 3 դեղահատ.*

---

21. Rp.

Mercur. sublimati corros.—0,005
(solve in aeth. sulf)
Extr. Opii 0,01
Lanolini 0,03
Sacchari lactis 0,075
M. f. pil. d. t. d. № 30.
Consperg. sacch. lactis.

Սուլէմա 0,005 գրամ, լուծել էթերի մէջ).

Աֆիօնի հիւթ	*0,01*	*գրամի*
Լանօլին	*0,03*	
Կաթէ շաքար	*0,075*	

Խառնել որ դառնայ դեղահատեր. տալ այդպիսից բաղադրութիւնով 30 հատ. վրան ցանել կաթի շաքարի փոշի։

D. S. *Օրական 3—6 դեղահատ*

---

22. Rp.

Sol. Mercur. Sublimati corros—0,1
Aq. destill. 200,0

Սնդիկի լուծւածք

Սուլէմա 0,1 գրամ, ջուր 200 գրամ։

D. S. *Ընդունել ծեղանի փայտէ գդալով, օրական 1—3 անգամ։*

---

23. Rp.

Calomel 0,05
Extr. Opii 0,01
Sacchari albi 0,3
M. f. pulv. d. t. d. № 20.

Սնդիկի փոշի

Կալօմէլ	*0,05*	*Գրամմ.*
Աֆիօնի հիւթ	*0,01*	
Շաքար	*0,3*	

Խառնել որ դառնայ փոշի. տալ այդպիսի բաղադրութիւնով՝ 20 հատ.

D. S. *Օրական 2—3 ծրար*

Վ Ա Ն Ն Ա

24. Փոքրիկ (երեխայի) փայտեայ վաննայի մէջ լիքը ջուր լցնել, մէկ գրամ հասարակ Սուլէմա հալեցնել տաք ջրի մէջ նոյն քանակութեամբ աղի հետ խառնած, և ածել մէջը։

ՍՆԴԻԿԸ ԱՐՏԱՔՈՒՍՏ

Արտաքուստ քսում են զանազան տեղ մոխրագոյն սնդիկի սպեղանի, կամ կպցնում սնդիկի պլաստիր։ Բացի այդ, գործ է ածւում հետևեալը.—

25 Rp. Blaschko. №№ 0, 1, 2, 3, flanel impríg. Beíersdorff.	Սա երկու ֆլանէլի կտոր է սնդիկով. մէկը կախում են կրծքին. միւսը մէջքին. №0 երեխաների համար է. № 1 թոյլ է / № 3 ուժեղ — մեծերի համար.

Ի Օ Դ

Ն Ե Ր Ք Ո Ւ Ս Տ

26. Rp. Sol. Kalii jodati ex 8,0 par. 200,0.	Իոդ-կալի հեղուկ Կալի Իոդատի 8 գրամ, հալել 200 գրամ ջրի մէջ.

D. S. Հացի գդալով օրեկան 3 անգամ կաթի մէջ, ուտելուց յետոյ.

Եթէ գլխացաւ է առաջ գալիս իոդից, լաւ է այն ժամանակ ընդունել՝

27. Rp. Kalii jodati Natrii salicylici Natrii bromati ana 4,0—6,0 Aq. destill. 200,0	Կալի իոդատի, Սալիցիլի նատր, Բրոմի նատր հաւասարապէս 4-ից մինչև 6 գրամ ջուր 200 գրամ.

D. S. հալել, խառնել և տալ հացի գդալով օրական 3 անգամ, ուտելուց յետոյ։

---

28. Rp. Hydrargyri bijodatî rubr. 0,2 Kalii jodati 8,0 Ag. destill 200,0	Իոդի կարմիր սնդիկ 0,2 Կալի իոդատի 8 գրամ, ջուր 200 գրամ.

D. S. Հացի գդալով օրեկան 3 անգամ, ուտելուց յետոյ.

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍԻ ԴԷՊՔԵՐՈՒՄ ԱՐՏԱՔՈՒՍՏ (քսել)

29. Rp. Ung. Hydrargyri ciner. c. resorbini parati 0,5—1,5 d. t. dos. № 8.	Սնդիկի մոխրագոյն սպեղանի Րէզօրբինով պատրաստած 0,5. նայած երեխայի հասակին կարելի է քսել մինչև 1,5 գրամ. այս չափից 8 հատ.

D. S. օրական մի անգամ։

Ն Ե Ր Ք Ո Ւ Ս Տ

30. Rp.

Calomel 0,01—0,03 Sacchari albi 0,3 M. f. pulv. d. t. d. № 24.	*կալոմէլ 0,01 (կարելի է-բարձրացնել քանակը մինչև 0,03.) շաքար 0,3 գրամ· խառնել և դարձնել փոշի, տալ այդ բաղադրութիւնով 24 ծրար:*

D. S. *օրական 3 անգամ կաթի հետ, ուտելուց յետոյ:*

ԽՕԴԻ ՍԻՐՕՊ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՍՆԳԻԿԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ

31. Rp.

Syrup.ferri jodati 50,0	*Երկաթով խօդի սիրոպ, 50 գրամ.*

D. S. ½ *թէյի գդալ օրական 3 անգամ, ուտելուց յետոյ:*

ԱՐՏԱՔՈՒՍՏ

ԹԱՑ ՊԶՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

32. Rp.

Calomel 15,0	*Կալոմէլ, 15 գրամ:*

D. S. *ցանելու համար:*

---

33. Rp.

Calomel 4,0 Talci veneti p. 20,0 M. t. pulv.	*Կալոմէլ խառը Տալկի հետ.* *Կալոմէլ 4 գր. Տալկի փոշի 20 գրամ խառնել. վերջինս նաև եթէ սիֆիլիսոտի ոտ-ները քրտնում են — և թաց պզուկների վրայ ցանել:*

D. S. *ցանելու համար:*

ՆՈՐ ԴԵՂ. ՍԻՖԻԼԻՍԻ ԴԷՄ

«ԷՀՐԼԻԽ-ՀԱՏԱ № 606»

Յունիսի 22-ին 1910 թւի՝ յայտնի եղաւ հռչակաւոր Էհրլիխի նոր միջոցը «Էհրլիխ Հատա սրսկման դեղը № 606 (Ehrlich Hata präparat 606)»։ Դա մի խառնուրդ է վերոյիշեալ Ատօքսիլից և Անելինի գոյնի դեղից (вещества анилиновыхъ красокъ)։

(Atoxyl+Parafuxin).

Ինչպէս մենք յիշել ենք, Ատօկսիլը, մկնդեղի այդ որոշ տեսակ բաղադրութիւնը, ընդունուած էր իբրև յատուկ դեղ սիֆիլիսի դէմ, բայց թողեցին որովհետև շատ կողմնակի վատ ազդեցութիւններ ունէր. „ունքը շինում էր, բայց աչքը քանդում“։ Էհրլիխը նկատեց, որ Անելինի գոյները շուտ և ուժեղ կերպով սպանում են մանրէներին. նրա մէջ միտք ծագեց խառնել Ատօկսիլը Անելինի գոյնի հետ։ Այդ նա պատուիրեց անել իւր օգնական ճապոնացի Հատա'յին (Hata), որը պատրաստեց նրա դեղը։ Սրսկեցին սիֆիլիսից վարակուած կենդանիներին և զարմանքը մեծ եղաւ, երբ տեսան, որ 24—48 ժամում ոչնչացան սիֆիլիսի բոլոր մանրէները, սպիրոխէտները, իսկ կենդանին առողջացաւ, կարծես ոչինչ չէր ունեցել։

Էհրլիխի այդ փորձերը այժմ անց են կացրել մարդկանց վրայ, որոնք վարակուած են սիֆիլիսով զանազան շրջանների։ Նոյնպէս մեծ յաջողութեամբ

մի քանի օրւայ մէջ սիֆիլիտաները ազատւում են սպիրոխէտներից։

Նրա անմիջական և շուտափոյթ ազդեցութիւնը կասկածի չի ենթարկւում այժմ. բայց թէ որքան նա պաշտպանում է կրկնութիւնից և որքան տևողական ազդեցութիւն ունի այդ նոր ձևի բժշկութիւնը—դա դեռ վերջնականապէս որոշւած չէ։

Մէկ բան կարելի է համարեա հաստատ ասել այդ նոր դեղի մասին, որ չեն տեսել, նկատել այն կողմնակի վատ ազդեցութիւնը, որը յատուկ էր Ատօքսիլին։

Յոյս կայ, որ մէկ-երկու տարւայ ընթացքում սիֆիլիսի դէմ եղած այս նոր դեղը կը հաստատի և մարդկութեանը կազատէ սիֆիլիսի չարիքներից։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես		տող	Ինչ է տպւած	Պէտք է լինի
Երես 2	ներքևից	տող 3 —	միմեանցից բառը աւելորդ է	
» 8	վերևից	» 1 —	պրֆէսօր	—պրօֆեսօր
»	»	» 8 —	չանցած	—անցած
» 17	»	» 4 —	1—2 օր	—1—4 օր
» 22	»	» 6 —	կարող	—կարող են
» 40	ներքևից	» 2 —	քիթը	—ականջը
» 44	վերևից	» 7 —	քոսութիւն	—փոսութիւն
» 115	ներքևից	» 5 —	3 ամսում	—2 և 3 ամիսներում.
» »	»	» 6 —	1 և 2 ամիսն.	—1 ամսում
» 180	»	» 6 —	precip.	—praecip.
» »	»	» 8 —	D	—G
» »	»	» 12 —	Miste	—Misce
» 183	9-րդ	դեղատոմսը պատրաստել Վազելինով		
» 185	14-րդ	Ratanhae—Tinc. Ratanhae.		

ՀՀ Ազգային գրադարան
NL0271732

6279